

ՎԻԼԵՒԱՄ ԶԵԿՍՊԻՐԻ


ԼԻՐ ԹԱԳԱԽՈՐ

ԱՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՀԻՆԴ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ:




Ձարգմանեց

ԱՅ. ՄԱԼԻԱՍԵԱՆՑ



Ա. ԳԵՏԵՐԲԱԲՐԻ
ՏՊԵՐԵՆ Ֆ. Կ. ՍԿՈՐՈԽՈՎՈՎԸ
1888



ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Վռաջին անգամ հրատարակելով Այլլիամ Շեկսպիրի «Լիր թագաւոր» (King Lear) ողբերդութեան հայերէն թարգմանութիւնը՝ անհրաժեշտ եմ համարում մի քանի խօսք ասել նորա արտաքին կողմերի մասին, իբրև բացատրութիւն այն լեզուային նոր կիրառութիւններին, որոց կհանդիպի ընթերցողը սորա մէջ:

Ժարգմանութեանս մէջ ես հետևել եմ գլխաւորապէս Հեյնրիխ Վոսսի (Heinrich Voss) գերմաներէն չափաւոր թարգմանութեան, որ բնագրին, այսինքն անդիերէնին բոլորովին զուգընթաց է, վասն զի տող առ տող և մեծ մասամբ նաև բառ առ բառ թարգմանութիւն է անգլիերէնից: Կմրմաներէնի և անգլիերէնի մերձաւոր նմանութեան պատճառով շատ տեղ ունի նաև բնագրի բարակ իմաստները, հանձարաւոր խօսքերն ու բառախաղները. այնպէս որ ամենայն հաւատարմութեան արժան է նա, և բոլոր թարգմանութիւններին մէջ ամենամօտն է բնագրին, բացի մի քանի տեղերից, հարկաւ, ուր ոտանաւորի յանգերին պատճառով թարգմանիչն ստիպուած է եղել բնագրից փոքր ինչ շեղիւ, պահպանելով միենոյն ժամանակ տողերի կարգն և իմաստի ճշտութիւնը:

Վրյուն արժանաւորութիւնն ունի նաև Գրանսուա-Այլիկոոր Շերոյի (François-Victor Hugo) գաղղիերէն թարգմանութիւնը, այս տարբերութեամբ միայն, որ արձակ գրուածք է, բայց նորա մէջ բնագրի տողերը միմեանցից բաժանուած են գծիկներով: Այս կերպով չափաւոր գրութեան կապանքներից արձակուած լինելով և միենոյն ժամանակ բնագրի տողերը պահպանելով՝ այս թարգմանութիւնը կրկնակի յարգ ունի մէկ ուրիշ թարգմանչի համար, որ կարող է այնտեղ գտնել բնագրի թէ՛ արտաքին ձևի և թէ ներքին իմաստի անվիճելի հարազատ փոխադրութիւնը: Աչքի առաջ ունեցել եմ նաև Լը Տուրնե (Le Tourneur) և Գրուժինինի

*

(Дружининъ) գաղղիերէն և ոսերէն թարգմանութիւնները, որոց առաջինն արձակ է, իսկ երկրորդը չափաւոր և մեծ մասամբ ճիշտ չիւգոյի գաղղիերէն թարգմանութեան հետ։ Ճարկ եղած ժամանակ երբեմն դիմել եմ նաև բնագրին՝ համեմատութեան համար։ Այս կերպով իմ թարգմանութեանս ճշտութիւնն և կարելի հաւատարմութիւնն երաշխաւորուած են։

«Լիր թագաւոր»ի Կախին նիւթը քաղել եմ Գ. Ճիւգոյի ներածութիւնից (թա. հատոր), իսկ ծանօթութիւնների մեծ մասը Դրուժինինից և նոյն Գ. Ճիւգոյից։

Ճյերէն թարգմանութեանս մէջ մի երկու քերականական նորութիւններ եմ մտցրել, որոց վերայ գարձնում եմ մեր մամուլի ուշաղրութիւնն։ Ես առանց վարանումի և մեծ ուրախութեամբ կհաւանէի քննադատութեան հետ, եթէ նա ապացուցանէր իմ շարժառիթների անհիմն լինելը, կամ ցոյց տար միջոցներ, որոնցով աւելի դիւրաւ կարելի լինէր համեմ իմ նախադրեալ նպատակին, այն է, թարգմանական գրուածքի լեզուին հարազատութեան և իմաստի պարզութեանն և անշփոթութեանը։ Ես իմ կողմից անտեղի չեմ համարում համառօտապէս բացատրել թէ այդ նորութիւնները և թէ նոցա գործածելուս շարժառիթները։

Ահա նոքա.

Ա. Աս, դա, նա ցուցական գերանունների իգական սեռի ձևերն—սէ, դէ, նէ.

Բ. Լ' (լիւն փշիկով).

Գ. Աս, դա, նա գերանունների տրական և հայցական հոլովերն,—Տր. սորան, դորան, Ճյց. սրան, դրան, և

Դ. Կարելի միօրինակութիւն այն բառերի հոլովմունքին մէջ, որոնք վերջին վանկում անին ու և չ ձայնաւորներն։

Ե. Վիտեմ; որ շատերը պիտի վրդովուին, տեսնելով իմ թարգմանութեանս մէջ գործածուած սէ, դէ, նէ,—ցուցական գերանունների իգական սեռը, միմիայն այս պատճառով, որ ոսահայերիս մէջ նորութիւն է այս գործածութիւնն։ Ուրիշ որ և է պատճառ չեն կարող ունենալ նոքա, որոնք դէմեն այս նորութեան, վասն զի վերսիշեալ ձևերի թէ՝ ծագումն և թէ նպատակայարմարութիւնն օրինաւոր են, և ես նոցա կիրառութիւնը նորոգել եմ՝ բաւական խորհրդածած լինելով նոցա վերայ թեր և դէմ։ Ահաւասիկ իմ շարժառիթները։

Հայերէն լեզուն անտարակոյս ունեցել է նախամատենագրական գարերում վերսիշեալ դերանունների իգականներն, (այս կամ ուրիշ ձևի տակ—հոգ չէ). վասն զի պատկանելով հնդիկեւրոպական մեծ ձիւղին թէ՛ բառական և թէ՛ քերականական կազմութեամբ՝ հիմնապէս պէտք է նմանութիւն ունենար նորա հետ: Անչ էլ որ ժամանակով ասէ համեմատական լեզուագիտութիւնն հայերէնի բռնած տեղի մասին հնդիկեւրոպական լեզուների շարքում, թէ՛ ապացուցանէ նորա պատկանիլը սլաւո-լիթուայեան, թէ՛ իրանական լեզուախմբին^{*)} նոյն հետեւութիւնը գարձեալ կմնայ, վասն զի ինչպէս սլաւո-լիթուայեան նոյնպէս և իրանական լեզուներն արականի, իգականի, (ոմանք նաև չէզոքի) տարրեր վերջաւորութիւններն ունին, և եթէ ոմանց մէջ նոքա պակասում են՝ այս պէտք է վերագրել նոյնպէս մուացութեան, ինչպէս և հայերէնին մէջ: Ո՞եր Խնդրից գուրս է, թէ ի՞նչպէս է մուացուել մեր մէջ այս իգական գերանունների գործածութիւնն, մենք այսուեղ միայն մատնացոյց ենք անում հայերէնին Խիստ մօտ և արենակից մի ուրիշ լեզուի, նոր պարսկերէնին վերայ, որ կորցրել է նոյնպէս գոյականների և գերանունների սեռերը միանգամայն, մինչդեռ նորա նախատիպները (զանդիկ, պահլաւիկ և Բէհիստանի արձանագրութիւնների լեզուն) պահել են երկուքն էլ:—Ով որ փոքր ինչ ուշագիր լինի, թէ որչափ բազմաթիւ քերականական ձևեր կորցրել է հայերէն լեզուն իւր նախամատենագրական բազմագրեան գործածութեան մէջ՝ նա չի զարմանար, որ սա, դա, նաև ևս կորցրած լինին իրանց իգականի վերջաւորութիւններն:

Այս գերանունների իգականները գործածել են Ե. գարում Խորենացին և Դաւիթ անյաղթը, որոնք իբրև դասական հեղեղնակներ ունին հեղինակութիւն և կարող են մեղ գիւրացնել նոյնի գործածութիւնը: Այս չեմ կարող համաձայնիլ բոլորովին մեր մէջ ընդհանուր գարձած այն կարծիքին, թէ նոքա այս արել են կոյր յունամոլութեամբ միայն: Այս ենթագրութիւնն ի հարկէ պատիւ չէ բերում այն հեղինակներին, որոնք, մեր մատենագրութեան աստղերը, իբր թէ չեն ունեցել ոչինչ հասկացողութիւն

*) 1882 թուից յետոյ, եթե այս յառաջաբանը գրուած է թարգմանութիւնից յետոյ և այժմ ապօռում է անփոփոխ լեզուագիտութիւնն յայտնից որոշ կարծիք այս խնդրի մասին:

լեզուի օրէնքներին վերայ և ոչինչ ճաշակ, այլ եղել են կոյր հետեղներ յոյնին առանց հարկի: Աւելի հաւանական է, թէ նոռ քա հարկադրուած են եղել գործածել այս ձևերն: Ա ասն զե երբ նոքա, թողնելով հայկական և ընդհանրապէս արևելեան լեզուների պարզ ոճն և համառօտ նախագասութիւններն, մտան հունաստան, վարժուեցան յունարէնի ձևաւոր ու զարդարուն ու ձին և երկար պարբերութիւններին, երբ իրանք էլ սկսեցին նոյն լեզուով խօսիլ և ճառել յոյների ատեաններում, վերջապէս երբ որ ձեռնարկեցին յոյն հանձարի արտադրութիւններն հայերէնի վերածելով՝ այն ժամանակ զգացին, թէ պակաս է հայերէնի մէջ ի միջի պյուց մի բան ևս, սեռը, և այս պակասութիւնը կարելի եղածին չափ գարմանելու համար վերանորոգեցին սա, դա, նա գերանունների իգական սեռերի գործածութիւնն. վերանորոգեցին ասում եմ, վասն զի (ինչպէս կարծում է Աւսուցչ Ք. Պատկանեան) նոքա հաւանօրէն երբեմն լսած պէտք է լինէին ժողովրդին մէջ նոյնի գործածութիւնը, որ, ինչպէս տեսանք՝ հին ժամանակ հայերէնի մէջ անշուշտ գոյութիւն ունէր: — « յոյն գերանունների իգականները գործածել են նաև մեր նոր գրագէտներից շատերը *) Տաճկահայաստանում, և սոցա ճաշակին և գրելու տաղանդին վերայ ի հարկէ ոչ ոք չի վիճեր:

Եշուական լեզուների մեծ մասին մէջ թէ՝ գոյականները և թէ գերանունները սեռ ունին. եթէ առաջինները մասամբ խոչընդուռ են լեզուի դիւրութեան՝ սորա փոխանակ նոքա և մանաւանդ գերանունները իրանց սեռերով շատ նպաստում են նորա պարզութեան: Կարգացէք ժամանակակից եւրոպացի հեղինակների վիպասանութիւնները և դուք իսկոյն կհամաձայնիք ասածիս հետ, թէ առանց գերանունների սեռերին՝ խիստ դժուարահասկանալի կլինէր լեզուն:

Դայց վերոյիշեալ երեք կէտերը բաւական չէին ինձ համոզելու, որ սա, դա, նա-ի իգական սեռերը գործածեմ: « Առքա ինձ համար միայն օրինաւոր գարձրին և իրանց հեղինակութեամբ դիւրացրին նոցա գործածութիւնը. — իսկ բուն շարժառիթը՝ կարենութիւնն է այս իգական գերանունների: Եթէ մենք ցանկանում ենք մեր լեզուի կատարելութեանը, եթէ ուզում ենք, որ

*) Հեքիմեան, Պէտէկթաշլեան, Խորէն արքեպիսկոպոս Գալֆայեան, Խոյլու:

մեր լեզուն այնչափ կատարելագործուած և հարուստ լինի բառերով, ոճերով ու դարձուածներով, որ առանց փոքր դժուարութեան կարողանայինք որ և է շարադրութիւն դիւրաւ հայերէն թարգմանել, եթէ վերջապէս կամենում ենք ազատել հայերէնը արեւելեան լեզուների դանդաղ ու թմրեցնող ոճից և հետզհետէ մօտեցնել եւրոպական կենդանի լեզուներին՝ —պէտք է լրացնենք մեր լեզուն, պէտք է աշխատինք նրան դիւրաթեք, ձկուն դարձնել պէտք է ջանանք մանաւանդ, որ հայերէն լեզուն չունենայ այնպիսի քերականական և բառական թերութիւններ, որոց պատճառով մի գրուածք անհասկանալի և մուժ լինի: Չէ կարելի ուրանալ որ բառերի պակասորդը լրացնելու մեծ ջանք կայ մեր մէջ. իսկ քերականական թերութիւններին վերայ այնչափ չէ մօտածվում: Աարո՞ղ ենք մենք հայերէնի ներկայ դրութեան մէջ եւրոպական որ և է լեզուից մի chef-d'œuvre թարգմանել նոյնպէս վայելուչ ոճով, պարզ լեզուով, բառերի բարակ նշանակութիւններով, ինչպէս բնագիրն է, և միւնոյն ժամանակ հաւատարիմ մնալ բնագրին: Վասնաւորում եմ իսօքս «Լիր թագաւորի» մասին. ի՞նչ պէտք է անէ հայ թարգմանին, երբ, Լիրի հարցմունքին՝ թէ ո՞վ յանդեցաւ այնչափ արհամարհել իւր սուրհանդանն, որ նրան շղթայեց՝ լինտ պատասխանում է.

«Sie und Er,

Eu'r Sohn und Eure Tochter» *).

Դոնէ ես հարկ համարեցի թարգմանել՝

«Լու և նկ, արքայ, Ձեր ուստրն ու գուստը»:

Լամ, Երբ, Լիր խենթացած ժամանակ իւր դստրերին դատաստանի կանչելիս՝ Լոդգար ասում է.

«Sieh, wie er da steht und mich anstarrt!—

Liebelst du vor Gericht, schöne Dame?**)»

Ես ստիպուած էի նե-ի գործածութիւնը մտցնել, որպէս զի վերոյիշեալ տողերը թարգմանելիս՝

«Լայեցէք, ի՞նչպէս

«Լու այդտեղ կանգնել վերաս է յառում

Ա առվառ աչքերը:—Աիրունիկ աինին,

Դատիդ ատե՞նն էլ սիրութում ես դու՝

*) Բ. արարուած, Դ. տեսարան:

**) Գ. արարուած, Զ. տեսարան.

նառն չհասկացուի գործածուած այն տիկին բառին փոխանակ. այլ ընթերցողը կարողանայ մակաբերել, թէ Լոդար նա բառով ուրիշն է ակնարիում, այսինքն դեմքն: — Կարող էր կարգացողն առանց մեծ գժուարութեան հասկանալ Լոդմունդի մենախօսութիւնն, (Ուրի և Հաւատարմութեան երդում տըւի ես, ևլն. *), եթէ նա և ների գործածութիւնը մտցուած չլինէր, որոց օդութեամբ շատ դիւրին և պարզ է այն հասկանալ:

Այս տեսակ օրինակները բազմաթիւ են, իսկ եւրոպական մատենագրութեան մեջ՝ անթիւ, որոց երկիմաստութիւնից եթէ մենք կամենում ենք խոյս տալ՝ պէտք է գործածենք վերոյիշեալ գերանուների իդական սեռերն:

Ա. Լ՛ի (լիւն փշիկով) ծագումի, գործածութեան և հնչիւնի չատագովութիւնն ընթերցողը կարող է գտնել Բագրատունու Դպէտս զարգացելոց Վերականութեան վերջում, առանձին ընդարձակ ձառին մեջ. (նորա հերքումը, որ գրել է Գարբիկէլ արքեպիսկոպոս Այլազեան՝ տպուած է Ունետիկում բայց հրատարակուած չէ). ուստի ես անօգուտ եմհամարում կրկնելայն՝ ինչ որ արդէն պյնչափ պերճաբանօրէն ասել է մեր երկելի հայագէտն, միայն հարկ եմ համարում իմ կողմից աւելցնել թէ նորա (Բագրատունու) ձառն աւելի թէօրետիկական և լեզուագիտական նշանակութիւն և հիմունի. իսկ իմ գործածութիւնն՝ աւելի գործնական: Աս լ՛ը գործածել եմ՝ ուր որ հարկ է եղել ճշտիւ տառադարձնել եւրոպացիների (կակուղ) 1-ի հնչիւնը, (ոսերէն Ֆ). բայց ուշագրութիւն չեմ գարձնում այն բառերին վերայ, որոց գրութիւնն ու հնչիւնը արդէն միանգամ ընդունուած են, (օրինակ՝ Այզմոս, Պուկաս, Ապողոն, ալէլուեայ, ևլն.) և որոնք ես գրում եմ առանց փշիկի: Առնենք երեք բառ, ալբան, ալբանի և ալբան. սոցա հայերէն ճիշտ տառադարձութիւններն են՝ ալբանի, այլբանի և ալ'բանի. երկրորդ և երրորդ բառերը թէ՛ ոսերէնում և թէ հայերէնում տարբեր հնչիւններ ունին: «Եղնակս Gloster» հայերէն Գլոսդէր է, և ոչ Գլոսդէր. sol, la՝ հայերէն սօլ', լ'ա են, և ոչ սօլ, լա, ևլն: Ծոյս ունիմ, թէ այս գործածութեան նպատակայարմարութիւնն ու ծագումը (Բագրատունու ձառը կարգալուց յետոյ) ըն-

*). Ե. արարուած, Ա. տեսաբան:

թերցողին համար շատ շօշափելի և ակներե են, ուստի այս մասին երկարելն աւելորդ եմ համարում:

Գ. Աս, գա, նա ցուցական գերանունների եղակիի հետագայ հոլովմունքը—Ա. սորա, գորա. Տ. սորան, գորան. ։ ոլրան, գրան. Տ. և Գ. սորանից, գորանով՝ բոլորովին կամպական է իմ կողմից: Որովհետեւ այս գերանունների հոլովական արմատներն են միանգամայն առ և առ՝ ես յարմար գատեցի, տարբերութեան համար, հայցական հոլովում գործածել առ արմատը, իսկ միւս հոլովներում՝ առ: Ոոցա իդականներն ի հարկէ այս տարբերութիւնը չեն կարող ունենալ, այլ հոլովվում են՝ սէ, գէրա, նէրան, սէրան, գէրանից, նէրանով, և յոգնակին՝ սէրանք, գէրանց, նէրանցից...:

Դ. Դալով վերջապէս վերջի վանկում ու և չ ձայնաւորներն ունեցող բառերի հոլովմունքին, որոնք առհասարակ թեք հոլովներում կորցնում են այդ ձայնաւորներն՝ ես այս կանոնն միայն ընդհանրացրել եմ, կարելի եղածին չափ, (ոչ առանց բացառութեան), այնպէս որ գործածել եմ կին, կնի. զուստր, դստրի, տուն, տնի, ելն, ինչպէս գործածում ենք սիրտ, սրտի, քուն, քնի: Դակ այն երկավանկ և բազմավանկ բառերն, որոնք չ ձայնաւորին վերայ են վերջանում՝ հոլովվում են, ինչպէս ընդհանրապէս՝ որդի, որդու, որդուց, և այլն:

Ա. Ա.

ԼԻՐ ԹԱԳԱԽՈՐԻ

ՆԱԽԿԻՆ ՆԻՒԹԸԸ

ԺԲ. գարի սկզբներում (Հքսֆորդի աւագ-սարկաւագն Ա ալ-
տէր Մէպս, մի գիտնական և հին ժամանակագրութիւնների շատ
հետաքրքիր եկեղեցական, երբ ճանապարհորդութիւններ էր ա-
նում Անդղիայի այլ և այլ կողմերը, երկրի պատմութեանը վե-
րաբերեալ նոր նիւթեր գտնելու նպատակով՝ Տրետոնի լեզուով
մի ձեռագիր գրութիւն գտաւ, որի մէջ աւանդվում էին առաս-
պելական պատմութիւններ անդղիական շատ թագաւորների մա-
սին, Տրոյիայի առնուելուց մինչև մեր թուականի Է՛ գարը: Այս
ձեռագիրն իւր նիւթի նորութեան և հետաքրքրութեան պատ-
ճառով շուտով լատիներէն թարգմանուեցաւ Ա ալ'տէրի մի բա-
րեկամին ձեռքով և նորա խնդրելով, և յետոյ նորմանգական
պալատի խրախուսելով, (որ այս գրքին մէջ տեսնում էր իւր ան-
հերքելի ծագումն տրոյացիներից) փոխադրուեցաւ նաև գաղղիե-
րէնի ոտանաւորով, և այս կերպով ժողովրդականութիւն գտաւ:
Այս հաստ գրքին մէջ, որ կոչվում է Տրուդոսի վիպասանու-
թիւն (Roman de Brut) պատմվում է իմիջի այլոց և հետեւեալը.

«Ել'ագուգի որդին Լիր (Leir) թագաւորը երեք գուսար
ունէր, Վորնորիլ', Ուագաւ և Կորդէյլ'. վաթսուն տարի թագա-
ւորելուց յետոյ մի օր նէրանց կանչեց և հարցրեց, թէ որը նէ-
րանցից նրան աւելի է սիրում:

«Վորնորիլ' ասաց, թէ նրան սիրում է իւր կեանքից աւե-
լի. և Լիր նէրան տուեց իւր թագաւորութեան երրորդ մասն և
պսակեց Ակովախայի (որ յառաջ կոչվում էր Ալբանի) դքսին
Ամալ'գամիսին հետ:

«Երկրորդը, Ուագաւ, ասաց, թէ իւր դէպի հայրն ունե-
ցած սէրն անսահման է. և Լիր նէրան տուեց իւր թագաւորու-
թեան երրորդ մասը և պսակեց Վորնվալ'ի դքսին Հէննինի հետ:

«Երրորդը, Կորդէյլ՝, ասաց, թէ նրան սիրում է, ինչպէս որ հարկ է, որ դուստրը սիրէ իւր ծնողներին, նէ նրան սիրում է, որչափ որ արժան է, և Լիր բարկանալով այս պատասխանին վերայ՝ նէրան անիծեց և ժառանգութիւնից զրկեց:

«Իայց Գրաղղիայի Վգանիպպուս թագաւորը լսած լինելով Կորդէյլի գեղեցկութեան մասին՝ գալիս է Լիրից նէրա ձեռքը խնդրելու. Լիր թէպէտ սկզբից չէ կամենում՝ բայց վերջապէս համաձայնում է Վգանիպպուսի խնդրին, որ և Կորդէյլի հետ դառնում է Գրաղղիա:

«Լիր, որ ամրողը թագաւորութիւնը բաժանել էր երկու աւագ գսարերին մէջ՝ պայմանի համաձայն՝ պէտք է նէրանց մօտ ապրէր փոխ առ փոխ, յիսուն ասպետներով: Ոկիզը գործը խաղաղ էր գոնում և Վլրանի գուբուր նրան լաւ էր պահում. բայց Գորնորիլ՝ խիստ ագահ լինելով՝ համողեց իւր մարդին, թէ թագաւորի յիսուն ասպետները շատ են և թէ պէտք է նոցանից քսանը պակսեցնել, որ և կատարեցին: Լիր երբ տեսաւ նոցայս արածը՝ շատ բարկացաւ և նոցա թողնելով գնաց իւր միւս փեսային, Գորնվալի դքսին մօտ: Ուագաւ իւր քոյրից աւելի խիստ լինելով՝ ասպետների թիւն իջեցնում է երեսունից մինչեւ տասն և յետոյ մինչև հինգ. Թագաւորը նորից դառնում է Գորնորիլի մօտ, բայց սէ երկնքի վերայ երդվում է, թէ նրան միւս պյն մէկ ասպետով կընդունէ, ոչ աւելի:

«Վյն ժամանակ Լիր միտքն է բերում իւր կորցրած, մեծութիւնն, և տիրում է. յիշում է, թէ որչափ անիրաւ դտնուեցաւ գէպի Կորդէյլը, յիշում է նոյնպէս նէրա խօսքը, թէ նէ նրան սիրում է՝ ինչպէս պէտք է սիրել ծնողներին. ուստի գիւմում է Գրաղղիա, իւր դստրի օդնութեանն:

«Կորդէյլ՝ երբ հօր կողմից եկած պատգամաւորից լսում է նորա կրած անպատուութիւններն՝ իսկոյն թագաւորական զգեստ և քառասուն շքադիր ասպետ յուղարկում է նորան, որոց հետ միասին Լիր թագաւորավայել պատուով մտնում է դաղղիական՝ արքունիքն: «Կորա կրտսեր փեսան ընդունում է նրան մեծ սիրով, տալիս է նորան մի բանակ, որի օգնութեամբ Լիր յաղթում է միւս երկու փեսաներին և թագաւորում է մինչև իւր մահը:

«Կորան յաջորդում է Կորդէյլ՝, որի թագաւորութեան հին-

գերողդ տարին՝ քեռորդիներն ապստամբում են նէրա դէմ և կա-
լանաւորում են: Կորդէյլ՝ մեռնում է բանդին մէջ»:

Փիլիպպոս Աիդնէյի «Ըրկադիա» վիալասանութեան մէջ յի-
շատակվում է հետևեալը.

«Դաղատիայի թագաւորութեան մէջ մի սաստիկ ցուրտ օր
իշխանները մրրիկից պատսպարուելու համար մի անձաւի մէջ մը-
տան: Յանկարծ նոքա լսեցին խօսակցութիւն դրսում երկու մար-
դի մէջ: Երբ անձաւից գուրս եկան՝ տեսան նոքա մի երիտա-
սարդ, որ առաջնորդում էր աչքերը փորուած մի ծերունու: Տեշ-
պէտ երկուքն էլ շատ վշտալի դէմք և պատառոտուն հադուստ
ունէին՝ բայց կար նոցա մէջ ազնուականութեան մի նշան:

«Խշխաններն հարցըին, թէ ով են նոքա, և երիտասարդը
պատմեց, թէ այն ծերունին իւր հայլն է և երբեմն Պափղադո-
նիայի թագաւորն էր, բայց նորա չար որդին նրան գահից զրկեց
և աչքերը կուրացրեց, որից ծերունին այն աստիճան յուսահա-
տութեան մէջ ընկաւ՝ որ իրանից ինդրեց նրան մի ժայռի դլուխ
բարձրացնել, որպէս զի այնտեղից վար նետուի և սպանուի, բայց
թէ ինքը չհազանդեցաւ իւր հօր այս կամքին: Յետոյ ինդրեց
երիտասարդը, որ գթան իւր հօր վերայ և պատսպարեն նրան:

«Օներունին մէջ մտնելով՝ պատմում է, թէ իւր որդու,
Լէոնատուսի այս պատմածն ճշմարիտ է, բայց շատ թերի, վասն
զի նա չկամեցաւ իւր հօր թեթևամտութիւնն և իւր առաքինու-
թիւնը պատմել: Պատմեց ինքն իւր կողմից, թէ այն չար որդին
իւր ապօրէն զաւակն է, որ Լէոնատուսի վերայ նախանձելով՝
սկսեց սրան ատել, նախատել և ամբաստանել վերան, մինչև այն
աստիճան՝ որ ինքը թագաւորն իւր ծառաներին հրամայեց՝ նրան
անտառը տանել և սպանել: Բայց ծառաները գթալով Լէոնա-
տուսի վերան՝ աղատում են, և նա իբրև զինուոր ապրելով՝ իւր
քաջութիւնների պատճառով փոքր ինչ բարձր աստիճանի է հաս-
նում և լսում է, թէ ի՞նչ է անցնում իւր հօր գլխից:— Իսկ ա-
պօրէն որդին Պլէկսիրտուս, գրաւելով հօրը բոլոր հաւատարմու-
թիւնն՝ իւր ձեռքն է առնում նորա բոլոր իշխանութիւնը, զը-
կում է նրան թագաւորութիւնից, կուրացնում է աչքերն և ար-
ձակում, մահ սպառնալով այն մարդին, որ համարձակի նորոն
առաջնորդել: իսկ ինքը նորա տեղ թագաւոր է նստում: Լէո-

Նատուս լսելով հօր թշուառութիւնը՝ դալիս գտնում է նրան և
սկսում է առաջնորդել։ Մի անգամ նա կամցաւ ժայռից վար
նետուիլ և մեռնիլ, որպէս զի թէ իրան փրկէ և թէ իւր որ-
դուն, բայց Լէոնատուս նրան չժողեց։

«||ինչեռ թագաւորը պատմում էր այս բաներն՝ նորա աւ պօքէն որդին ՊԼԵԿսիրտուս եկաւ հասաւ նոյն տեղը քառասուն ձիւաւորներով՝ որպէս զի սպաննէ իւր հօր և եղբօր և անձամբ հանդիսատես լինի: Բայց ծերունուն և Լէոնատուսին պաշտպանեցին այնտեղ գտնուող իշխաններն և Պոնտոսի թագաւորն, որ երազ տեսած լինելով՝ թէ վտանգ կայ այն պահուն՝ հարիւր ձիւաւորով օգնութեան էր եկել: «Օերունու կողմը յաղթումէ. ՊԼԵԿսիրտուս փախչում ամրանում է մի ապահով տեղում: Խսկ իշխանները ծերունուն տանում են նորա մայրաքաղաքն, ուրտեղ նա թագը գնումէ իւր Լէոնատուսի գլուխին և խսկոյն մեռնում է, չկարողանալով գիմանալ իւր հոգեկան յուղմունքներին: Լէոնատուս գնումէ է պաշարել իւր եղբօր ՊԼԵԿսիրտուսին, որ տեսնելով թէ քաղցածութիւնից պիտի մեռնի՝ անձնատուր է լինում եղբօրն և խոնարհութիւն է կեղծում: Լէոնատուս ներում է նորան և երկու եղբայրներն հաշտվում են»:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐՆ

Լիր, Ծրիտանիայի թագաւորը:
ԳԱՂՂԻԱՅԻ ԹԱԳԱԿԻՈՐԸ:
ԲՈՒՐԳՈՆԻ ԴՈՒՔՍԸ:
ԿՈՐՆՎԱԼԻ ԴՈՒՔՍԸ:
ԱԼ'ԲԱՆԻ ԴՈՒՔՍԸ:
ԿԵՆՏԻ ԿՈՍՍԸ:
ԳԼՈՍՏԵՐԻ ԿՈՍՍԸ:
ԷՇԳԱՐ, ԳՆՇՈՍՏԵՐԻ հարազատ
որդին:
ԷՇՄՈՒԽԴ, ԳՆՇՈՍՏԵՐԻ ապօրինի
որդին:
ԿՈՒՐԱՆ, պալատական:
ՄԴՇՈՒԽՆԻ, ԳՆՇՈՍՏԵՐԻ ա-
ւատառուն.
ՄԴՇՈՒԽՆԻ:

ԽԵՂԿԱՏԱԿԸ Լիր թագաւորի:
ՈՍՎԱԼԴ, ԳՆՇԿՐԻԼԻ տան սենե-
կապետը:
ՄԴՇՈՒԽՆԻ, ԼՇԴՄՈՒՆԴԻ հրամա-
նին տակ:
ՄԴՇԿ ԱՍՊԵՏ, Կորդելիային յա-
րած:
ՄԴՇՈՒԽՆԵՏԻԿ:
ԳՈՆԵՐԻԼ՝ }
ՅՈՒԳԱՆ } Լիրի գստրերն:
ԿՈՐԴԵԼԻԱ:
Լիրին ուղեկցող ԱՍՊԵՏՆԵՐ,
ՍՊԱՆԵՐ, ՍՈՒՐՃԱՆԴԱԿՆԵՐ,
ԶԻՆՈՒՈՐՆԵՐ:

ԼԻՐ ԹԱԳԱՒՈՐ

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՆՔաղիր զահլիճ Լիր թագաւորի պալատում:

Կերս են մասնում կինք, Գևոսիք և Երթոննի:

ԿԱՅԱՑ

Ես կարծում էի, թէ թագաւորն աւելի համակրում է
Վլքանի դքսին, քան թէ Կորնվալ'ին:

ԳԼՈՒԽԻՔ

Մեզ էլ այդպէս էր երևում: բայց այսօր, երբ նա իւր
թագաւորութիւնը բաժանում է ամենելին չենկատվում, թէ
որին է նա գերագասում: վասն զի բաժիններն այնպէս հա-
ւասար են՝ որ (մարդ որչունի էլ քննէ) չեն կարող անել թէ
այս մեկը միւսից լաւ է:

ԿԱՅԱՑ

Առ ձեր որդին չե՞ն, միշտ:

ԳԼՈՒԽԻՔ

Նորու կրթութեան մասին ես եմ հոգացել աէր: Եյս
բանը խոստովանելիս ես այնչափ յաճախ կարմրել եմ՝ որ
այժմ արդէն սովորական է եղել ինձ:

ԿԱՅԱՑ

Չեմ կարող ձեզ հասկանալ . . .

ԳԼՈՒԽԸ

Բայց սորա մայրն և ես միմեանց շատ լաւ էինք հասկանում: և մեր այս համաձայնութիւնից նէրան վիճակուեցաւ մի որդի ունենալ օրօրոցում յառաջ՝ քան թէ մի ամսուսին ունենար իւր անկողնում: “Նշմարում էք այժմ յանցանը բին ինչութիւնը:

ԱՅՆ

Ես չէի կամենար, որ չպործուէր այդ յանցանքը, որն այսպիսի փառաւոր արգասիք է ունեցել:

ԳԼՈՒԽԸ

Բայց ես, աէր, օրինական մի որդի էլ ունիմ, սորանից մի քանի տարով մեծ, որին սորանից աւելի չեմ սիրում: Թէ եւ այս չարաձմին փութաց աշխարհ գալու՝ յառաջ քան թէ իւրան խնդրել էին՝ բայց սորա մայրը գեղեցիկ էր և սորա ծննդեան ժամանակ ինձ այնքան ցնծութիւն պատճառեց, որ այս չարին ճանաչել հարկազբուեցայ:—Եղմունդ, ճանաշնում ես այս ազնուական լ'որդին:

ԵԳՄՈԽԵՐ

ՈՉ միշ'որդ:

ԳԼՈՒԽԸ

Աէնարի կոմսն է: Յարդիր նրան իբրեւ իմ թանկագին բարեկամիս:

ԵԳՄՈԽԵՐ

Զեր յարգութեան լոռնարհ ծառայ իմ:

ԱՅՆ

Դուք հաճելի էք ինձ, և ես կկամենայի ձեզ հետ աւելի մօտ ծանօթանալ:

ԵԳՄՈԽԵՐ

Ես կջանամ, միշ'որդ, ձեր յարգանքին արժանաւոր լինել:

ԳԼՈՒԽԵՐ

Կելտարի օտարութեան մէջ է անցրել և նորից պիտի գնայ: (Փողէք յայնէք էն լուս-): Թագաւորը գալիս է:
‘Աշը էն հրան- իր, որտ առ-ջւեց մի նատ էն
գունու- կորնվալ’, ԱՌԱՆԻ, ԳՈՐՆԵՐԻԼ’, ՅՈՒ-
ԳԱՆ. ԿՈՐԴԵԼԻԱ, և ՅԵՍՈՒԻՄ:

(ԼԵՐ ԳԼՈՒԽԵՐԻՆ)

Գեան սպասաւորի Պաղպիոյ թագաւորին և Բուրգոնի
դքսին:

ԳԼՈՒԽԵՐ

Պատրաստ եմ, արքայ: (Գնու- էն ԳԼՈՒԽԵՐ և ԵՐԱ- նոր):

ԼԵՐ

Պարզում եմ աշա

Եմ մըսիս խորհուրդն: Բերեք քարտեսը:
(Բերու- էն մի ժամանել):

Գիտեցէք, որ երեք մաս բաժանեցինք
Մեր ակրութիւնն ու բարեհածեցանք
Մեր ծերութիւնից բառնալ այլն հող
Եւ աշխատութիւն: Թողայժմին գործեն
Կայտառ ցժկերո՞ Խոկ մենք՝ թեթևած
Ճանապարհ հորդինք դեպի գերեզման:
Կորնվալ մեր որդի, և նոյնչափ սիրուած
Որդի Ալբանի, մենք որոշեցինք
Եյժմին հաստատել մեր աղջիկների
Օժիոր, որպէս զի առագայում
Որ և իցէ վէճ տեղիք ըստնենայ:
Պաղպիոյ արքայն և Բուրգոնի գուքսն
Երկար ժամանակ մըրցում են արդէն
Մեր կըրտսեր դըրտի մէրն զըրաւելու
Եւ ըսպասում են մեր սպալատումը.
‘Նոքա պատասխան կըստանան այսօր: —
Եյժմ, որ հեռացանք թաղաւորական

Բոլոր հոգսերից և արդիւնքներից՝
Սաաշէք, զըստրերս, երեքիցդ որի՞ն
Համար կարող եմ ասել՝ թէ նէ ինձ
Եմենքից աւել է սիրում որ ևս
Եյնաեղ շըռայլեմ ճոխազոյն բարիք՝
Ուր կաւելանայ անձի արժանիք:
Դու, իմ անդրանիկ Պոնէրիլ, սկսիր:

ԳՈՐԾԵՐԻՆ՝

Եմ սէրս չեն կարող լիով բացաարել
Բառերն, ովլ իմ հայր. ևս սիրում եմ ձեզ
Եւել քան աչքիս լցոն, ազատութիւնն
Եւ օգը. բոլոր անգին գանձերից
Սուաւել. ինչպէս մի կեանք, ճոխացած.
Եռողջութիւնով, փառքով մեծութեամբ
Եւ գեղեցկութեամբ. այնպէս շատ՝ որչափ
Որ և է տանի սիրել է մի գուստը
Եւ մի հայր՝ սիրուել. որի մօտ համբ է
Լեզուն, և շունչը՝ արկար: Այրում եմ
Զեղ գեր ի վերոյ քան չափ ու նպատակ:

ԿՈՐՏԵԼ-ԴԱ. (Առանցին)

Ինձ ի՞նչ է մընում—սիրել և լլուել:

ԼԻՐ (Պանէրելին)

Եյս երկիրներին—տես, մինչև այստեղ—
Եի լիտ անստառով շըքեղ դաշտերով,
Սուաս գետերով, լսյն հովիտներով—
Տիրուհին ևս դու: Ելքանիի և
Քո սերունդներիդ լինին յաւիտեան: .
Իսկ ի՞նչ կասես դու, մեր երկրորդ զըստրիկ,
Աորընվալի կին, սիրելի Հոեգան:

ՀՈԵԳԱՆ

Միւնոյն տարրից ենք ևս և իմ քըյլս.
Ինձ ել նոյն չափով ևմ զընաշատում:

Կըրում եմ սըրում այն բոլոր սէրը,
Ենչ որ բացատրեց Գոնէրիլ։ միայն
Նէ շատ քիչ ասաց։ Ես թըշնամի եմ
Սմենայն տեսակ յընծութիւնների,
Որ սեփական են մեր ըզգայութեան.
Եւ երջանիկ եմ ըզգում ինձ միայն
Չեր սիլով, ով իմ անզին թագաւոր։

ԿՈՄԻԵԼԻՒԾ (առաջին)

Խեղճ Առողելիս։ բայց ինչու խեղճ։ Ես
Գիտեմ թէ ո՞չշափ իմ սէրը մեծ է
Քան լեզուս։

I.ԲՊ

Վեղի և սերունդներիդ
Թող ժառանգութիւն լինի յաւիաեան
Եյս ելրորդ մասը մեր սիրուն երկրի,
Որ Գոնէրիլի բաժինից վար չէ
Եւր զեղեցկութեամբ, ընդարձակութեամբ
Եւ արժանիքով։ Եսկ գու, յընծութիւն
Եմ վերջին, բայց ոչ նըւաղ սիրելի,
Որի նորապթիթ սէրի առիթով
Ուրցում են կաթը Շուրգոնի և որթն
Գաղղիոյ, գու ի՞նչ կարող ես ասել,
Որով ըստանաս երբորդ բաժինը,
Որ քան քոյրերինդ աւելի ճոխ է։

ԿՈՄԻԵԼԻՒԾ

Ոչի՞նչ մեծարդոյ հայր։

I.ԲՊ

Ոչի՞նչ։

ԿՈՄԻԵԼԻՒԾ

Ոչի՞նչ։

ԼԵՐ

Ուլոնչից ծընում է միայն ոչինչ:
Միւսանգամ խօսիր:

ԿԱՐԴԵԼԻՒԾ

ԿՇՆՀ թրշուառ եմ ես.

Սըրտինըս լեզուով չեմ կարող յայտնել:
Չեղ սիրում եմ տէր, ինչպէս որ իմ պարտքս
Ճրամայում է, ոչ աւել ոչ պակաս:

ԼԵՐ

ԵՇ, Առրգելիս, գէթ փոքր ինչ ուղղեր
Խօսքըդ, և բաղդիդ գըլին մի զարնել:

ԿԱՐԴԵԼԻՒԾ

Ուշ իմ բարի հայր և տէր, գուք եք ինձ
Օ՞լինել և սիրել կըթթութիւն արւել
Սոցա փոխարէն շնորհակալ եմ ես.
Ճնազանգում եմ ձեղ սիրում և յարդում,
Ինչպէս օրէնքն է: Եթէ յիրաւի
Քոյրելս միայն ձեղ են սիրում, ինչո՞ւ
Սմուսին ունին: Թէ ես մարդի զնամ՝
Չեռքիս գըրաւին հետ նո կըստանայ
Կէսն իմ պարագելիս, սէրիս ու ինամքիս:
Ուստի ես բընաւ, քոյրելիս նըման
Չէի պըսակուիր, եթէ ես հօրըս
Միայն սիրելի:

ԼԵՐ

Եւ այդ խօսքերիդ
Ճամաճային է սիրտգ:

ԿԱՐԴԵԼԻՒԾ

Եյո, տէր արքայ:

ԼԵՐ

Եյլպէս մանկամարդ և այգքան գըժնեաց:

ԿՈՐԴԵԼԻԸ

Այսպէս մանկամարդ, հայր իմ, և պարզեիրա:

ԼԵՒ

Լաւ. և քեղ օժիտ առ պարզաբառութիւնդ.
 Թող վըկայ լինին սուրբ լոյսն արեի,
 Ենհաս խորհուրդը խաւար գիշերի,
 Ի ասազակամարի աղջեցութիւնքը,
 Որով գալիս ենք աշխարհ ու զբնում—
 Եհա ուրանում իմ ամեն խընամք
 Աէր ու հայրական պարտականութիւն
 Եւ արենական ազգականութիւն,
 Եյժմ և յաւիտեան համարում իմ քեղ
 Օտար իմ սրբահս, օտար իմ աչքիս:
 Բարբարոս Ռակիւթն և այն մարդակերն,
 Որ որդու մրսով փորն է կըշաացնում՝
 Եյնչափ մօտ են ինձ և կը վայելին
 Եմ կարեկցութիւնս և օգնութիւնը՝
 Որչափ գու, թէպէտ երեմն իմ զաւակ:

ԱՅՆՏ

Տէր ալքայ . . .

ԼԵՒ

Լըմի՛ր, Աէնա, մի՛ կանդնիր գու
 Վիշապին և իւր կատաղութեան մէջ:
 Ենէրան ամենքից շատ էի սիրում:
 Ենէրա խընամքին էի կամենում
 Յանձնել ծերութիւնս—(Արդելային) Հեռացի՛ր աչքիցս:
 Ենչափէս որ Ճիշտ է, թէ գագաղիս մէջ
 Վը գտնեմ հանգիստ՝ նզնապէս և այս, որ
 Վիշնուամ իմ քեղնից սիրուս հայրական:—
 Ուր է թագաւորն, ով զբնաց եաւն: (Մէ շատի՛ք ժնու-ճէ):
 Բուրզոնին կանչել: (Մէ ուրիշն էլ ժնու-ճէ):—Աորնպալ,
 Ելըմնի,

Երկու դըստրերիս օժիտին վերայ
 Առէք այս երրորդ բաժինն էլ Խոկ նէ
 Թող ամուսնանսյ այն գոռողութեամբ,
 Որին անուանում է ճշշմարտութիւն:
 Տալիս ևմ համայն իմ իշխանութիւնս
 Ըողոր աստիճան և արդիւնքներով:
 Խոկ մենք՝ ուղեկցող հարիւր ասպետով
 Միայն, որոց ձեր հաշուով պիտ պահեք՝
 Ուզում ենք մի մի ամիս փոխ առ փոխ
 Զեզ մօտ ապրիլ: Մեզ պահում ենք միայն
 Սնունն ու պատիւ մի թագաւորի,
 Խոկ իշխանութիւն, գանձն ու վարչութիւն,
 Սիրելի որդիք, ձերը կը լինին.
 Եւ առհաւատչեայ՝ ահա այս թագը.
 (Առջև ուստի նախ բարի է նոցա):
 Զեր մէջ բաժնեցէք:

ԱՅՆՏ

Օգոստավառ. Լիր,
 Քեզ, որ իբր արքայ ևս միշտ պատուել եմ;
 Սիրել իբրև հօր, պաշտել իբրև տէր
 Եւ իբր իշխանիս ազօթքումն յիշել...

ԼԻՐ

Լարուած է աղեղն. խուսափիր նետից:

ԱՅՆՏ

Թող վերաս թըռչե, թէւ որլաքը
 Սիրուս խոցուի էլ: Երբ արքայն խելքը՝
 Կէնան էլ թող կորցնէ իւր պատկառանքը:
 Եյդ ի՞նչ ևս անում դու, այ ծերունի:
 Կարծում ևս, երբ որ զօրութիւնն ընկծի
 Ըողոքորթութեան առջեւ՝ կը վախնա՞յ
 Պարաքը խօսելուց: Երբ անմըսութեան
 Մէջ է ընկըզմում իշխանութիւնը՝
 Եղնըսութեան պարոքն է ճշշմարտութիւն:

Յլնջի՛ր սյդ վըճիուդ և մըտածելով
Փոխի՛ր անխոհեմ ու շտապ հըրամանոփ:
Թող վըկայ լինի կեսնքըս՝ որ կըրտսեր
Դուստրըգ քեզ մի մազ պակաս չէ սիրում:
Սնսիրա չեն նոքա, որոց համեստ ձայնն
Շաշուկշառաշուկ թընդիւն չէ հանում:

Լ.ԲՊ

Լըռի՛ր, Աէնս, կեանքըդ մազից է կախուած:

Ա.Հ.Տ.Տ

Կեանքս ևս միշտ դիտել եմ իբրև գըրաւ
Թըշնամինելիդ դիմապրաւելու.
Ուստի չեմ վախնար փըրկանք տալ նըրսան՝
Երբ քո փըրկութիւնն է իւր առիթը:

Լ.ԲՊ

Հեռացի՛ր աչքիցս:

Ա.Հ.Տ.Տ

Ուզի՛զ դիտէ, Լիլ,
Եւ թող՝ որ մընսամ ես անդըրդուելի
Մչքերիդ առջեւ:

Լ.ԲՊ

Եպողոն վըկայ . . .

Ա.Հ.Տ.Տ

Եպողոն վըկայ, արքայ, որ դու դուր
Երդում ես անում աստուածներին վրայ:

Լ.ԲՊ

Օսոռայ, ըստամբակ . . . : (Զեւուլ սթին յաւլուլ):

ԸՆ.ՌԾՎ.ԽԵ ԿՈՐՆԱ.ԸՆ.

Դագարեցէք, ակը:

ԱԼՅՈՑ

ՕՇՆ և ըսպաննիր բըժիշկըդ, ոլով
Հիւանդութիւնիդ հասուցում կանես:
Յետ առ սպարգեներդ, կամ թէ ոչ քանի
Ըսւնչ կայ բերանումն՝ ես չեմ դադարիր
Վեզ յանդիմանել, թէ վատ ես անում:

ԼՅՈՅ

Լըսիր, ապըստամբ, հըպատակութեանդ
Պարաքով լըսիր ինձ: Որովհետեւ մեզ
Ուխտազրուժ անել կամեցար, (որ մէկը
Երբէք եղած չենք) և յանդրդնեցար
Խափանել վըճիռն մեր իշխանութեան՝
(Որին չեն ներում մեր աստիճանն ու
Թագաւորութիւն) —ուրիմն ըստացիր
Վարձատըրութիւնդ մեր տէրութիւնից:—
Հինդ օր քեզ միջոց եմ տալիս՝ գործերդ
Կարգի պընկըռ, վեցերորդ օրը
Ստելի կըսնակդ մեր երկրին դարձրու:
Եթէ յաջորդող տասներորդ օրը
Դատապարտ մարմինդ մեր տէրութեան մէջ
Դեռ զըանըւի՝ այն վերջին վայրիեանդ է:
Աորիր առջեկցս: Երամազդ վրկայ,
Որ այս մեր վըճիռն անդառնալի է:

ԱԼՅՈՑ

Ուրեմն բարեաւ մընաս, տէր. եթէ
Այսպէս գատեցիր՝ արտասահմանումն
Ե աղատութիւնն, իսկ աքսորն այստեղ: (Առեւելեայն)
Մանկամարդ աղջիկ, թող քեզ հետ լինի
Երկնից զօրութիւնն, քեզ՝ որ խորհում ես
Եղնիւ, և խօսքըդ՝ ճըմարտութիւն է:
(Հաւետանին և Առեւելեայն)
Իսկ ձեր մէծ խօսքերն արդեամբ հաստատուին:
Աիրուն ըառերըդ առն և լաւ գործեր: (Իշտանելեայն)

Մնաք բարով և գուք, իշխանք: Այստեղից
Աքսորուած՝ Կէնտը զնում է հին սրբառվ
‘Նոր երկիր: (Գնում է):
‘Երբ Էն հնասած Գլուսեր, ԳԱՂԻԱՑԻ ԹԱ-
ԳԱԽՈՐԾ, ԲՈՒՐԳՈՆԻ ԴՈՒՅՍՆ ԵՒ ՈՒՂԵԿՑՄԱՆԵՐ:

ԳԼՈՒՍԵՐ
Տէր իմ աշա Գաղղից
Ալքայն և Ըսւրդոնն:

ԼԵՐ

Եմ պատուելի գուքս,
‘Նախ ձեզ եմ զիմում, որ թագաւորին
Դէմ ախոյիան էք մեր զըստրի համար.
Ասէք, առ նըւազն ի՞նչ էք պահանջում,
Ամուսնանալու համար նէրա հետ,
Եթէ գուք նէրան դեռ կամենում էք:

ԲՈՒՐԳՈՆԻ ԴՈՒՅՍՆ

Զելքդ մեծութիւն, ես գոհ եմ նրանով
Ի՞նչ որ միանգամ արգէն վընկցիք.
Եւ գուք, վըստահ եմ, բան չք պակսցներ:

ԼԵՐ

Եմ գելազնիւ գուքս, քանի որ նէրան,
Մէնք սիրում էնք՝ այդ էր նէրա զինն:
Իսկ այսօր ընկաւ նէրա արժանիքն:
Աշա կանդնած է նէ ձեր առջեռում:
Եթէ այդ վոքրիկ խաղալիքն մէջ
Մի բան, կամ նշյն ինքն—իմ ատելութեան
Միակ օժիտով—հաճելի է ձեզ՝
Ասէք, ձերն է նէ:

ԲՈՒՐԳՈՆԻ ԴՈՒՅՍՆ

Ի՞նչ պատասխանելս
Զեմ զիտեր:

Լ. ԵՐ

Սէրման իւր պակասութեամբ
Հանդերձ, որ ունի, մեզ օտարացած,
Մեր ատելութեան միայն որդեպաս,
Լոկ մեր անէծքի օժտով, որին մնաք
Երդմամբ ուրացանք—ուզում էք առնել
Թէ թողնել:

ԲՈՒԺՊԱՅԻՆԻ ԴԱԼԱԲԱԿԻ

Տէր իմ, ներեցէք, որ ևս
Եյս գէպքում յետ եմ առնում ընտրութիւնս:

Լ. ԵՐ

Եւ թողէք. այդ է, յանուն արարչիս
Երդվում եմ, գէրս բոլոր ունեցածն,
Որ ձեզ թըւեցի: (Գաղղիայի Ռադա-որին)
Չեզ գալով, արքայ,
Երբէք չեմ կարող անարդել ձեր սէրն
Եյն աստիճան՝ որ ձեզ առաջարկեմ
Իմ ատածս. ուստի ձեր սիրով գարձրէք
Ուրիշն վերայ, որ արժանագոյն
Լինի, քան թէ այս թըւշուառ արարածն,
Որին բընութիւնն իւրն համարելու
Ամօթ է կըրում:

ԳԵՐԱԼԵՅՅԻ ԹԱՐԱՅՈՒ

Ի այս ինձ, թէ սէ, որ վայրկեան մ'յառաջ
Չեր սիրելագոյնն էր և առարկայ
Չեր զովասանքին, ծերութեան նկցուկ,
Երժանագոյնը և լաւագոյնը
Չեր սըրտի համար՝—մի ակընթարթում
Ե՞նչ աններելի յանցանք գործեց, որ
Նիմովին խըլեց ձեր սէրն ու շնորհք:
Նէ կամ բընութեան օրէնքների դէմ

Սոսկալի եղեռն պիտ' լինի գործած,
Կամ ձեր նախկին սէրն անարժան կերպով
Գըրաւել էր նէ, որ ևս նէրանից
Զեմ կարող յուսալ, չենթազրելով այն
Գործ մէկ հըսաշքի:

ԱՐՄԵՆԻԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ (Ե-Ր հօդն)

Արովհետե ևս

Չունիմ այն կոկիկ շողոքորթ արուեստն,
Որ աննըպատակ խօսիմ, այլ առանց
Շաղփաղի խօսքերի կտտարում եմ այն,
Ինչ որ խորհում եմ՝ երգմնեցուցանում
Եմ ձեզ, թագաւոր, որ յայտնէք, թէ ոչ
Յանցանք կամ արատ, աղտեղի գործ կամ
Սնբարցական ընթացքս էր առիջ,
Որ ինձնից վերցրիք ձեր գութն ու խրնամք:
Եյլ մի թերութիւն, որով գոհ եմ ևս—
Եյս՝ որ ես ըլնիմ հրապուրիւ հայեացք
Եւ շողոմարար լեզու, որ ինձ շատ
Աւրախացնում է, թէև սորանով
Զըրկվում եմ նոյնպէս և ձեր շընորհքից:

Լ. Ե. Պ.

Լաւ էր, որ բընաւ գու ըլ ծնէիր,
Վան այդպէս կոպիտ և ինձ անհաճոյ:

ԳԵՂԳԻՒՅՑԻ ԹԵՐԱՄԱՐԻ

Միայն այս, մի լոկ ամօթխածութիւն,
Որ յաձախ արգելք է լինում ասել՝
Ինչ որ սըրաում կայ: Դուք ի՞նչ էք ասում
Օրիորդին, գուքս: Աէրը սէր չէ, երբ
Հետը խառնվում են օտար հաշիներ:
Ուզըւմ էք նէրան, ինքն է իւր օժիան:

ԲԱԼԵՐԳԱՐՈՒՄԻ ԲԱԼԵՐԱՄԻ (Լ. Ե. Պ.)

Օգոստափառ Լվի, արւելք միայն այն՝
Ինչ որ խօստացաք ինքնին, և խկոյն

Առագելիսյին ևս կառնեմ ինձ կին,
Երբեք Բուրգոնի զըքսուհի:

Լ. Ե.

Երպելք,

Երդուել ևմ արդէն, խօսքս անփոփոխ է:

ՏՅԱԳԱՐԱԿԻ ԴՅԱՅԲՈՒՆ (Առշտելային)

Յաւում ևմ որ գուք այլպէս կորցնելով
Զեր հօր՝ կորցնում էք ձեր ամուսինն էլ:

ԱՄՈՒՆԵԼԵԱ

Հանգիստ թող լինի գուքսն, որովհեաւ
Լոկ հաշիւներն են իւր սէրն՝ ևս նորան
Այն չեմ լինելու:

ԳԵՐԱԲԵՅԻ ԹԵՎԵԱՄՐԱ

Սիրուն Առագելիս,
Եյտէս աղքատ բայց և այտէս հարուստ,
Թէպէտե լըքեալ բայց միանդամայն
Պատուական, ատուած՝ սակայն պաշտելի,
Ես տէր ևմ լինում քեզ ու քո գահձիգ:
Թող օրինաւոր լինի վերցընել
Եյն որ ձրգեցին: Բայց սյս ի՞նչ զարմանք,
Սոսուածներ, նոցա ցուրտ արհամարհանքն
Եւելի վասեց բորբոքեց իմ սէրս:—(Լ. Ե. Ե.)
Քո գուստը, որին ժառանգութիւնից
Օքրկած ընալութեանս առջև ձրգեցիր—
Եմս է. (Ե-ր շատօնէն) թագուհի սիրուն Գաղղիոյ:
Խոնաւ Բուրգոնի գըքսերն չեն կարող
Խըլել ինձանից սյս անզին գանձը: (Առշտելային).
Քընքոյշ հըրաժեշտ տուր, Առագելիս,
Դըքնդակ տոհմիկ, կորցնելով այս տեղն՝
Ուրիշ լաւաղոյն մի տեղ կը դրանես:

ԼՐՄ

Երքայ Գաղղիոյ, դու ներան առար.
Թողլ քոնը լինի միշտ, ևս այդպիսի
Դըստրին չեմ ուզում, և չեմ կամնում
Ել ներան ահսնել: (Առտելացին) Ծաղղիոյ ընդ առաջ
Գընա, զըրկըւած մեր օրհնութիւնից
Սէրից և շնորհքից: Գրնանք, ազնիւ դուքս:
(Փոքրի յայն: Գնում էն)

ԳԵՂԳԵՈՅ ԹԵՐԵՇԵՈՐԻ (Առտելացին)

Քըրերիոյ հրաժեշտ առւր, Առողելիա:

ԿՈՄԴԵԼԻԵ

Գուք, անդին գանձեր մեր հօրն, թօղնում է
Զեղ Առողելիան, աչքն արտասուքով:
Գիտեմ ի՞նչ էք դուք, սակայն իբրև քոյլ
Դըժուարանում եմ ձեր պակասութիւնքն
Սնունովն ասել: Յարգեցէք մեր հօր.
Յանձնում եմ նըրան ձեր գընահատուած
Ալբախն, բայ աւաղ, եթէ ինձ սիրեր
Նու ինչպէս յառաջ՝ նորան լաւագոյն
Ես պատըսպարան կը տոյի: Երկուքոյ
Ել մընաք բարով:

ՀՈՎԳԵՎԵ

Մեր պարաքը մեղի

Մի սովորեցներ:

ԳՈՒՅԵՐԵ

Խորհիր մանաւանդ,

Խնչպէս զոհ անես ամսւնիդ, որ քեզ
Ծաղղին ապաստան մնացածը՝ վերցրեց
Եր ողորմութիւն: Գուն որովհետեւ
Որդիական սէրի մէջ պակասեցար՝
Սըժանի է, որ բաժինքի պակասն
Ել չը պակասի:

ԿՈՐԴԵԼԻ

Կը դայ ժամանակի
 Կը բացուի, ինչ որ ծածկեց մարդահաճ
 Աեղծաւորութիւնն, և ամօթտպարտ
 Կը մնայ խարդախն ի վերջոյ: Ըարիք
 Եմ ձեղ յանկանում:

ԳԵՂԳԵՎՅԻ ԹԵԳԵՎԵՈՒ

Գընանք, Կորդելիս:
 (Թագաւորն և Կորդելիս գնում էն):

ԳՈՒԵՐՄԻ

Քըլրիկ, քեղ կարեոր խօսքեր ունիմ ասելու այնպիսի
 մի գործի մասին, որ մեզ երկուքիս էլ է վերաբերում: Կար-
 ծում եմ, թէ մեր հայրն այս երեկոյ կերթայ այս տեղեց:

ՀՈՒԵՐՄԻ

Այս, և քո մօտ կը դայ: Հետեւ եալ ամիս կվերադառնայ
 մեր մօտ:

ԳՈՒԵՐՄԻ

Տեսնում ես, որչափ կամակոր է նա այժմ, ծերութեան
 ժամանակ: Սորա մի զեղեցիկ օրինակն հենց նոր տեսանք:
 Նա միշտ ամենքից աւելի մեր կրտսեր քոյրին էր սիրում:
 և յանկարծ ի՞նչ դատարկ պատճառով դուրս արաւ նէրան:
 Խորա այս պակասամիտ ընթացքն աչքի շատ է զարնում:

ՀՈՒԵՐՄԻ

Յանցանքը ծերութեանն է: Բայց նա միշտ էլ իւր ա-
 րածը չէ դիտցել:

ԳՈՒԵՐՄԻ

Եւր ամենալաւ և առողջ տարիներումն էլ նա ինքնի-
 րան զսպել չէր կարող: Ուրեմն մենք պէտք է տանինք ոչ մի-
 այն նորա մէջ խօս արմատացած թերութիւններն, այլ և այն

Քմահաճ՝ զայրացկոտութիւնը, որ գոլիս է մաղձու և հիւնդոտ ծերութեան հիտ:

ՀԱՅԳԱՎԱՐ

Երեւում է, որ մենք էլ շատ անդամ պիտի ենթարկուինք նորա փոփոխամտութեան, ինչպէս է Աքսոի արտաքսումը:

ԳՈՒՅՄԻԹԱՌ

“Աս դեռ զբազած է Գաղղիայի թագաւորին Ճանապարհ ձգելով: Խնդրում եմ քեզ, միասին զործենք. եթէ մեր հայրն այդ զայրացկոտութիւնը մեր վերայ էլ զործ դնէ՝ նորա այժմեան առատաձեռնութիւնը մեղ համար նախատինքի աղբիւր կլինի:

ՀԱՅԳԱՎԱՐ

Առա վերայ դեռ կմտածենք:

ԳՈՒՅՄԻԹԱՌ

Պէտք է վճռական մի բան անել և մանաւոնդ՝ երկաթը դեռ տաք տաք՝ ծեծել: (Գառաք Էն):
(ԷԴՍՈՒԽԴ ՆԵՐ է ճանաւում, մի նամակ յշտուածը)

Բընութիւն¹⁾), դուն իս իմ աստուածն. միայն
Վեղ եմ հնազանդում: Խնջու խոնարհիմ
Փուծ սովորութեան և ներել անմիտ
Դասաւորութեան. որ ժառանգութիւնս
Խըլեն, վասըն զե տասը, տասներկու

1) Բնութիւն բառին տակ Եգմոնտը ըմբռնումէ ոչ թէ մի աստուածային գոյութիւն, այլ լոկ մի հասկացողութիւն՝ հակառակ ընդհանուր սովորութեան և կեանքի պայմաններին: Առ ուզում է ասել թէ որովհետեւ քաղաքային պայմաններից դուրս է ծնել պետք է որ հնազանդի ընութեան օրէսքներն, որոնց ոչինչ տարբերութիւն չնա դնում այս կամ այն պայմաններում ծնուածներին մէջ: Ստիվենու:—Եդմունդ զիմումէ ընութեան, ինչպէս իւր աստուածին՝ այն խորհրդով՝ որ ապօրինի ծնունդներին կոչումնն էր natural, (հնական կամ ընութեան որդի): Առ որ ընութեան օրէնքով իւր որդին է՝ քաղաքական օրէնքով և nullius filius (ոչ ուրուք որդի): Մէսոն:

Լուսնեակ եղբօրիցս յառաջ ծընայ ես:
 Եւ ապօրինի և ինչո՞ւ ըստոր,
 Երբ մարմնիս կաղմուածքն ամուր է նոյնապէս
 Եւ հոգիս աղնիս, նոյնչափ բարեձեւ
 Աւ աղտա է դէմքս, ինչպէս մի պարկեշտ
 Տիկինի որդուն: Ինչո՞ւ կընքում ին
 Մեղ ապօրինի, անարդ բառերով:
 Յած, ապօրինի՛: Մե՛նք, որ բընութեան
 Կայառ անչափում աւելի եւանդ
 Եւ ուժեղ կաղմուածք ըստացանք, քան թէ
 Չանձրացած, թըմրած առագաստի մէջ
 Գոյութիւն առնող մի խումբ յիմարներ,
 Որ ծընողների կէս մի քընին մէջ
 Են շինվում և կէս մարթուն ժամանակ:
 Օ՛ն ուրիշն, Եղկար, օրինական ծնունդ,
 Վո երկիրներիդ ևս տեր կը զառնամ:
 Եպօրէն Եղմունդն օրինականին
 Զափ մեր հօր սէրին իրաւունք ունի:
 Օքնական, ահ, իշնչ կոկիկ բառ է:
 Իմ օրինական պարոն, քեղ տեսնեմ,
 Եյս նամակն եթէ ներգործէ՝ զիտումն
 Յառաջ թէ երթայ՝ ապօրէն Եղմունդն
 Օրինականին կը խախտէ աեղից:
 Ես կը մեծանամ, ևս բազդ կը զբանեմ...
 Եպօրէնին հետ եղիք, ասառւածներ:

(Ներս է հայուսած ԳԼՈՍՏԵՐ):

ԳԼՈՍՏԵՐ (առանձին):

Այսալ արագսուած այսպէս. Գաղղիոյ
 Երքայն վրշացած. թագաւորը զնաց.
 Եւր իշխանութիւնն ամբողջ բաժանուած:
 Եւ այս ամենը մի վայրկեանի մէջ:
 (Նկապասած է Եղմունդին):
 Եղմունդ, ինչ նոր լուր ունիս:
 Ժամ չէ անցնում, որ անվայել դործով

ԵՐԱՄՈՒՆԴԻ (Նամակը պահելով)

Ոչինչ նորութիւն չգիտեմ, տէր:

ԳԼՈՒԽԵՐ

Ինչու այդպէս շտապով պահում ես այդ նամակն:

ԵՐԱՄՈՒՆԴԻ

Ոչինչ նորութիւն չգիտեմ, տէր,

ԳԼՈՒԽԵՐ

Ի՞նչ թուղթ էր այդ, որ կարդում էիր:

ԵՐԱՄՈՒՆԴԻ

Ոչինչ, տէր:

ԳԼՈՒԽԵՐ

Ոչինչ Հասր ինչու այնպէս սարսափած եւ շտապով
զրաբանդ դնել փութացիր: Ոչինչը պէտք չունի, որ այդպէս
պահուի: Տուր տեսնեմ: Եթէ ոչինչ է ակնոց հարկաւոր չի
լինիր:

ԵՐԱՄՈՒՆԴԻ

“Երեցէք ինձ, տէր. եղբօրիցս մի նամակ է, որ գեռ ամ-
բողջ չեմ կարդացել բայց որչափ հասկացայ՝ ձեղ կարդալու
համար գրուած չէ:

ԳԼՈՒԽԵՐ

“Նամակը տուր, ասում եմ:

ԵՐԱՄՈՒՆԴԻ

Օհէ տամ, թէ շտամ՝ անիրաւութիւն արած կլինիմ:
Կարդացածիցս որչափ կարողացայ հասկանալ՝ պարսաւելի
բան է:

ԳԼՈՒԽԵՐ (Նամակն առանելով նորանից):

Տուր, տեսնեմ, տուր:

ԵՒՄՈՒՅԻ

Երբեւ արդարացում՝ եղբօրս՝ յօյս ունիմ՝ թէ այս զրել
է՝ իմ ազնուութիւնս փորձելու համար միայն:

ԳԼՈՒՍՏԵՐ (Էպրես-ճ է).

«Եյս կարգն, այս պատիւն, որ տալիս ենք ծերութեան՝
«թունաւորում են մեր կեանքի ամենալաւ օրերն: Մեր բաղ-
«դը խլվում է ձեռքերիցս մինչև այն ժամանակն, որ մենք
«ծերանալով՝ այլ ևս չկարողանանք նորանով ուրախանալ:
«Ես տեսնում եմ, որ յիմարական և պարզամիտ ստրկու-
«թիւն է մեր հպատակութիւնը ծեր բռնաւորին առջեւ, որ
«տիրում է մեր վերայ ոչ այն պատճառով, որ զօրութիւն
«ունի, այլ վասն զի մենք տանում ենք նորան: Խնձ մօտ եկ,
«որ այս մասին ընդարձակ խօսիմ: Եթէ հայրս կամենար քր-
«նիլ մինչև այն ժամանակ, որ ես նրան արթնցնէի՝ գու յա-
«ւիտեան տէր կը լինէիր նորա եկամուտների կէսին և սիրե-
«լի՝ քո եղբօր, Եղգարին»: Փահ, դաւադրութիւն: «Քնի՞,
«մնչ ես նշան աղննցնէի». «Տէր իննէիր եկամուտների ինսին»: —
Իմ որդի՞ս, Եղգարլը: Եւ նա կարողացաւ ձեռքը բարձրա-
ցնել այս տողերը զրելու, և նա սիրա ունեցաւ այս բանը խոր-
հելու: — Երբ ստացար այս նամակն, ովք բերեց:

ԵՒՄՈՒՅԻ

«Սամակն խնձ ոչ ոք չբերեց. սենեակումս գտայ այն. պա-
տուհանից է ներս ձգուած:

ԳԼՈՒՍՏԵՐ

Գիտե՞ս, որ սա եղբօրդ ձեռքն է:

ԵՒՄՈՒՅԻ

Եթէ բովանդակութիւնը լաւ լինէր՝ կերտուեի, որ իւր
զրութիւնն է. բայց քանի որ այսպիսի բովանդակութիւն ու-
նի՝ շատ ցանկանում եմ կարծել՝ թէ նորանը չէ:

ԳԼՈՒՍՏԵՐ

Սա նորմ զրութիւնն է:

ԵՒՄՈՒՆԻ

Նորանն է, տէր: Բայց ևս վստահ իմ, թէ նորա սիրտն Համաձայն չէ այս գրուածին:

ԳԼՈՒԽԻ

Յառաջ երբէք քեղ հետ խօսք չէ բացել նա այս մասին:

ԵՒՄՈՒՆԻ

Ու երբէք, տէր: Միայն, յաճախ լսել եմ նորանից, թէ երբ հայրելքը ծերանալ են սկսում և որդիներն հասունանալ լւաւ է, որ հայրը որդու խնամքին յանձնէ իրան և ստացուածքին կառավարութիւնը:

ԳԼՈՒԽԻ

ԵՇ անպիտա՞ն, անպիտա՞ն. նոյն իմաստն է և նամակին մէջ: Կափրած, չարագործ որդի, գարշելի՝, վայրենի գտղան և աւելի վատ քան վայրենի գաղաներն:—(Ծառապյն) Պնա նրան վնտոիր. ևս կամենում իմ նրան բանդել: Գարշելի՝ տղայ, ուր է նա:

ԵՒՄՈՒՆԻ

Ուղեղը չեմ գիտեր, տէր: Եթէ հաճեիք ձեր զայլոյթն զէպի եղբայրս առժամանակ ծածկել մինչև նորա գիտաւորութիւնն աւելի ստուդէլիք՝ աւելի ապահով կլնեիք գուք. վասն զի եթէ նորա գէմ բոնութիւն գործ զնէք և յետոյ իմանաք, թէ այս բոլորը մի պարզ սխալմունք է ձեր պատուին վերայ արատ կգայ և ձեր որդու հնազանդութեան կը տաք վերջին հարուածը: Ես կեանքս պատրաստ իմ պատգամելու, թէ սորանով եղբայրս կամեցել է միայն փորձել իր հաւատարմութիւնս զէպի ձեզ առանց որ և է չար գիտաւորութեան:

ԳԼՈՒԽԻ

Կարծում ես այդպէս:

*

ԵՐԱՄՈՒՆԴ

Եթէ յարմար դատէք՝ ձեզ այնպիսի տեղ կտանիմ, որ
կարողանաք ձեր ականջով լսել այս մասին իմ խօսակցու-
թիւնս եզօրս հետ և անձամբ տեղեկանաք։ Հետո այս գի-
շեր պէտք է այս անել։

ԳԼՈՒԽԵՐ

“Ես չե՛ կարող այսպիսի հրեշլինել։

ԵՐԱՄՈՒՆԴ

Սնտարակոյս ոչ։

ԳԼՈՒԽԵՐ

Եւր հօր դէմ, որ նրան անջափ և դրովաղին սիրում-
է։—Երկի՞նք և երկիր։—Եղմունդ, գտիր նրան, յայտնի արա-
խնձ նորա խորհուրդը, ինզրում եմ քեզ։ Գործիր ինչպէս
ազդում է խոհեմութիւնդ։ Բոլոր կարողութիւնս տալու
պատրաստ եմ, այս գործը ճշտիւ իմանալու համար։

ԵՐԱՄՈՒՆԴ

Ես կգնամ նրան վինտուելու։ Ի՞անն այնպէս կշինեմ, ինչ-
պէս որ յարմար գայ, և ամեն ինչ ձեզ կ'իմացնեմ։

ԳԼՈՒԽԵՐ

Երեխ և լուսնի վերջի խաւարումները ոչինչ բարի բան
չեն գրչակում։ Թէպէտ բնական օրէնքների դիտութիւնը
կարող է նոցա այս կամ այն մեկնութիւնը տալ՝ տակայն սո-
րանով նոցա հարուածները բնութեան վերայից չեն վերա-
նար։ Աէրը ցամաքած, բարեկամութիւնը պաղած, եղբայր
եղբօր դէմ է ենում։ քաղաքներում խռովութիւն, դիւղե-
րում երկպառակութիւն, պալատներում գաւ։ Հօր ու որդու
մէջ եղած կապը խղվում է։ Իմ անաստուած որդուս վերայ
այս գուշակութիւնները կտանալուեցան։ սա—որդին է Հօր
դէմ ելած։ Թագաւորն օրէնքից գուրս է ենում։ սա—հայրն
է որդուն դէմ։ Մեր լաւ օրերն անցան զնացին։ “Նենդու-
թիւն, խարդախութիւն, գաւ և ամենակործան կարգագրու-

թիւններ հանսապաղ մեղ հալածում են մինչեւ գերեզմանի դուռնունդ:—Եգմունդ, այն թշուառականին պիտի գտնե՞ս: Վեզ վես չի հասնիր. ջանք մի՛ խնայեր:—Եղնիւ, բարեհոդի Աէստն էլ արտաքսուած: Նորա յանցանքն է արդարամտութիւն: Առսկալի՛ է սոսկալի՛:

(Պատճ Է):

ԵՐԱՐՈՒՄ

Եյս ամենն աշխարհի պարտակիր յիմարութիւններն են: Մեր բաղդն հինց որ ծուռ է բուռնում—որ յաճախ պատահում է մեր վարքի վատութիւնից—սկսում ենք մեր զբժբագութեան մեղքը բարդել արեւին, լրւսնին, աստղերին վերայ, որպէս թէ մենք ապիրատ ենք լինում հարկաւորապէս. յիմար՝ երկնքի հրամանով. ստահակ, գող և դաւաճան ենք լինում երկնադունդների զօրութեամբ. հարքեցող, խարեբայ և պղծագործ՝ մոլորակների անդիմազրելի ազգեցութեամբ. և վերջապէս ի՞նչ չարիք էլ որ գործենք՝ բոլոյն աստուածային ակնարկութեամբ են: Բողարսածի մի զարմանալի հնարք՝ իւր անսուակութիւններն աստղերին վերայ բարդելու: Հայրս մօրս հետ պառփեցաւ վիշապի պոչին տակ և ես մեծ արջին տակ աշխարհ եկայ—սուրանից հետեւում է, թէ ես կոշտ ու վաւաշ եմ: Հրամե՛լ էք: Ես նոյնը կլինեի, եթէ տիեզերքի ամենաիշյա աստղն էլ շողօղած լիներ ապօրինի յղութեանս անկողնին վերայ: Եգգարլ...:

(ԵԳԳԱՐ ՆԵՐ Է ՏՐԵԿԱՅ):

(Երանցին): Եւ յանկարծ նա այսուեղ ինչպէս մի հին կատակերգութեան վախճանը: Եմ գերս պիտի լինի յուսահատ մելամաղձութիւն. և հառաջանք, Իէզլ'ամցի Տոմին պէս:— (Բարձր): Ո՞հ, այդ խաւարումներն երկարառակութիւններ են գուշակում: Քա, սօլ, լ'ա, մի¹⁾:

2) Ըեկապիր դիտմամբ է գրեւ այսուեղ ձայների այս տարօրինակ յաջորդութիւնը Երաժշտութեան վերայ գրող արեղաներն ասում են «mi contra fa est diabolus» (մի՛ ֆ այ ի հանդեպ՝ սատանայ է): Եդմունդ ընկնելով նոյն հոգեկան դրութեան մէջ ինչպէս հայրն, որ խօսում էր ամեն տեսակ խառնակութիւնների մասին՝ նոցա համեմ մատումէ այս ձայների աններդաշնակութեան հետ: — Կամ թէ, այս տարօրինակ յաջորդութիւն ունեցող ձայները նորա հոգեկան դրութեան արտացայտութիւններն են:

ԵՐԳԱՎՐԾ

Խոչչպէս ես, Եղմունդ եղբայր, ի՞նչ խոր մտածմունքների մէջ ես ընկղմել:

ԵՐԳԱՎՐԾ

Եղբայր, մտածում եմ այն գուշակութիւններին վերայ, որ մի քանի օր յառաջ կարդացի այս նոր խաւարումների մասին:

ԵՐԳԱՎՐԾ

Խոչ լաւ բանով ես զբաղուած:

ԵՐԳԱՎՐԾ

Հաւատացնում եմ քեզ ինչ որ այնուեղ զբուած են՝ դժբաղաբար բոլորը կատարվում են. օրինակ, անքնական կը-ռիւներ որպիների և ծնողների մէջ, ժանոտախտ, սով, հին բա-րեկամութիւնների քակտում, պետութեան մէջ երկպառակու-թիւն, սպառնալիք և չարամաղթութիւն թագաւորի և իշ-խանների դէմ, անշիմն կասկածութիւն, բարեկամների ար-տաքսում, զօրքերի ցրում, պսոկի քակտում. . . որ մէկն տսեմ:

ԵՐԳԱՎՐԾ

Պաղօւց է որ աստեղագիտութեան աշակերտել ես:

ԵՐԳԱՎՐԾ

Դու ինձ ասաւ---Հօրս ե՞րբ ես աեսել վերջին անգամ:

ԵՐԳԱՎՐԾ

Երեկ երեկոյ:

ԵՐԳԱՎՐԾ

Ճետը խօսեցա՞ր:

ԵՐԳԱՎՐԾ

Եյո, ամբողջ երկու ժամ:

ԵՌԱՄՈՒԵՐ

Սիրնվ բաժնուեցաք միմեանցից: Նորա խօսակցութեան մէջ կամ երեսին վերայ ոչինչ գժգոհութիւն չնկատեցի՞ր:

ԵՌԳՎԵՐ

Վաճառկին:

ԵՌԱՄՈՒԵՐ

Կաւ միտքդ բեր, ի՞նչ կերպով նրան վերաւորել ես, և, քեզ ինդրում եմ, աչքին մի երեխը առժամանակ, մինչեւ նորա բարկութիւնն իջնէ, այժմ այնպէս զայրացած է, որ մահովդ հազիւթէ գոհ լինի:

ԵՌԳՎԵՐ

Թշուառականին մէկը վերաս բամբասած կլինի:

ԵՌԱՄՈՒԵՐ

Ես էլ հէնց այդ եմ կասկածում: Խնդրում եմ քեզ որ նորանից հեռու մնաս, մինչեւ զայրոյթն հովանայ, և, սիրելի եղբայր, գնանք իմ բնակարանս. ես քեզ այնտեղ կօգնեմ, որ հօրս խօսակցութիւնն ինքնին լսես: Խնդրում եմ, գնա, ահա բանալին. երբ դուրս գալու լինիս՝ զինաւորուած ել:

ԵՌԳՎԵՐ

Օքնաւորուած, եղբայր:

ԵՌԱՄՈՒԵՐ

Քեզ բարի խորհուրդ եմ տալիս, եղբայր: Այս, զինաւորուած: Եթէ քեզ գէմ չար զիտաւորութիւններ չկան՝ ես մարդ չեմ: Ինչ որ քեզ պատմեցի՞ իմ տեսածիս ու լսածիս համեմատութեամբ իմաստ աննշան է և շատ հեռու իսկական սարսափելի տեսալանից: Ազաջում եմ, գնա:

ԵՌԳՎԵՐ

Այս հանելուկը շնոր կը բացատրիս:

ԵՐԱՄՈՒՆԴԻ

Եյս ամենին մէջ ես քեզ կօգնեմ: (Գնոում է Երդառ):
 Բարեմիտ է հայրս եղբայրը՝ ազնիւ,
 Եւ այնչափ բարի, որ մըտքիցն երբէք
 Ասոկած չէ անցել: Դիւրին կը լինի
 Իմ խաղս այս յիմար ազնըւութեան հետ:
 Տեսնում եմ ելքը: — Եթէ ոչ ծընունիս՝
 Գէթ խարէնութիւնս կը տայ ինձ երկիր:
 Ի՞նչ որ ինձ օդնէ՝ այն է իմ աւարս:
 (Գնոում է):

ԵՐՈՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Մի սենեակ Ալ'բանի դքսի պալատում:
 Գլուխիթի՛ և ՈՍՎԱՐԻ ներս են մտնում:

ԳԱՅՆԵՐԻ

Յիլաւի՞ հայրս զարկեց սենեկապետիս այն պատճառով,
 որ սա նորա խեղկատակին նախատել է:

ՈՍՎԱՐԻ

Եյս, ամիկին:

ԳԱՅՆԵՐԻ

Դիշեր ու ցերեկ տանջում է նա ինձ:
 Ժամ չէ անցնում, որ անվայել գործով
 Զը վըզգովէ մեզ: Զեմ կարող տանել:
 Ըլուայլացել են նորա ասպետներն,
 Իսկ ինքը մեզ դէմ քըսթմընջում է միշտ
 Ոչինչ բանի վրայ: — Երբ որսից գառնոյ՝
 Մօտը չեմ զընար. Հիւանդ է, ասէք:

Լաւ կանեք՝ թէ դուք նախկին ձեր փոյթը
Քը չացնեք: Ես եմ պատասխանատուն:

ԱՍՎԱԾՎ

Գալիս է, ախին, լըսում եմ ձայնը:
(Որևէ ժողով Էւմ Երևան)

ԳՈՐԾՎԻՒՄ

Յոյց տուեք նեղացած ձեզ, ինչպէս գիտեք,
Նցնն և միւսները: Ա-ի թէ խօսք բացուիր:
Այստեղ չէ հաւառում քոյրիս թող երթայ.
Լաւագոյնն այնտեղ չի գրաներ, գիտեմ:
Այս կէտում քոյրս էլ ինձ պէս է մտածում,
Եւ խորհրդիս պէտք չունի: Օառամեալ
Ռուր, որ ուզում է իշխալ թէպէս զուրի
Խշանութիւնից: Յիրաւի, զառմած
Յիմարներն, ասես, արզաց են գառնում:
Պէտք է նոցա սաստ, յանդիմանութիւն
Փաղաքշանկի տեղ երբ յանցանք գործեն:
Ենչ որ սասցի ըսմոռանաք:

ԱՍՎԱԾՎ

ԱՀ:

ԳՈՐԾՎԻՒՄ

Ասպետներին պաղ երես ցոյց աըւեք:
Սորանից ինչ էլ պատահի՞ հոգ չէ:
Նցնը պատուիրեք ընկերներիդ ևս:
Այս առիթ կառնեմ հետը խօսելու,
Որ ուզում էի: Ճէնց այժմ իմ քոյրիս
Նամակ կը գրօնի, որ նցն ուղղութեամբ
Վարուի: Ճողացէք ճաշը պատրաստել:
(Գառա-Տէն):

ԶՈՐՐՈՐԴԻ ՏԵՍԱՐԱՆ

Ո՞ի դաշլիճ նոյն պալատում: Ալիք ներս է մոնում ծպտեալ:

ԱԼՅԱՏ (Օպպանովն նայելով)

Եթէ յաջողիմ խօսակցութեանս ձևն
Ու ձայնըս փոխել կարող կը լինիմ
Հասնիլ նախազրեալ իմ նրապատակիս,
Որի համար իսկ գէմքըս ծրապեցի:
Եյժմ, արտաքսուած Աէնտ, երբ կարողանաս
Ծառայել այնտեղ, ուր գատապարտ ես՝
Կը աեսնէր քո տէրդ, որին դու սըրտանց
Սիրում ես՝ թէ քեզ շատ գործ կայ այստեղ:
(Ուռչ ժողով. Իիր, ԱՍՊԵՏՆԵՐՆ
և Շքախոհիսրը նէրս էն հպնում):

Լ. Բ.

Մի վայրկեան ճաշը չուշացուի: Ասացէք շուտով պատ-
րաստեն: (Եւանձնից մէկը գնումէ: Աէնուն):
Ե՛, դու ի՞նչ մարդ ես:

ԱԼՅԱՏ

Մի մարդ եմ, տէր:

Լ. Բ.

Ի՞նչ բան գիտես: Մեղանից ի՞նչ ես ուզում:

ԱԼՅԱՏ

Գիտեմ երեկը այնպէս՝ ինչպէս որ եմ: Հաւասարմու-
թեամբ ծառայել նորան, որ վերաս վատահումէ. սիրել նրան,
որ աղնիւ է. յարաքերութիւն ունենալ նորան հետ, որ իս-
լացի և սակաւախօս է. գատաստաններից վախնալ. կոռւիլ
այնտեղ ուր չկայ ուրիշ հնար. ամենեին ձուկ չուտել¹⁾):

1) Եղիսաբեթ թագուցու ժամանակ պապականներն իրաւամբ համարվումէին կառավարութեան թշնամիներ. իսկ ձուկ ուսելը համարվումէր նշան պապականուա-
թեան. սորանից առաջ եղաւ թէ «աս մի ազնիւ. մարդ է և ձուկ չէ ուտում», այսինքն
նա տէրութեան բարեկամ է և բողոքական:

Լ.Բ.Պ

Ո՞վ ես դուն:

ԱլշաՏ

Ըստ աղնիւ և բարեմիտ մեկը և թագաւորին չափ
աղքատ:

Լ.Բ.Պ

Եթէ դու, իբրև հոգածակի, նոյնչափ աղքատ ես, որչափ
նա, իբրև թագաւոր՝ ձիշտ որ բաւական աղքատ ես: Ի՞նչ ես
ուզում:

ԱլշաՏ

Մի ծառայութիւն:

Լ.Բ.Պ

Ում ես ուզում ծառայել:

ԱլշաՏ

Չեզ:

Լ.Բ.Պ

Ճանաչնում ես դուն ինձ, բարեկամ:

ԱլշաՏ

Ու բայց կայ ձեր իերապատճերին մէջ մի բան, որին եւս
ոխոնդ Տէր կոչէի:

Լ.Բ.Պ

Ի՞նչ այդ:

ԱլշաՏ

Մհծութիւն:

Լ.Բ.Պ

Ի՞նչ ծառայութիւններ կարող ես անել:

ԱԼՅՈՑ

Ղաւ կարող եմ գաղտնիք պահել. ձի հեծնել արագ
վազել. մի հետաքրքրական վէպ կիսկատար սլատմել և պարզ
պատռւելներ կատարել զիտցածիս պէս: Կնչ բանի որ պէսպ
են գալիս մարդիկ՝ ևս այն կարող եմ անել Ղաւագըն յաս-
կութիւնս է փութաջանութիւն:

Լ.Ի.Բ.

Քանի տարեկան ես:

ԱԼՅՈՑ

Եյնչափ փոքր չեմ, որ մի աղջկի երգը լսելով ներան
սիրահարուիմ, և ոչ էլ այնչափ ծեր, որ առանց ոչ մի բանի
հեաը կապուիմ: Քառասուն և ութը ծալել եմ:

Լ.Ի.Բ.

Մօսս եղեր և ինձ ծառացիր: Եթէ ձաշեց յիտոյ էլ գու-
խնձ այսպէս հաճելի երեկոյ՝ էլ զիւրաւ չնկք բաժանուիր:
(Ըստինին). Եյ, ձաշ: Ուր է ծաղրածուս, խեղկատակո:
(Ըստինին Թինին). Գնա խեղկատակիս կանչեր. (Գնու-է է).

ՈՍՎԱՌԴ ՆԵՐ է հոնու-:

Եյ, բարեկամ, դուստրս նոր է:

ՈՍՎԱՌԴ Դ

Ներեցէք ինձ, որ... (Գնու-է է):

Լ.Ի.Բ.

Կ՞նչ մոմոռում դա: Յետ կանչեցէք այդ ախմարին:
(Մէ տանի տապէտ գնու-է է):
Խեղկատակս նոր է: Քնչէլ էք դուք, ինչ է: (Ասովէտը
դաղին է): Եշ, այն ախմարն նոր մնաց:

ԸՆՊԵՏ

Ըսումէ, թէ ձեր դուստրն առողջ չէ:

Լ.Ի.Բ.

Կնչու այն կոպիտը յիտ չդարձաւ, երբ ես կանչեցի:

ԱՍՊԵՏ

Տէր, նա բացէ իրաց ասաց, թէ չէ կամենում:

ԼԻՔ

Թէ կամենում:

ԱՍՊԵՏ

Տէր, չդիտեմ պատճառն ինչ է. բայց ինձ երևում է, թէ Զեր Մեծութեան այժմ այն արժանաւոր պատիւն ու սէրը չեն ցոյց տալիս, ինչ որ յառաջ ևս նկատում եմ, որ քաղաքավարութիւնից շատ պակասել են թէ սպասաւորները թէ դուքսն և թէ Զեր դուստրը:

ԼԻՔ

Հը! Կարծում ես դու:

ԱՍՊԵՏ

Եղաջում եմ Զեզ տէր, ներեցէք ինձ, եթէ սխալուեցայ. սակայն ծառայական պարտաւորութիւնս ստիպում է ինձ խօսիլ երբ Զեր Մեծութիւնն արհամարհուած եմ տեսնում:

ԼԻՔ

Դու յիշեցնում ես ինձ իմ սեփական հասկացածս միայն: Մի քանի ժամանակից ի վեր մի շատ պաղ անհոգութիւն եմ նկատել որ ևս աւելի վերագրում եի իմ կասկածութեան, քան թէ յայտնի դիտութիւների և չար մտքի: Յետոյ այդ լաւ կտեսնենք: Բայց խեղկատակս նուր է: Երկու օր է նրան չեմ տեսել:

ԱՍՊԵՏ

 Սղբեցութեան տակ գահ են բարձրանում—
 Որ միանդաման Գաղղից դէտելն
 Ու լըբաններն են: “Նոքա լաւ տեղեակ
 Են մեր զըբութեան—այն ատելութեան,
 Որ զըքսերին մէջ կայ, ծանըր լըծին,
 Որ ծեր արքայի վեզը կապեցին,
 Եւ գեռ աւելի ծանրակշիռ ուրիշ
 Գործերի, որոնց թէրեւս սոքա
 Լոկ հետեւանքն են: Տայց ճրշմարիտ է
 Առ որ մի բանակ Գաղղիայից այս
 Բաժանեալ աշխարհն է գալիս: Երդէն
 Օդուելով նա մեր անհոգութիւնից՝
 Ոտք է դրիլ մեր լաւ նաւահանգիսաներն,
 Եւ շուտով յայտնի կը պարզէ զըբօշն:
 Լըսեցէք ուրեմն ինձ. եթէ վերաս
 Վշուահելով շուտ Գուվը ուղեւորիք՝
 Եյնակը ձեղանից մէկը շնորհակալ
 Կըլինի, երբոր հաւասարեաւ պատմէք,
 Խնչ անտանելի սասարիկ վըշաերի
 Երքայն ենթարկուած է: Ես թէ զըբութեամբ
 Եզնըւական եմ և թէ արիւնով,
 Եւ այս պաշտօնը ձեզ հաւատում եմ
 Երբեւ ինձ ծանօթ մարդի:

ՀՍՊԵՏ

Այս մասին

Դեռ կըխօսինք:

ԿԵՇԵՏ

Ոչ հարկ չէ: Որպէս զի
 Վշուահիք վերաս, թ'արտաքին ձեից

Կատ արժէք ունիմ՝ բացէք այս քըսակն
Եւ մէջինն առէք: Երբ Առագելային
Տեսնէք, (ևս վըստահ եմ, որ կը տեսնէք),
Յոյց արւէք նէրան այս մատանին. Ձեզ
‘Նէ կասէ, ով էր ձեր ընկերն, որին
Զէք ճանաչում այժմ:—Զար մըրրիկ:—Գընամ
Վլայն զըտնելու:

ԱՍՊԻՏ


Չեռք առւէք, տէլ, այլ եւ
Կահլիք չունի՞ք:

ԱՀՅԱՏ

Միայն մի քանի

Կարեսր խօսք, բայց կարեսրագոյնն
Է արքայն զըտնել Փընտոհցէք նըրան
Վյդ կողմն, ևս՝ այստեղ: Ով որ նախ զըտնէ
Թող ձայն տայ միւսին: (Գնում էն առարեւը իսպան):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ



Գիշեր: Մի ուրիշ վայրի գաշտ: Մըրիկը շա-
րունակվում է:

Այս և Խեղիսթնի մտնում են:

ԼԻՔ

Ը ընչեցէք հողմութիւն:

Մինչև այտերդ պայթին՝ ընչեցէք:
Սահանք, փոթորիկ, հոսեցրէք ուղևերդ,
Մինչև որ ծածկուին խաչ ու զըմբէթներն:
Դուք խորհրդերագ ծըծըմբային հրեր,
Կաղնին ջախջախող շանթ ու կայծակին
Յառաջընթացներ, ոն, շինեցուցէք
Վլեսր մազերս: Եւ գու, որոտում

Եմենակործան, խորտակիր այս մեծ
Եշխալիհագունդը. ջաղխիր բընութեան
Բողոք կաղապարն. միսնգամ ընդ միշտ
Ֆընջեր համօրէն սերմելն, որոնցից
‘Օընունդ է առնում ապերախտ մարդը:

ԽԵՂԱԿԱՏԱԿ

ԱՇ քեռի, մի չոր տնի մէջ պալատական խաչլուայի
ջուրն աւելի լաւ է, քան թէ բացօթեայ տեղում այս անձրելք:
Դարձիր, իմ քեռիս, և աղջիկներիդ զթութիւնն հայցիր:
Եյս այն տեսակ գիշեր է, որ չէ խնայում ոչ յիմարին և ոչ
իմաստունին: (Ուստահամարութիւն):

ԼԻՐ (Աւելի դէպի երես):

Գոռա, փոթորիկ, որչափ շունչ ունիս.
Տեղացիր, անձրեւ, փայլատակիր, հուր:
Թօն, հողմ, որոտ, հուր իմ զըստրերըս չեն:
Տարերք, չեմ դատում քեզ իբր ապերախտ.
Թագաւորութիւն երբէք չեմ տըւել
Զեզ, որդի կոչել չեմ: ‘Դուք չունիք պարտք
Ինձ հնաղանդելու: Կաշկանդեցէք ինձ
Զեր խիստ կատակով: Եհա ձեր ըստրուկն
Կանգնած եմ, խեղջուկ մի ծեր, վըշացած,
Տըկար, նախատուած:—Բայց կոչում եմ ձեզ
‘Նըւաստ ծառաներ, որովհետեւ դուք,
Միացած երկու անարդ դըստրերին՝
Երկնային զէնքով պատերազմ բացիք
Սորա նըման ծեր և սպիտակափառ
Գըլիի դէմ: Ուշւ ոչ, ատելի է այս:

ԽԵՂԱԿԱՏԱԿ

Ով որ տուն ունի, գլուխը գնելու համար՝ նորա զլուխը
պատսպարուած է:
Ով որ զըլիսին համար չունի պատըսպարան,
Բայց կամենում է լաւ հագուստ կարել՝

Եա կըկորցնէ շուտով զըլուին և ամեն բան:
 Ծատ մուրացիկներ այսպէս են արել:
 Ով որ ոտքի մատերին
 Ընումէ այն՝ ինչ անելու էր սըրտին՝
 ԱՇԽ կը կանչէ նա ոտքի բըշտերից,
 Քունը կը կըտրի նորա աշքերից:
 Վասն զի գեռ մի գեղեցիկ կին չէ ծնել որ հայելու
 առջեւ չկոտրտուի:

ԼԻՊ

Այս, կամենում եմ համբելութեան
 Օրինակ տալ էլ չեմ ուզում խօսիլ:
 (ԿԵՆՏ ներ է հանում):

ԱՅՆԱՑ

ՈՎ կայ այդտեղ:

ԽԵԴԱԿԱՏԱԿ

ՈՎ—մէկ իշխան և մի գեղջուկ այն է՝ մի դիտուն մարդ
 և մի խեղկատակ:

ԱՅՆԱՑ

ՈՇ, այսո՞ղ էք դուք, տէր: Գիշեր սիրող
 Սրարածներից ոչ ոք չէ սիրում
 Այս տեսակ գիշեր: Զայրացած երկինքն
 Սարսափ է ձրդել խաւարաշըրջիկ
 Գաղաններին վրայ և որջում փակել
 Զեմ յիշում կեանքումս այսպէս կայծակի
 Ծանթեր, այս տեսակ աչեղ որոտում,
 Հողմի մըոքնչեւն և տիղատարափ
 Անձրեւ: Մարդկային բնութիւնն չէ կարող
 Տանել այս տանջանքն և արհաւիրքը:

ԼԻՊ

Այն աստուածներն, որ մեր զըլիսին վերայ
 Եշեղ որոտումէն՝ թող փընտուն այժմ

Իրանց թրշնամիքն:—Դողա՛ դու, թրշուառ,
Որ արդարութեան դատից ծածկում ես
Մեղքերդ սրտիդ մէջ: Երիւնաշեղ ձեռք,
Պահուիր նոյնավէս դու երգմնազանց, և դու,
Կեղծաւոր, որ մի ազգապրղծութիւն
Եռաքինութեան դիմակով ծածկել
Ես: Թախջախուիր դու աշի ցընցումով,
Դաւող ապիլատ, որ, իբրև ընկեր,
Դարան ես զբնում մարդկային կեանքին:
Դաղանի ոճիլներ, պատուցինք ձեր քօղն
Եւ այս սոսկալի դատաւորներից
Ծանորհք հայցեցէք: Եսկ ես՝ կըրում եմ
Եւելի չարիք, քան թէ գործել եմ:

ԱԼՅԱՑ

Ո՛հ, գըլխաբաց էք: Դմ բարի արքայ,
Մօտ տեղ մի հիւղ կայ. նա ձեղ մըրբիկից
Կը պատըսպարէ: Հանդշեցէք այնտեղ,
Մինչեւ ես երթամ այն դաժան տունը,
Եւելի դաժան, քան պատի քարերն—
Որ հէնց նոր, երբ ձեղ փընտռում էի ես՝
Ինձ ներս չընդունեց—ստիպմամբ մի ժըլատ
Հիւլասիլութիւն ձեղ համար այնտեղ
Ըստանամ:

ԼԵՐ

Խելքըս խառնութիւն է սկըսում: (ԽԵՂԻՊՊԱՀԻՆ)
Եկ, տըլաս. ի՞նչ ես անում, սիրելի
Տըլաս: Մըրսում ես: Ես էլ եմ մըրսել: (ԿՀԱՐԵՆ)
Ուր է այն յարդը, բարեկամ: Պէտքի
Երտեստն հրաշապէս ներդործում է. նա
Գըձուձ բանելին արժէք է տալիս:
Գընանք այն հիւղը:—Դու խեղճ խեղկատակ,
Սըրտիցըս միացն մի կըտոր մընաց
Ինձ, և այն էլ քո վերադ է ցաւում:

ԽԵՂԿԱԾՈՒ

Ով որ փոքր ինչ խելք ունի զըլլսում
Հող չէ անում հողմից անձրևից.
Բազգի բերումից դոհ է լինում:
Վասրն զի անձրև ամեն օր էլ է գալիս:

ԼԵՐ

Եյլպէս է, բարի տղաս: (Կէնդին): Մեղ այն հիւղն ա-
ռաջնորդիր: (Լէր և Կէնդ գնում էն):

ԽԵՂԿԱԾՈՒ

Փառաւոր գիշեր է, որ անառակ կնին էլ կարող է պա-
ղեցնել: Բայց ևս գնալուց յառաջ ուզում ևմ մէկ էլ մարդա-
րէանալ:

Քահանաներն երբ խօսք խօսքի վերայ բարգեն,
Գարեջըին մէջ եփողեերը ջուր շատ խառնեն,
Եզնըւականն երբ խորհուրդ առյ գերձակին,
Ոչ հերձուածողն, այլ կընամոլներն այլուին,
Դատաւորներն երբ խօսին շխառակ,
Սսպիս ու մանկլաւ էլ չը լինին պարագի տակ,
Երբ լեզուներն էլ չը բամբասին,
Ճարպիկ գողելն դրապան չը կըտրեն,
Երբ վաշխառուն դաշտում համրէ խւր փողը,
Երբ տաճարներ շինեն բոզն ու խօսք շինողը՝—
Եյն ժամանակ տէրութիւնը Ելքիոնի
Սարսափելի շրփոթութեան մէջ կընինի:
Ով ապրի, կը տեսնէ, ժամանակ կը գայ,
Ու ոտքով քալել սովորութիւն կը դառնայ:

(Պառ-Տէ):

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԳԼ'ՈՍԹԷՐԻ ամրոցում:

ՎԼ'ՈՍՏԵՐ և էֆիլինի ներս են մտնում:

ԳԼ'ՈՍՏԵՐ

Եշտ, Եզմունդ այս անաստուած գործն ինձ բնաւ համելի չէ: Երբ նոցանից հրաման խնդրեցի նորա մասին հոդ տանելու՝ նոքա ինձանից կարծեցին սեփական տնիս վերայ ուռնեցած իրաւունքս էլ և իրանց անհաշտ վրէժխնդրութեան սպառնալքով ինձ արգելեցին նորա մասին խօսիլ նորա համար խնդրել և որևէ կերպով նորան օգնութիւն անել:

ԷՇՄՈՒԱՌԵՐ

Ըստ խիստ ու վայրենի վարմունք է:

ԳԼ'ՈՍՏԵՐ

Խօսքը մեր մէջ մնայ, երկու գքսերին մէջ երկարառակութիւն կայ. բայց կայ սորանից վատ մի բան էլ: Երեկ երեկոյ ևս մի նամակ ստայայ . . . այս մասին խօսիլն իսկ վաանգաւոր է: Նամակը սենեակումն պահեցի . . . : Թագաւորի այս նեղութիւններին վրէժխնդրութիւն պիտի պահանջուի: Մի բանակ արգէն մեր երկիրը ուաք է դրել: Մենք պէտք է թագաւորի կողմն անցնինք: Ես զնում եմ նրան փնտուելու և ծածուկից օգնելու. իսկ դու գնա գքսին խօսակցութեան բըռնիր, որ նա իմ խնամքներս չնկատէ: Եթէ ինձ հարցնէ — ես հիւանդ եմ և պառկած: Եթէ ինձ պէտք լինի մինչև իսկ մեռնիլ — որ և ինձ սպառնացան նոքա — սակայն ևս պիտի օգնեմ իմ ծերունի տէրիտ և թագաւորիս: Տարօրինակ բաներ պիտի պատահին, Եզմունդ, զդոյշ եղիր, խնդրում եմ: (Պընած է):

ԷՇՄՈՒԱՌԵՐ

Եյս մեծահոգի գործն և նամակը,

Եյդ խընամքն, որ քիզ արգելուած է՝ այժմ

Դըքսին կը յայտնեմ. նոյնպէս և նամակն:
Ու կարծեմ նորան ախորժ կը լինի:
Ես կը վաստակիմ հօրըս կորցըրածն,
Եյ՞, բոլորը, տարակոյս չըկայ:—
Օհրերն ընկնում են, նորերն են կանգնում: (Գնու-է է):

ԶՈՐՌՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Վայրի դաշտում մէկ հիւղի առջե:

Իիր, կի՞նք և Խեղկթակը ներս են մտնում:

Կի՞նք

Եշա այն տեղը. ներս մըտէք, արքայ,
Խիստ է զիշերի այս բըոնութիւնը.
Զէ կարող տանել նորան մեր բընութիւնն:

Լի՛

Թաղլ ինձ:

Կի՞նք

Տէր իմ, ներս մըտէք:

Լի՛

Ուզում ես

Ոի՞րտըս պատառել:

Կի՞նք

Իմ սիրոս մանաւանդ

Կը պատռեմ: Տէր իմ արքայ, ներս մըտէք:

Լի՛

Քեզ իխստ է թըւում՝ որ մինչ ոսկորներս
Թափանցում է այս կատաղի մըրբիկն:
Խիստ է քեզ համար: Բայց ուր մեծագոյն
Կըսկիծն է տիրում՝ փոքրագոյն հազիւ.
Չգալի է այնտեղ: Կըջից փախչում ես

Դու, բայց երբ փախուստգ առաջնորդէ քեզ
Դէպի զայրագին ծովն՝ դու կը նետուիս
Երջին բերանը: Երբ հոգին աղատ՝
Մարմինը փափուկ կը լինի: Հոգումն
Խղած մըրբիկը հանում է ինձնից
Ամեն ըզգացմունք, թողնում է միայն
Եմ մէջ յուղուածը:—Հարազատ որդւոց
Կակերախտութիւնն... Նոյնն է թէ բերանս
Խածատէ այս ձեռքն, վասրն զի նըրան
Կերտիրում է աս: Բայց վրբէժիշընդիր
Ուզում եմ լինել:—Ո՞չ չեմ ուզում լալ:—
Եյս տեսակ գիշերն ինձ վանել տանից: (Երվանդնայելլ):
Ենձրեիր դու. ևս կը տանեմ բոլորն:
Եյս տեսակ գիշելն:—Հոնեղան, Գոնէրիլ...
Զեր ծեր հօրն, որի զըթոտ սիրալ ձեզ
Տըւեց ամեն ինչ:—Ո՞չ, այս կէտումն է
Խելագարութիւնն:—Պէտք է խուսափել:
Բաւական է:

ԱԼՅՈՑ

۱۱۴

Այսպիսում եմ, մըտիր դու և հոգա քեզ:
Եյս փոթորիկն ինձ չէ թողնում խորհիլ
Եյն՝ որ աւելի պիտի առնջեր ինձ:
Բայց սակայն մըտնենք: (ԽԵԿԱՊԱՀԻՆ): Յառաջ դու
մըտիր,
Որդի, ով տընանկ աղքատ: Օ՞-ն, մըտիր:—
Ես դեռ կազօթեմ յետոյ կը քընիմ:
(ԽԵԿԱՊԱՀԻ ՏՊԱՆ-Ը Է հի-դը):
Ո՞վ մերկ թրշուառներ, ուր որ էլ լինիք
Դուք՝ ենթարկուած այս անգութ մըրբիկին—
Կաչպէս բաց զըլուխն, քաղցած ըստամոքսն
Եւ պատառոտուն դրնցութիները

Պիտի պաշտպանեն ձեզ մի այսպիսի
Եղանակից: Աշհ, այս մասին շատ քիչ
Եթ խորհում ես: Դեղ առ, ձոխութիւն,
Ըզգա միանգամ, ինչ որ ըզգում են
Եյս տընանկները՝ որ լիութիւնիցդ
Ողորմութիւն տաս նոցա և երկնի
Դու արգարութիւնն ապացուցանես:

ԵՐԳԱԿԱՐ (ՀԵՂԵԿ):

Կանգուն ու կէս, կանգուն ու կէս խորս:—Եղքատ Տոմ:

ԽԵՂԿԱՏԾԻ (ՀԵՂԵԿ ԴԱՐԱ ՔԱՅԵԼ)

Քեռի, ներս մի մանելո: Դե կայ այստեղ: Օկնեցէք,
օգնեցէք:

ԿԵՇՆՏ

Չեռքդ ինձ տուր:—ՈՎԿ կայ այդտեղ:

ԽԵՂԿԱՏԾԻ

Դե է, դե: Նա տառմ է, թէ անունն աղքատ Տոմ է:

ԿԵՇՆՏ

ՈՎԿ ես դուն, որ յարդին մէջ մրմռում ես: Դոնըս ել:
(ԵՐԳԱԿ ԴԱՐԱ է Քայլս խննի հադուսպուլ):

ԵՐԳԱԿԱՐ

Պընա: Չար ողին հալածում է ինձ:
Փըշտ մացառի մէջից շընչում է
Յուրս քամին: Պընա, յուրս անկողինըդ
Մըտիր և տաքցիր:

ԼԵՒ

Գոնեն ել ամեն բան

Դըստրերիդ տըւիր և այս օրն ընկար:

ԵՐԳԱԿԱՐ

ՈՎԿ ողորմութիւն կտայ աղքատ Տոմին, որին չար դեր
պտացրեց կրակի և բոցի միջով ծանծաղ և խոր տեղերում,
ճահիճների և մօրուաների վերայով: Նա նորա բարձին տակ

գանակներ զբեց, նստարանին տակ՝ չուան. ապուրին մեջ մը-
կընդեղ խառնեց: «Նա նորա սիրտը հպարտացրեց, որ աշխատ
ձիի վերայ նստաւ և չըրս մատնաշափ լայն կամուրջին վե-
րայ սկսեց արշաւել և աշխատիլ իւր ստուերը բռնելու, որին
դաւաճան էր համարում:—Աստուած հինգ զգայալանքներդ
պահպանէ:—Տուր միսում է: Օ՛ զօղի, զօղի, զօղի (արած-
ները կը պատճի): Աստուած քեզ պահէ փոթորիկներից, չար
աստղերից և ոսկրացաւից:—Ողորմութիւն արէք աղքատ
Տոմին, որին տանջում է չար ողին: Ա՛, ևս այստեղ նրան
կընեմ: ահա այնտեղ, և նորից այնտեղ և այնտեղ:

(Մը բանակը չարունակը է):

Ե.Ի.Բ

Դըստրիերն այս վիճակն հասցըրին նըստան:—
Իան ըլ պահեցի՞ր. ամեն ինչ տըւիլ:

Խ.Ե.Դ.Ա.Տ.Ա.Կ

Ոչ, այս զրպեակը գեռ պահեց, ապա թէ ոչ խայտա-
ռակութիւն կլինէր:

Ե.Ի.Բ

Խոլոր հարուածներն, որ ծըփուն օգում
Խիստ ճակատագիրն կախել է մեղքի
Վերայ՝ թող թափին դըստրերիդ դըլին:

Ա.Յ.Ա

«Նա դըստրեր չունէր, տէր իմ թագաւոր:

Ե.Ի.Բ

Լըսիր, գաւաճան . . . ոչինչ չէր կարող
Սյաքան զեղծանել բընութիւնն, բացի
Սպերախտ դըստրերն. այժմեան կարգն է այս,
Որ որդիներից ուրացուած հայրերն
Խրանց արիւնին մեջ կարեկցութիւն
Զըգըտնեն: Պատիմն արդար է: Աորա
Մարմիկց են սերուած պելեկան¹⁾ դըստրերն:

1) Պելեկան=հաւալսուն: Էդգար լժելով Լիրի վերջի խօսքը «պելեկան դըստ-
րերն»՝ նմանաձայնութիւն անելով՝ ասում է «Պելեկոկ նստել էր» և լու: Պելեկան օ-
տարազդի բառը պահեցի, որպէս զի յայտնի լինի Լիրի և Էդգարի խօսքերին մեջի
կապը: Պելեկոկ՝ զեի անուն է:

ԵՐԳԱԸՆ

Պիլլեկոկ նստել էր Պիլլեկոկ լեռին վերայ:— և ալլու, հալ-
լու, լու, լու:

ԽԵՂԱԿԱՏԵԱ

Եյս ցուրտ գիշերը բոլորիս էլ կիսենթացնէ:

ԵՐԳԱԸՆ

Զար թշնամուց զգուշացիր, ծնողներիդ հնազանդ եղիր,
խօսքիդ տէլին եղիր. մի երգուիր, մի խառնակուիր հարեւա-
նիդ կնին հետ, սիրուհուդ մի վարժեցներ շւայլ զարդարանք-
ների:— Տոմը մրսում է:

ԼԻՒ

Դուն նվէլ էիր:

ԵՐԳԱԸՆ

Մէկ աստիճանաւոր, գորող սրտով ու մաքով, որ հիւ-
սում էր սազերը, ձեռնոցներ էր կրում զլսարկին վերայ. սի-
րուհու կրքերին էր ծառայում և նէրա հետ խաւարի գոր-
ծեր կատարում. որ աւելի երգումներ էր արտասանում, քան
ուրիշ խօսքեր, և զթած երկնքի գէմյանդիման երգմազանց
էր դանվում. մէկը, որ քնում էր անառակութիւններ առա-
ջապրելով և զարթնում էր՝ որ նոցա գործադրէ:— Աս զինի
շատ էի սիրում և աւելի շատ՝ նարդի, իսկ սէրի գործում
գերազանցում էի մինչեւ իսկ սուլթանին: Արտով խարդախ,
ականջով՝ դիւրահաւան. ձեռքերս՝ արիւնալից. ծուլութեան
մէջ՝ խոզ, գողութեան մէջ՝ աղուէս, անյագութեան մէջ՝ գայլ
կատաղութեան մէջ՝ շուն, կողոպտելու մէջ՝ առիւծ:— Այսիր,
որ կների կօշիկին ճռճռոցը, մէտաքսէ շորերին խշխոցը խեղճ
սիրտ չփերին: Ուաքդ հեռի պահիր բողատուններից, ձեռքդ՝
կնի գոգնոցից, գրիչդ՝ վաշխառուներից, և չար ոգուն մի հա-
ւատար:— Յուրա քամին շարունակ փչում է մացառի մէջից.
նա հնչում է, մումիմ... զումիմ, հէյ, ի՛շ, ժառանգս, որ-
դիս, տրդաս, թող տուր նրան անցնի¹⁾: (Մընել շարունակ-
նում է):

1) Մի հին երգի կողը է:

ԼԵՐ

Լաւ էր հողը մանեիր, քան թէ այդ մերկ անդամներովդ
երկնքի այս զայրոյթին դէմ կանգնէիր: Մարդն, ինչ որ կայ՝
մյաքան է միայն: Լաւ նկատենք նրան: — Դուն ոչ մետաքս
շերասից ևս առել ոչ մորթ՝ փայրի գաղաններից, ոչ բուրդ՝
ոչ խարից և ոչ մուշկ՝ այծեամից: (Ձոց գալով Աէնաքին և իւղւ
կապահին): Եշա, այստեղ մենք երկքս կեղծ ենք. դու՝ բուն ա-
րարածն ես: Զագանուած մարդն ուրիշ ոչինչ է, բայց թէ մի
խեղճ, մերկ, երկոտանի անասուն, ինչպէս գուն ես: — Ճեռու,
վերագիր առարկաներ — Հանոււեցէք վերայիցս: (Ճանդերձը
Շպիտու-ճ է):

ԽԵՂԱԿԱՏՈՒԿ

Քեռի ջան, դադարիր խնդրեմ, այս՝ լող տալու գիշեր
չէ: Եյս վայրի տեղում մի փոքրիկ հուրը կնմանիր անառատ
ծերի սրտին — մի թեթև կայծ, մնացած մարմինը սառած:
Եյ, տեսէք, մի թափառական հուր մօտենում է մեզ:

ԼԵՐՎԱՐ

Օ՛, դա Գլեբբէրաջերբէտն է, չար դեր. նա շըջում է
կրակվածից մինչև ազլուսիոսը. նա է, որ աչքի լուսունցք է
բերում, շել է գարձնում, ապականում է խորին, աշխարհի
խեղճ՝ որդուն չարչարում է:

Երեք անգամ սուրբ Աշխողդ անապատներ շըջեցաւ,

Ինն ընկերով մի դե գըտաւ:

Ճըմամյեց դեին,

Որ մըսնի դեաին:

Երբան կապեց երգումով: —

Առլիր, դե, կորիր շուտով:

ԱՀԱՏ

Ի՞նչպէս էք, տէր իմ:

(ԳԼՈՒՍԵՐ ճ զահով ներս է ճանուճ):

ԼԵՐ

Ո՞վ է այս մարդն:

ԿԵՆՏԱՑ

ԱՅԴ ԹՎԵ է, ԹԱՐ Է.Ք ՎԻՆՏՈՎՈՒՄ:

ԳԼՈՒԽԵՐ

ՈՎՎԵ ՔՊԵ.Ք. ԱՆՌԵՆՆԵՐԸ Ի՞ՆՉ է:

ԵՐԳԵՐ

Աղքատ Տոմը, որ ուտում է գորտ, շերիփ, սողուններ,
Խլուրդ ու մողէսներ: “Նա, որ կատաղութեան ժամանակ, երբ
չար գել հալածում է նրան՝ իբրև աղցան ուտում է կովի
կու, քաւթար մուկ և սատկած շուն, և խմում է կանգնած
Ճախիճների վերայի կանաչ կապելուր:” Նա իջեանից իջեան
մտրակի հալուածներ է ուտում: Նա կապանքի մէջ է, պատ-
ժուած է, բանտարկուած: “Նա որ երեք վերարկու ուներ ու-
սին, վեց շապիկ կռնակին, ձին իւր տակը և սուրբ կողքին՝

Այժմ մուկ ու խրլուրդ և նրման կենդանիներ

Աղքատ Տոմն ուտում է եօթն երկար տարուց ի վեր:

Զգոյշ կաց ինձ հալածողից:—Լոփիր, Ամուկին, լոփիր,
չար թշնամի:

ԳԼՈՒԽԵՐ

Ի՞նչ, ձեր մեծութիւնը սոցա՞ գտաւ իւր ընկեր:

ԵՐԳԵՐ

Խաւարի իշխանն աղնըւական է:

“Նորա անունն է Մոգոյ և Մաշու:

ԳԼՈՒԽԵՐ (ԼԵՐԻ):

Մեր մարմինն ւ’արիւնն այնչափ վատացան,

Որ ծընողներին այժմ անարգում են:

ԵՐԳԵՐ

Աղքատ Տոմը մրսում է¹⁾:

1) Նո կարծում եմ, թէ երբ Գլուխէր ներս է մոնում, Եդգար վախենալով, որ նորանից չճանաչուի՝ սկսում է ամենախենթ բաներ գուրս տալ որպէս զի Գլուխէր նրան խենթ կարծելով՝ վերան ուշագրութիւն չդարձնէ: Բայց երեք Գլուխէր նորա ձայնից կամ գեմքից մի բան զգաց որ բնազդմամբ կրկին անդամ Եդգարի մասին յիշատակութիւն է անում այստեղ: Համեմատել Դ. Արարուած և. Տեսարան:

ԳԼՈՈՍՏԵՐ (Լեռնա):

Գընանք միասին: Պարտքս ինձ չէ թողնում
 Լըսել գըստրերիդ անգութ հրամանին:
 Թող ներանք սաստեն զըռները փակել
 Եւ ձեզ թողնել զոհ այս սե գիշերին:
 Ես վըստահացայ ձեր ետեւ գալու՝
 Որ ձեզ տանեմ տուն, ուրտեղ պատրաստ են
 Հուր և կերակուր:

Լ.Բ.Բ.

Թող նախ հարցնեմ այս
 Փիլիսոփային:—(Լ.Շ.Դ.Ա.Յ.) Ի՞նչ է որոտման
 Պատճառը:

ԱԼՅՈՒՏ

Բարի արքայ, լըսեցէք
 Սորա հրաւերին, տուն գնացէք:

Լ.Բ.Բ.

Այս թերայեցի ուսումնականին:—(Լ.Շ.Դ.Ա.Յ.)
 Ի՞նչ ուսում ունիս:

Լ.Բ.Բ.Բ.

Դևալածութիւն

Ճըժեցարդութիւն:

Լ.Բ.Բ.

Թողէք մի գաղտնի
 Հարցմունք անել ձեզ:

ԱԼՅՈՒՏ (ԳԼՈՈՍՏԵՐ):

Տէր, նըրան կրօկին
 Ստիպեցէք. Խելքը խառնուիլ է սկըսում:

ԳԼՈՈՍՏԵՐ

Կալող ես նըրան մեղագրել: Պըստրերն
 Իւր մահն են ուզում: ԱՇ, բարի ԱՇնար—

Նա ճիշտ էր ասում, խեղծ պքսորականն:
 Ասում ես, արքայն կորցնում է խելքը.
 Ես էլ բարեկամ, համարեա խնդթ եմ:
 Ես էլ մի որդի ունեի, որին
 Երժմ ուրանում եմ.—կեանքիս դաւ դըրեց
 Նա այս մօտ օրերս: Ես նըրան սիրում
 Եի, ոչ մի հայր այնպէս չէ սիրել
 Եւր որդուն: Ուզեղն ասելով՝ կըսկիծն
 Խելքը պըզտորեց: (Վրեիւ շարունակում է):—Ենչպիսի
 գիշեր:—(Լէտն)
 Աղաջում եմ ձեզ արքայ ...

Լ.Բ.Պ

Կարեկամ:—(Լ.Դ.Դ.Մ.Ք.): Գընանք, մեծ փիլեսոփիայ:

Լ.Դ.Գ.Ա.Բ

Տոմ միսում է:

ԳԼ.ՌԱՍՏԵՐ (Լ.Դ.Դ.Մ.Ք.):
 Կարեկամ: Հիւզըդ մըտիր, տաքացիր:

Լ.Բ.Պ

Մանենց ամենքս էլ: (Ո-պո-մ Լ.Դ.Դ.Մ.Ք. հիւզ հիւզ հիւզ էլ):

Կ.Հ.Ռ.Տ

Եյս կողմը, միլորդ:

Լ.Բ.Պ

Ոչ այստեղ, ես միշտ ուզում եմ մընալ.
 Փիլեսոփիայիս մօտ:

Կ.Հ.Ռ.Տ (Կ.Հ.Ռ.Տ.Ք.):
 Տէր, հաճեցէք,

Ար դայ այդ մարդն էլ:

ԳԼ.ՌԱՍՏԵՐ (Լ.է.տ.ն.):

Եռէք նըրան էլ:

*

ԿԱՅՆԸ (ԵՐԳԱՎԻՆ):

ՊԵՆԱՆՔ, բարեկամ, մեզ հետ եկ:

ԼԵՐ

ՊԵՆԱՆՔ,

Եմ աթենացի:

ԳԵՐՈՍՏԵՐ

ԵՐԺՄ լուռ կացէք:

ԼՅԴԳԵՐ

Ասվալդ մանկլաւիկն մութ աշտարակին
Մօտեցաւ, կանչել ըսկրսեց թիւ, փաշ,
Փուշ. անգլիական արիւն է հոտում: (Պատահ էն):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Մի սենեակ ԳԵՐՈՍՏԵՐԻ ամրոցում:

ԿԹԲՆՎԱՐ՝ և ԷԹՄՈՒԽԻ ներս են մտնում:

ԿՈՐՆՎԱՐ:

Յառաջ քան թէ իւր տունը թողնելո՛ ուզում եմ
կրէժս առնել:

ԼՅԴՄՈՒՐ:

Միլորդ, երբ մտածում եմ, թէ ինձ կարող են պարսա-
ւել որ հաւատարմութեանս զոհեցի բնութիւնը՝ սարսա-
փում եմ:

ԿՈՐՆՎԱՐ:

ԵՐԺՄ ես տեսնում եմ, որ եզրայրդ ոչ միայն իւր չա-
րութիւնից հօր մահն էր խնդրում, այլ և նրան այս գործե-
լու դրդեց հօրդ պատժապարտ ցածահոգութիւնն:

ԼՅԴՄՈՒՐ:

Արշակ սոսկալի է իմ վիճակս, որ ստիպուած եմ զղջալ
արդար լինելուս վերայ:—Եւս այն նամակն, որի մասին խօ-

սեցաւ, որը ապացոյց է, թէ նա դաղղիական կուսակցութեան համամիտ է: Ո՞վ երկինք: Եթէ այս դաւաճանութիւնը տեղի չունենար, կամ յայտնողը՝ ես չլինեի:

ԿՈՐԿԱՎԱՐ

Գնանք միասին դքսուհուն մօտ:

ԵՐՄՈՒՄԵՐ

Եթէ սորա բովանդակութիւնը ճշմարիտ է՝ շատ գործեր ունիք տեսնելու:

ԿՈՐԿԱՎԱՐ

Սուտ կամ ճշմարիտ՝ սակայն նա քեզ Պլոստերի կոմ շինեց: Իմացիր, թէ որտեղ է հայրդ, որ կարողանանք նըրան բռնել:

ԵՐՄՈՒՄԵՐ (Ըստանչին):

Եթէ նրան թագաւորին մօտ գտնեմ՝ կասկածն աւելի կմեծանայ: (Բարձր) Ես կշարունակեմ ձեզ հաւատարիմ մընալ որչափ էլ բուռն լինի կոիւը պարտքի և բնութեան մէջ:

ԿՈՐԿԱՎԱՐ

Քեզ ընծայում եմ բոլոր վստահութիւնս: Եմ սէրիս մէջ մի լաւադցն հայր կտանեա: (Պատահ էն):

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Պլոստերի ամրոցին մօտ ագարակի սենեակ:

Կլոստիր, Լիթ, Ավնժ, Խեղկատուր և Էֆֆլի ներս են մտնում:

ԿԼՈՍՏԵՐ

Լաւ է այստեղ քան բաց օդին մէջ: Ոիլով ընդունեցիք որչափից գայ՝ կաշխատիմ լաւացնել այստեղ ձեր դրութիւնը: Ըստով կվերադառնամ:

ԿԼՈՍՏ

Եորա հոգու բոլոր զօրութիւններն տեղի տուին յուսա-

Հատութեան. Թող աստուածները վարձատրեն ձեր բարեսըրտութիւնը:

(Պալուագէք գնում է):

ԵՐԵՎԱՐ

Գրատէրէտառյ ինձ կանչում է և ասում է, թէ Ներոն խաւարի լճում ձուկ է որսում: (Խեղիադակն) Եղօթք արս, անմեղ¹⁾), և չար թշնամուց զգոյշ կացիր:

ԽԵՂԿՈՒՏԸՆԻ (Լեռն):

Քերի ջան, ասա ինձ, յիմարն ազնուական է թէ ուամիկ:

ԼՅԻ

Թագաւոր է, թագաւոր:

ԽԵՂԿՈՒՏԸՆԻ

Ու մի ուամիկ է, որ ազնուական որդի ունի: Վասն զի յիմար է այն ուամիկը, որ իւր որդուն իրանից յառաջ ազնուական դարձած է տեսնում:

ԼՅԻ

Հագար ատրաշէկ շամիուր պէտք են ինձ,

Որ շըշան, խըրին նէրանց մարմիններն:

ԵՐԵՎԱՐ

Չար դեր կրծոտում է կոնակս:

ԽԵՂԿՈՒՏԸՆԻ

Յիմար է նա, որ հաւատում է ընտելացած դայլի հեղութեան, ձիի առողջութեան, տղայի բարեկամութեան և պոռնկի երդումին:

ԼՅԻ

Վարձուած է նէրանց դատի կը կանչեմ: (ԼԵՐԴՈՒՅՆ)

Դու այստեղ նըստիր, ուսեալ դատաւոր,

Եսկ դուն, իմաստուն, այստեղ:—Դէ, յառաջ,

Դուք, քած աղուէսներ:

1) Խեղկատակներին կոչում էին նաև անմեղ ինչպէս վկայումն Սորիգէնսոն և Պէլոն:

ԵՐԳԱՅԻ

‘Նայիցէք, ի՞նչպէս

Նա այդտեղ կանգնել վերաս է յառում
Վառվառ աչքերը:—Սիրունիկ տիկին,
Դատիդ ատե՞ն էլ սիրութառում ես դու:
Ի՞սսի, գետն անցիր, եկ ինձ մօտ:

ԽԵՂԱԿԱՏԱԼ

Նէրա մակցյկը ծակ ունի տակում,
Ի՞այց քեզ ասել նե չէ ուզում,
Թէ ինչու չէ գալիս քո մօտ:

ԵՐԳԱՅԻ

Չար թշնամին աղքատ Տոմին հալածում է սոխակի
ձայնով: Հոպղէնս Տոմի փորից գոռում է, որ երկու ձերմակ
ձուկ տամ: Մի՛ կոնչեր, այ սև հրեշտակ, քեզ համար ես կուր
չունիմ:

ԱԼԵՆՏ

Եյժմ ի՞նչպէս էք, տէր:—Մի՞ նայիք այդպէս
Եպուշ: Ուզում էք պառկիլ և հանգչել
Եյս բարձերին վրայ:

ԼԻՒ

‘Նախ դատը տեսնեմ:

Ի՞երէք վըկաներն: (ԵՐԴԱՐՔՆ) Դու, դատաւորի
Վերարկու հագածդ, նըստիր տեղդ, (ԽԵՂԱԿԱՏԱԼ) և դու,
Որ արդարութեան մէջ գործակից ես
‘Նորան՝ իւր կողքին: (ԽԵՂԱԿԱՏԱԼ) Մասնաժողովի
Անդամներից էք դուք: ‘Նըստէք նոյնպէս:

ԵՐԳԱՅԻ

Պէտք է արդար դատաստան կըտել:—
Ուրախ հովիւ, արթուն ես, թէ քնիլ
Ոչխարիկդ արտն է մըտել:
Ոիրուն բերանըդ մէկ անգամ թէ բանաս:

Ոչսարիդ նորից դու յետ կըստանաս:
Փի՛ս, փի՛ս. կատուն դորշագոյն է:

Լ.Ի.Բ.

Յառաջ սէրան դատեցէք: Աէ Գոնէրիլն է: Եյս պատ-
կառելի հտմաժողովին առջև ևս երգումնվ վկայում եմ, որ
սէ խեղճ թաղաւորին իւր հօրը դուրս արաւ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Յառաջ եկէք, տիկին, ձեր անունը՝ Գոնէրիլ՝ է:

Լ.Ի.Բ.

Նէ չէ կարող այս ուրանալ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ներեցէք, ես ձեզ նստարան կարծեցի:

Լ.Ի.Բ.

Իսկ միւսը՝ ահա՛: Իւր դաժան աչքերն
Երտայսյուռմ են սրտին կաղմուածքը:
Բըռնեցէք սէրան:— Օչէ՞նք, զէ՞նք, առւր, կըրակ.
Դաւ—ինչու նէրան թոյլ տըռիր փախչել
Խարդախ դատաւոր:

Լ.Ի.Գ.Վ.Բ.

Պահպանէ՝ Եստուած

Հինգ ըզգայարանքդ:

Ա.Հ.Ա.Տ.

Ո՞վ կարեկցութիւն:—

Եյն համբերութիւնն ուր է այժմ, որով
Պարծինում էիք յաճախ՝ թէ ունիք:

Լ.Ի.Գ.Վ.Բ. (Եւանջին):

Նորա պատճառով լըցվում են աչքերս,
Եյնպէս որ կարող է բացուիլ դիմակս:

Լ.Ի.Բ.

Նայեցէք, փոքրիկ շըներն էլ նցյնպէս—
Կայտառ, արի, չար—հաջում են վերաս:

ԵՐԳԱԿԱ

Տոմ կամենումէ զլուխը նոցա առջև ձգել: — **Դառւրս** կորիք, շնէր:

Թաէ ձերմակ-, թէ սեղունչ կոչուիս,
Թաէ թունաւոր լինիս կրծելիս,
Թաէ դամբո լինիս, քոթոտ, թէ որսկան,
Թաէ ընթացիկ, թէ բարակ կամ թէ կրոռան,
Թաէ ազիդ կրարած և թէ կըլոր պոչ
Տոմ կըստիպէ ձեղի՝ բառնալ հաջու դու:
Հենց որ զլուխս ձրգեմ առջենին՝
Բոլորը մէկէն թողննեն կը փախչին:

Հօ, հօ, հի՛, հի՛: **Գնանիք** տօնավաճառներն, շուկաներն ու վաճառատուններն: **Աղքատ** **Տոմ**, եղջեւրդ չոր է¹⁾:

ԼԵՐ

Այժմ Հուեղանին Ճեղքել: — **Տեսէք**, ի՞նչ է թխսել սրբախն մէջ: Ասյ մի այնպիսի ոյժ բնութեան մէջ, որ այս տեսակ կոշտ սրտեր արտաքերէ: (Լշտիտին) Զեղս պարոն, իմ հարիւր ասպետներիս մէջ եմ ընդունում: **Միայն** ձեր հանդիրձի ձեւն անախորժ է ինձ: Թերեւս դուք կասէք, թէ Պարսկաստանի ձեւն է այս, բայց սակայն փոխեցէք:

ԱԼՅՈՑ

Իմ թագտոր, պառկեցէք քննեցէք փոքր ինչ:

ԼԵՐ (Պատկեռ):

Աղմուկ մի՛ հանէք, աղմուկ մի՛ հանէք: **Վարադրյաները** քաշեցէք. համ այդպէս. համ այդպէս: **Վաղն** առաւօտուն ընթրիքի կնստինք: **Այդպէս**, այդպէս:

ԽԵՂԱԿԱԾԱԿ

Ես էլ ձաշին քննելու կդնամ:

(ԳԼՈՒՍԵՐ ներ է մասսած):

1) Եղիւրն, ինչպէս նաև այժմ արեւելքում՝ գործածում էին իւղ կամ ջուր պատշելու համար:

ԳԼՈՒԾԵՐ

Մօտ եկ, բարեկամ, նոր է թագաւորն
Եմ տէրս:

ԿԼՇՆՏ

Նա այստեղ է, բայց մի դիպէիք
Նորան—նա խելքը կորցրեց:

ԳԼՈՒԾԵՐ

Բարեկամ,
Գըքիր նըրան: Ես հենց նոր լըսեցի
Նորա կեանքին դէմ մի դաւազրութիւն:
Մի պատգարակ կայ պատրաստ. դի՛ր վերան
Եւ Դուքը ըշտապիր: Եյնտեղ կը գըտնես
Պաշտպան և պատիւ: Տէրիդ փախցըրու.
Աչս ժամ ուշացար՝ էլ նա կենդանի
Զի մընար, ոչ դուն և ոչ ոք նըրան
Պաշտպանողներից: Ճեռացիր, փախցրու
Եւ եկ ետեիցս, պաշտ և արագ
Ուղեկիցներ տամ:

ԿԼՇՆՏ (Նայելով նախորդին վերայ):

Պարտասեալ բնութիւնն
Եհա թրմրեցաւ: Կարող էր հանդիսան
Բալասան լինել խելքիդ վելքերին,
Որ անբուժելի կը դառնան՝ եթէ
Օգնութեան չըգայ խաղաղ ժամանակն: (ԽԵՐԱՊԱՅԻՆ)
Օգնիր ինձ տէրըդ տանելու: Պէտք չէ
Յետ մընաս դու:

ԳԼՈՒԾԵՐ

Շնուտ, Ճանապարհ ընկնենք:
(ԿԷՆՏ, ԳԼՈՒԾԵՐ և ԽԵՂԿԱՍԿԵՐ իրին դանում էն):

ԵԳՎԵՐ (Մէայն):

Երբ մեր մեծերը նցն չարիքն են կլում
Մարդ չի տըրտընջայ էլ իւր ցաւերին:

Ով որ չարչարվում է մենակ՝ նարան
 ՝ օտանր է չարչարանքն, որովհետև նա
 Բաղդ, ուրախութիւն է տեսնում իւր շուրջն:
 Բայց հոգին զիւրաւ յաղթում է ցաւին՝
 Երբ դըժբաղդութիւնն ունի իւր ընկեր:
 Ուրչափ իմ ցաւերս այժըմ զիւրատար,
 Թակթե են թըլում, երբ նոյն բնուին տակ,
 Որ թեքից գըլուխս՝ թագաւորն ընկծուած
 Եմ տեսնում: Թաշուառ է նա իրեւ հայր,
 Ես՝ իրեւ որդի: — Գրնա ասկից, Տոմ,
 Եյս մեծ անցքերին ուշագիր եղեր.
 Եւ խարէական կարծիքն, որով զու
 Դատապարտուել ես իրեւ դաւաճան՝
 Երբ քո գործերով փարատուի՝ և քո
 Պատիւդ նորոգուի՝ ապա քեզ յայտնիր:
 Թող ինչ ուզում է պատահի զիւրաւ,
 Միայն թէ արքայն ազատիր: Տիսնե՛նք: (Գառա՞ծ է):

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Գլ'ոստէրի ամրոցում մի սենեակ:
 ԿՈՐՆՎԱԼ, ՀԻԵԳԱՆ, ԳՈՆԵՔԻՆ, ԼԻՄՈՒՆԻ և ԾԱՓԱՆԵՐ ներս են մտնում:
 ԿՈՐՆՎԱԼ (Գառա՞ծէլէն):
 Ըուտով գարձէք ձեր ամուսնին մօտ. ցոյց տուէք նորան
 այս նամակն: Պաղղիական բանակն եղերքն է ելեւ: (Օտառա-
 նէքն) Պտէք այն ստահակ Պլ'ոստէրին: (Ո՞վ ունի ծառաներ
 դարձու նն ելու՞մ):
 ՀՈՒՅՎԱՆ
 Եյս ըոպէիս նրան կախել տուր:

ԳՈՐՆԵ՛ՐԻՆ
 Նորա աչքերը հանեցէք:

ԿՈՐՆԱՎԱՐ

Եյդ թողէք իմ բարկութեանս—Եզմունդ, մեր քոյրին
ուղեկցեցէք։ Ձեր ներկայութիւնն անյալմար է՝ երբ մենք
վրէժինդիր կլինինք դաւածան հօրիցդ։ Դքսին, որի մօտ էք
գնում՝ համոզեցէք, որ կարելի եղածին չափ շուտով պատ-
րաստուի։ Մենք էլ նոյնն անելու կփութանք։ Մեր արագ
ու ճարտար սուրհանդակներն մեր մէջ դործը կկարգադրեն։
Գնաք բարով սիրելի քոյր, գնաք բարով, Գլուստէրի կոմս։
(ՈՍՎԱԼԴ ներ է հանում):

Ի՞նչ, ուր է արքայն։

ՈՍՎԱԼԴ

Գլուստէրի կոմսը

Նըրան այստեղից հեռացրեց։ Գրանը
Հետոք միացան երեսուն և հինգ
Կամ վեց ասպետներ, որ փընտոռում էին
Նըրան, և բոլոն կոմսի մի քանի
Աւատներին հետ ուղի ընկան Դուկր,
Ուրտեղ—պարծենում էին նոքա—կըդրաննեն
Լաւ զմնաւորուած բարեկամներին։

ԿՈՐՆԱՎԱՐ

Զիեր պատրաստիր տիկինիդ համար։

ԳՈՒԵՔԻՒ

Մընաք բարով դուքս սիրելի և քոյր։

ԿՈՐՆԱՎԱՐ

Գնաք բարով, Եզմունդ։

(ԳՈՆԵՐԻՆ, ԷՊՈԽՆԴ, ՈՍՎԱԼԴ գնում էն։—ԾԱՌԱՆԵՐԻՆ)
Փընտուցէք խարդախ

Գլուստէրին, ինչպէս մի դող կապեցէք

Եւ բիլէք այստեղ։ (Մի ժանի ծառաներ գնում էն):

Թուպէտ իրաւունք

Չունինք ձեռք զարնել կեանիքին, դատաստան

Չարած՝ սակայն մեր իշխանութիւնը

Կըզիջանի մեր բարկութեան. թէպէտ
Պարսաւեն էլ այս՝ սակայն չեն կարող
Մեզ արգելք լինել:
(ՃԱՌԱՆԵՐԸ ներս չեն հդարձ ԳԼՈՒՍԵՐԻ հետ):
Ո՞վ է դա. մատնի՛չն:

ՀՈՒԳԵՆ

Այս, ապիլախտ աղուէսն:
ԿՈՐՆԱԾԱԿ՝
Գօսացած

Չեռքելը շուտով կապեցէք:

ԳԼՈՒՍԵՐԸ

Միլ'որդ,

Ի՞նչ է ձեր դիտումն: Իմ բարեկամնելս,
Խորհեցէք, որ ինձ հիւր էք: Ենպատիւ
Խաղ մի խաղաք վրաս, իմ բարեկամներ:

ԿՈՐՆԱԾԱԿ՝

Կապեցէք նրան, ասում եմ: (ՕԱԿԱՆԵՐԸ հապրձ էն):

ՀՈՒԳԵՆ

(ՕԱԿԱՆԵՐԸ):

Գու, ցած դաւաճան:

ԳԼՈՒՍԵՐԸ

Ենդութ կին, երբէք

Ես դաւաճան չեմ:

ԿՈՐՆԱԾԱԿ՝

Եյտեղ աթոռին

Եշա: Եպիլատ, դու փորձը կառնես:

(ՅՈՒԳԱՆ նոր հօրութը իւրաքանչ է):

ԳԼՈՒՍԵՐԸ

Վըկայ ասաւուածներն, աս մի հըշշային
Վարմունք է՝ այսպէս մօրուքըս փետել:

ՀՈՒԳԵՆ

Որ թէպէտ սպիտակ՝ բայց նենդաւոր է:

ԳԼՈՒԽԵՐ

Ենօրէն կին, այս մազն՝ որ ծընօտիցս
Փետում ես՝ մէկ օր կհանք կառնէ քեզ դէմ
Ամբաստանելու։ Ես քո տանուաէրն
Եմ, քեզ չէ արժան աւարող ձեռքովդ
Իմ ասպենջական երեսս կողոպտել։ (Կոբնկալին)
Զեր ուզածն ի՞նչ է։

ԿՈՄԱՎԱՐԱ

Ե՞նչ նամակներ են,

Որ Գաղղիայից առել էք նորերս։

ՀՈԵՎԱՐԱ

Սղատ ասացէք. մենք գիտենք բոլորն։

ԿՈՄԱՎԱՐԱ

Եւ որպիսի կապ ունեցել էք այն

Մատնիներին հետ, որ մեր տէրութիւնն

Են մըտել նորերս։

ՀՈԵՎԱՐԱ

Եւ որի՞ ձեռքը

Յանձնեցիք զըժուած թագաւորն. ասէք։

ԳԼՈՒԽԵՐ

Ես մի զըրութիւն ըստացայ—ամբողջ

Ենթագրութիւններ—մի չեղոք հոգուց,

Ոչ թէ թըշնամու կուսակցութիւնից։

ԿՈՄԱՎԱՐԱ

Աեզծիք։

ՀՈԵՎԱՐԱ

Սըտում ես։

ԿՈՄԱՎԱՐԱ

Ուր յուղարկեցիլ։

Թագաւորին։

ԳԼՈՒԽԵՐ

Դուզիւն

ՀՈՅՔԱՆ

Ինչու համար Դուքս,
Վեզ ըսպառնալով չըպատռւիրեցի՞նք . . .

ԿՈՐԱՎԱԾԱՌ

Ինչու համար Դուքս: (Հռեժանին) Թող նախ այս ասէ:

ԳԼՈՒԽԵՐ

Կապուած լինելով այսպէս՝ հարկ է որ
Յարձակմունք կըրեմ:

ՀՈՅՔԱՆ

Ինչու համար Դուքս:

ԳԼՈՒԽԵՐ

Վասըն զի չեի ուզում տեսնել որ
Ընողում ճանկերդ աչքերը փորեն.
Կամ՝ որ գայրենի քոյրդ իւր ժանիքներն
Նորա նուիրական մարմինը մըիւէ:—
Ընպիսի մըրրի՝ կն, որ այն դժոխային
Գիշերն զըլիաբաց նա անցուց . . . ծովը
Ուզում էր ուռիլ և աստղերի լցուն
Ողողել իսկ նա—իս՝ զա սիրա—երկընքին՝
Ըրտասուքներով օգնում էր Եթէ
Գայլը քո զըրանդ ոռնար՝ կասեիր
Դու զըռնապանիդ. « զընա գուռը բաց »:
Իոլոր կատաղեքն սարսափից ընկծել
Եին:— Բայց մի օր ևս վրէժինդրութիւնն
Կը տեսնեմ ձեզ պէս զաւակներին վրայ
Թափելիս:

ԿՈՐԱՎԱԾԱՌ

Դու այդ երբէք չես տեսնի: (Օստանելին)
Եմուր բըռնեցէք աթոռն:—Ես իմ ոտքս
Կչքերիդ վերայ կը զընեմ:
(Պատահելին բանում էն և Աղջկալ նորա մէ աղջն հանումէ):

ԳԼՈՒԽԾՎ

Ո՞վ որ

Ուզում է ապրիլ մինչև ծերութիւն
Տեսնէ թող օգնէ ինձ: — Ո՞վ անդութներ,
Ո՞վ երկինք:

ՀԱՅԳՅԱՆ

Մի կողմն կը խընդայ միւսին
Աշերայ: Եյն մէ ին էլ:

ԿՈՐԴԱՌԱՇ

Դու վրէժիլնդրութիւն
Եյժը կը տեսնես:

ՄԻ ՌԵՄԵՅ (Կորնվալին):

Դադարեցէք, տէր:

Չեզ ծառայել եմ իմ մանկութիւնից.
Բայց ամենամեծ իմ ծառայութիւնս
Եյս է, որ ինզպում եմ ձեզ դադարիլ:

ՀԱՅԳՅԱՆ

Եյս ինչ ասել է, այ շուն:

ՌԵՄԵՅ

Եթէ դուք

Մօրուք կը թէիք՝ ներկայ դէպքում այն
Ես կը փետէի: Ե՞նչ է ձեր ուզածն:

ԿՈՐԴԱՌԱՇ (Սուրբ Հաշուած):

Ենակիտան դու:

ՌԵՄԵՅ

Լաւ, յառաջ եկէք և

Առտաղութեան համն առէք:

(Սուրբ հանուճ է, իւլուճ էն, դուճուք միքանոյլուճ է):

ՀԱՅԳՅԱՆ (Մէտ ուղիւշ ծառայի):

Սուրբ ինձ տուր:

Դեղջուկն յանդրդնի՛ այսքան:

(Սուրբ իւլուճ է և նրան զարնուճ եպուից):

ՕՐԵՈՒՅՑ

Ո՞Շ զարկին

Ինձ Տէր, դեռ ունիք մի աչք, որ տեսնէք
Չեր վրէժխընդութիւնն: Օ՞Շ . . . (Մեռնում է):

ԿՈՒՐԱՎԱԾ

Ել չետեսի:

(Երկրորդ աշխ էլ հանում է):

Դուրս, վաս սառնորակ, ուր է արդ քո փայլդ:

ԳԼՈՒԽԵՐ

Շուրջս անցուսութիւն, խաւար է բոլորն:

Ո՞ւր է իմ որդիս, Եգմունդ: Բողբոքի՛ր

Միջումդ բընութեան բոլոր հուզն, Եգմունդ,

Եւ այս եղեոխն հատուցում արա:

ՀՈՒԳԵՐ

Մատնիչ ապիրատ, դու քո թըշնամուն

Ես կանչում նա՛ էր, որ մեզ բացազբեց

Դաւաճանութիւնդ: Նա շատ բարի է,

Որ կարեկցութիւն ունենայ վերադ:

ԳԼՈՒԽԵՐ

Վայ ինձ անմըտիս: Ենարդարութիւն

Երի Եգգարին: Պըթած աստուածներ,

Ներեցէք դուք ինձ, օրհնեցէք նըրան:

ՀՈՒԳԵՐ (Օպառաներին):

Դուրս ձրդէք սըրան. թող հոտոտեղով

Դուվրի ճանապարհն զլանէ: (Կարնալին) Կ՞նչ եղաւ

Չեղ, իմ ամուսինս, այդպէս փոխուեցաք:

ԿՈՒՐԱՎԱԾ

Վիրաւորուած եմ Ետեիցս եկէք,

Տիկին: (Յոյց առաջ Պահապէրին): Դուրս ձրդէք սյս կոյր
ապիրատն:—

(Յոյց առաջ ծառապյի դին): Դրան էլ կուին մէջ:— Արիւնս
յորդահոս

Պընումէ, Հռեղան: Ենյարմար առեն

Ըստացայ այս վերքն։ Տըւէք ինձ ձեր ձեռքն։
 (Գնում է՝ Նուժակ յերգին յւեաժ։ ‘Օաւաները
 Քո հովից դուք են առաջնորդում Պլուտօնին):

Ե. ՚ՕԵԱՒՅՑ

Ես ինչ մեղք գործելս էլ չեմ նայիր, երբ
 Եյս մարդն յաջողի:

Բ. ՚ՕԵԱՒՅՑ

Եթէ ծկրութեամբ

Մեռնի այդ կինը՝ բոլոր կըները
 Ճըրէշ կը դառնան։

Ե. ՚ՕԵԱՒՅՑ

Գընանք ծեր կոմսի

Ետևից: ‘Նորան առաջնորդ զըտնենք
 Բէդլամի աղքատն։ ‘Նա յանձ կառնէ այս։

Բ. ՚ՕԵԱՒՅՑ

Դու գնա: Ես ձուի ճերմըկուց և շոր
 Գըտնեմ արիւնոտ աչքերին համար։—

Երկինք, դուն օգնիր նորա վեճակին։

(Եւանձն ճանապարհներու քնում են):

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Դաշտ:

Երիմլի ներս է մտնում։

ԵՐԻՄԼԻ

Լաւ է անարդուիլ այսպէս անծանօթ¹⁾։

1) Ոմանք կարգում են. «Լաւ է անարդուիլ ինքնազդացութեամբ» (Ճանաչումնով) և հասկանում են. «Լաւ է անարդուիլ ինչպէս ես, և դիտնալ, թէ անարդվում են, քան թէ մշտ շողքորթութիւն տիսնել նոցանից, որոնք սրտում մեզ արհամարհում են։

Վան միշտ անարգուիլ ու շողոքորթուիլ:
 Յոյսով է ապրում և ոչ երկիւզով
 Բաղդի խիստ ստոր և ամենախեղճ
 Արարածն էլ: Վատ փոփոխութիւնը
 Բաղդաւորներին միայն է գալիս.
 Թըշուառը գրանում է ուրախութիւն
 Միայն: Բարով գաս ուրեմն, անմարմին
 Օդ, որ գրքիում եմ: Այն խեղճը, որին
 Սնդունդ զլորեցիր՝ փոթորիկներիդ
 Հետ էլ գործ չունի:— Բայց նվ է գալիս:—

(ԳՈՍՏԵՐ ՆԵՐ Է Քայլ և ՇԵՐՈՒԽՈՒՑ առաջորդութիւն):
 Իմ հայրս այս կերպով առաջնորդուած: Ո՞վ
 Սշխարհ, ով աշխարհ, եթէ տըխագին
 Փոփոխութիւններն մեզի չըստիպեն
 Քեզանից գարշել՝ կեանքը տարիքից
 Երբեք չելնենիր:

ՅԱՅՆՈՒՄ

Ո՞վ իմ բարի տէր, ութսուն տարի է աւատառու ևմ
 ձեզ և ձեր հօրն:

ԳԼՈՒԽԵՐ

Գլնա ձանապարհո,
 Հեռացիր, բարի իմ բարեկամն ի՞նձ
 Օգուտ չունի քո այդ օգնութիւնդ. քեզ
 Կարող է վրնաս ունենալ:

ՅԱՅՆՈՒՄ

Բայց դուք
 Ձեք կարող ահանել ձեր ձանապարհը:

ԳԼՈՒԽԵՐ

Ես էլ ձանապարհ չունիմ: ինձ պէտք չեն
 Աչքեր, ես լնկայ՝ մինչ տեսնում էի:
 Յաճախ ըստացուածքն կործանում է մեղ.
 Եւ զբրկանքը մեզ բարիք է բերում:—
 Ո՞վ իմ սիրելի Եղգար, նըշաւ ակ

Քո մոլորած հօր ցասումին, եթէ
Եպրէի այնքան, որ շօշափումով
Գէթ քեզ տեսնէի՝ «աչքերս նորից
Գըտայ» կասէի:

‘ՕԵՐՈՒՆԻ

Հը՛, ով կայ այդտեղ:

ԵՐԳԱԸՐ (ԵՐԱԿՅԱ):

Սստուածնե՞ր, և ով կարող է տսել՝
Թէ սա—ծայրագոյն չարիքն է.—ահա
Մի չարիք, որ գեռ տեսած չէի ևս:

‘ՕԵՐՈՒՆԻ

Խենթ Տուր աղքատն է:

ԵՐԳԱԸՐ (ԵՐԱԿՅԱ):

Եւ քան այս չարը
Կարող է գալ ինձ: ‘Օայրագոյն չարիքն
Դեռ ևս եկած չէ, երբ մարդ կարող է
Եսել թէ ահա՝ ծայրագոյն չարիքն:

‘ՕԵՐՈՒՆԻ

Ռնկեր, որ կողմն ևս գնում:

ԳԼՈՒՏԵՐ

Մուրացկան է:

‘ՕԵՐՈՒՆԻ

Խենթ և մուրացկան է միանգամայն:

ԳԼՈՒՏԵՐ

Բայց այնչափ խենթ չէ. հայ է մուրանում:—
Դեռ երէկ գիշեր մըսրիկին տեսաց
Սոցանից մէկին, որին մէջ մարդն ինձ
Մի որդ երևցաւ: Եյնտեղ միաքս եկաւ
Որդիս, թէպէտ գեռ սիրտս հաշտ չէր իւր հետ:
‘Նորանից յետայ շատ բաներ տեսայ:
Մէնք աստուածներին մօտ նոյնն ենք, ինչ որ

Պարասպ տըղային մօտ ճանձը. նոքա
Մեզ ըսպանում են դուարձութեան համար:

ԵՒԳՆԻՐ (Եւանչյան):

Խոչպէս անեմ ես:—Մի վատ արհեստ է
Խեղկատակ լինելն սըղին մօտ: Թէ՛ք քեզ
Վըշտայնում ես թէ նրան: (Բաբյոն) Ողջոյն ձեզ, ակը:

ԳԼՈՒՍԼԻՐ

Սա մերկ աղքատը չէ:

ՕԵՐՈՒԵՐ

Եյո, միշտորդ:

ԳԼՈՒՍԼԻՐ

Խընդբում եմ ուրեմն, հեռացիր: Բայց թէ
Դու փափագ ունիս մի երկու մըլոն
Եյստեղից հեռու Գուվրի ուղիում
Մեզ նորից հասնել—արա՞ զին սէրիդ
Իբրև յիշտակ—և բեր մի ծածկոց
Եյս մերկին համար, որին առաջնորդ
Ուզում եմ բրոնկը:

ՕԵՐՈՒԵՐ

Բայց, տէր, նա խննթ է:

ԳԼՈՒՍԼԻՐ

Սա ժամանակի չարիքն է.—խննթերն
Եռաջնորդում են կցրերին: Երա՞
Ինչ որ քեզ ասի. կամ մանաւանդ այն,
Ինչ որ ուղում ես: Բայց նախ և յառաջ
Գըհա:

ՕԵՐՈՒԵՐ

Ես գորան լաւագոյն հագուստս
Ալբերեմ յետց լինի, ինչ լինի: (Պատում է):

ԳԼՈՒՍԼԻՐ

Մօտ եկ, մերկ տըղայ:

ԵՐԳԱՐ

Խեղաք Տոմ մըրսում է: (Եռանձնին):

Երկար չեմ կարող դիմանալ սորան:

ԳԼՈՒԾԵՐ

Մօտս եկ, բարեկամ:

ԵՐԳԱՐ (Եռանձնին):

Սակայն պէտք է այս: (Բառըն):

Սսուած լաւացնէ արիւնոտ աչքերդ:

ԳԼՈՒԾԵՐ

Դուզրի ճանապարհը դիմում:

ԵՐԳԱՐ

Թէ կառքինը, թէ հետեւակինը, կամուրջներն ու ցանեկերը—բոլորը զիտեմ: Եղքատ Տոմը խելքը կորցրել է: Սսուած բարի մարդին չար ոգիներից աղատէ: Եղքատ Տոմի փորում հինգ չար գեւ են բնակում:—Որիդիկուդ—անառակութեան դեր. Հոբրիդիդէնս—համրերին իշխաննը. Մահու—գողութեան դեր. Մողոյ—սպանութեան և Պլիբերտջիպակէտ նազկտելու և ծամածութեան դեր, որ մի ժամանակից հետէ տիրում է սենեկապան կնուրին և աղախիններին մէջ: Բայց դու, տէր, օրհնեալ լինիս:

ԳԼՈՒԾԵՐ

Եռ այս քըսակը, դու, որին երկինքն

Եւր հարուածներով այսքան ընկճել է:

Եմ դըմբաղդութիւնս բաղդաւոր կանէ

Վեղ:—Դուք աստուածներ, այսպէս արէք միշտ.

Բարիքներով զեղլս, Ճոխացած մարդը,

Որ ոտնակոխում է ձեր պատուէրներն,

Որ նրանց չէ տեսնում, զե չէ ըզդացել—

Յանկարծ թող ըզգայ ձեր կալորդութիւնն.

Եյս կերպով վերցվում է աւելորդը,

Բաժին լինելով, ամեն մարդ էլ կուշտ

Կը լինի:—Գիտե՞ս, Դուզրը:

ԵՐԳԱԸՐ

Գիտեմ, տէր:

ԳԻՌՈՍՏԵՐ

Եյնտեղ կայ մի լեռ, որի զառիվայր
 Եւ բարձրը գաղաթն սարսափով նայում
 Եւ վար, դէպի ծովի: Նորա արտևանն
 Ինձ հանիր: Եյնտեղքո թըշտւառութիւնդ
 Ես կրթարատեմ թանկաղին բանով:
 Եյնտեղ՝ առաջնորդ այլ ևս ինձ պէտք չէ:

ԵՐԳԱԸՐ

Դէ՛, ձեռքըդ ինձ տուր: Տոմքեկը կը տանի: (Պահաժեն):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԱԼՔԵԱՆԻ դքսի ամրոցին առջե:

ԳՈՅԵԲԻՆ, Էֆրոինի ներս են մտնում. ՈՍՎԱՌԻ նոցա դէմ է ելնում:

ԳՈՅԵԲԻՆ՝

Քարով եկաք, տէր: Օարմանում եմ որ
 Իմ հեղ ամուսինս մեզի դէմ չեկաւ: (Ուվաշուն)
 Տէրդ ուր է:

ՈՍՎԱՌԻ

Տանն է. բայց բոլորովին

Փոխուած է, տիկին: Պատմում եմ նորան

Թակ թըշնամիներն եղելքն են ելեր.

Նա ծիծաղում է: Եսի, թէ գալիս

Էք դուք. «Եւելի վատ» պատասխանեց:

Երբ ԳԼՌՈՍՏԵՐԻ գաւն պատմեցի նորան

Եւ հաւատարիմ ծառայութիւնը

Որդուն՝ ինձ յիմար կոչեց, ասելով,

Թակ ես տեսել եմ դործի հակառակն:

Տըխրելու բանը նորան հաճոյ է.

Հաճելին՝ նորան ցաւ է պատճառում:

ԳՈՒՅԵՐԻՆ՝ (ԵՐԵՒ-ՆԵՐԻ):

Եւ յառաջ մի գաք: Սա մի վատասիրա
Սարսափն է հոգուն, որ արութիւնից
Օռուրկ է: “Նա չիզգայ անարդանքն, եթէ
Հարկ է վրէժիշնդիր լինել նորանից:
Ինչ որ մենք ուղում մըտածում էինք՝
Կատարուիլ կարող է այն¹⁾: Յետ դարձեք,
Եղմունդ, եղբօրս մօտ փութացէք ժողվել
Օօրքերն և նոցա առաջնորդել: Ես
Նըկատում եմ, որ ինձ հարկ է փոխել
Օէնքերս, թէշեկը մարդիս ձեռքը տալ:
Եյս հաւատարիմ ծառայն կը լինի
Մեր սուրհանդակը: Եթէ յօգուտ ձեր
Երիանաք դուք՝ շուտով կը լրսէք
Սիլուհու կամքը: Զեր վերայ կրկցէք
Սա: (Մէ յէլարտի դալիս է): Մի խօսիք: Յած բըռնե-
ցէք ձեր զլուկին²⁾: (Համբուրում է):
Թէ համարձակիր խօսիլ այս համբոյրն՝
Կը բարձրացընէր ձեր հոգին մինչեւ
Սմակերն: Հասկացէք ինձ:— Վընաք բարով:

ԵՐԵՄԱՆԵՐ

Ես ձերն եմ մինչև մահուան շալքերում:

ԳՈՒՅԵՐԻՆ՝

ՈՌՎԵՐՄ սիրելի Գլուխեր: (ԵՐԵՒ-ՆԵՐ ՔԱՆ-Ծ է) ՈՌՎԵՐՄ
մարդ

Տարբեր է լինում մարդից: Կընի սէրն
Քե՛զ է վայելում: իսկ իմ յիմար մարդն
Յափըշտակում է անկողինս:

ՈՍԱԸՆԵՐ

Տիկին,

Եհա դուքսն: (ԳԱՆ-Ծ է ԱԽԱՆԻ նէր և ճան-Ծ):

1) Խօսքը իւր մարդի Աւեսնի գքսի սպանութեան վերայ է:

2) Որպէս զի Ոսկալու չափանէ, ինչպէս կարծում են մեկնիչները:

ԳՈՒՅԵՐԻՆ՝
Նըբեմն ևս մի սուլեզի
Երժանի էի¹⁾):

ԱԼԻՎԵՆԻ
Ո՞ Գոներիլ, դուք
Երժան չէք փոշուն, որ խիստ քամին ձեր
Երիսն է լեցնում: Զեր խորհուրդներն ինձ
Օարհուրեցնում են: Այն արարածն, որ
Իւր ծագումն ատում է ոչ մի սահման
Զունի նա իւր մէջ: Ճիւղն, որ իւր կամքով
Սնջատվում է իւր սընուցիչ բունից՝
Սնհամեշտ է, որ նա թառամի և
Սպականութեան ծառայէ:

ԳՈՒՅԵՐԻՆ՝
Ճերիք.

Խենթի խօսքեր են:

ԱԼԻՎԵՆԻ
Երդարութիւնը
Եւ իմաստութիւնը վատին վատ են թվում:
Գարշելուն միայն գարշն է դուր գալիս:—
Ի՞նչ արիք դուք, դուք, վագլե՛ր, ոչ զլատրեր,
Ի՞նչ արիք:—Մի հօր, բարի ծերունուն,
Որին կը լիղէր արջն ակնածելով՝
Խելքից հանեցիք, պիղծ բարբարոսներ:
Կ՞նչպէս իմ եղբայրս, մէկ մարդ, մէկ իշխան,
Այնչափ երախտիք նորանից զըտած՝
Աորան համբերեց: Ա՛չ, եթէ երկինքն
Իւր տեսանելի զօրութիւնն աշխարհ
Չյուզարկէ պատժել այս մեծ ոճիրը՝

1) Մի անգղիական առած կայ. «If is a poor dog, that is not worth the whistling». (Մի խեղճ շուն է, որ սուլելու արժան չէ): Գոներիլ ակնարկելով այս առածին՝ ուզում է ասել մի ժամանակ նէ մի շնի չափ գոնէ պատիւ ուներ Ալեանիի մօու, իսկ այժմ՝ չունի:

Կըգայ ժամանակ, կըսկըսին մարդիկ
Պատառել միմեանց ինչպէս ծովի հրէշ

ԳՈՒՅԵՐԻՆ՝

Վախիկոտ մարդ. սյտեր ունի ապտակի
Ճամար, և գլուխ՝ անարդանքների,
Իսկ աչքեր չունի ձակատին, որով
Պատիւն ամօթից զանազանէ. որ
2է իմանում, թէ խենթերն են խըղջում
Մի չարագործի, որ մեղք գործելուց
Յառաջ է պատժվում Ուր է քո թըմբուկուր.
Գաղղիան արդէն խալսխեց իւր դըրօշն
Մեր խաղաղ երկրում: Քեզ ըսպանում է
Յաղթականդ՝ հըպարտ սաղաւարտ գըրած:
Իսկ դու տան մէջ, ով առաքինի խենթ,
Կըստել ես հանդարտ, գոչում: «ախ, ինչո՞ւ
Եյսպէս են անում»:

ԱԼՇՅՈՒԹ

Մէկ վերադ նայիր
Սատանայ: Դեկ մէջ զաղիր պատկերն
Եյնչափ սոսկալի չէ, որչափ կնի մէջ:

ԳՈՒՅԵՐԻՆ՝

ԱՇ սընոտի խենթ:

ԱԼՇՅՈՒԹ

Գու, ապականուած,
Խեղաթիւր ծընունդ արարած, ամօթ
Որ ձիւաղի գէմք առնում ես ինքնին:
Եթէ ձեռքերիս արժան էր լըսել
Երիւնիս՝ նոքա միսդ ոսկորներիցդ
Վաղած կլինէին արդէն: Որչափ էլ
Դու լինիս, սակայն կընի կերպարանքդ
Պաշտպանում է քիզ:

ԱԼՇԱԿՆԻ

Եսում են, դուքսը

Քաջութիւն չունի՞:

(Մի ՍՈՒՐՅԱՆԴԱԿ ներ է հանու՞):

ԱԼՇԱԿՆԻ (Առցիանովին):

Ինչ նոր լուր ունիս:

ՍՈՒՐՃԱԿՆԻ

Տէր, իմ Կորնվալի դուքսը մեռաւ: Նրան

Եւր ծառան սպանեց, երբ կամենում էր

Նա հանել երկրորդ աչքը Գլուխէրի:

ԱԼՇԱԿՆԻ

Գլուխէրի աչքե՞ն:

ՍՈՒՐՃԱԿՆԻ

Մի ծառայ, որին

Նա սընուցել էր՝ կարեկցութիւնից

Շարժուած՝ դէմ կեցաւ այս գործին և սուրն

Հանեց իւր հըղօր տէրի դէմ: իսկ սա

Սասաիկ բարկացած վրան յարձակեցաւ

Եւ հէնց նոյն տեղումն սպանեց. բայց յառաջ

Կնքն էլ մահացու մի վէրք ըստացաւ,

Ու նըրան գլորեց:

ԱԼՇԱԿՆԻ

Սա հաստատում է,

Թէ դուք վերևն էք, արդար աստուածներ,

Ու փշյթ պատժում էք մեր ոճիլները:—

Խեղձ Գլուխէր:—Երկրորդ աչքն էլ նա կորցրեց:

ՍՈՒՐՃԱԿՆԻ

Երկուքն էլ տէր իմ: (Գլուխէրին) Տիկին, այս նամակն,

Ու ձեր քոյրից է շուտով պատասխան

Ե պահանջում:

ԿՈՒՅՆԻԲԱՌ (Եռանչին):

Ինձ մասամբ հաջելի

Ե այս լուրն, բայց նէ երբ սյրի է այժմ—
Եւ մօտն է Գլոստէրս՝ դիւրաւ կարողէ
Բոլոր խորհուրդներս ատելի կեանքիս
Վերայ կործանել—Իսյց միւս կողմից էլ
Սյնքան անշանց լուր չէ¹⁾: (Սուրբանդավին) Գլոնում եմ
Նամակը կարգալ և պատասխանել: (Գնում է):

ԱԼՇՅԱՆԻ

Երբ հանում էին աչքն՝ մուր էր որդին:

ՍՈՒՐՃԵԿԵՐԵՎԻ

Զեր ամուսնի հետ այստեղ:

ԱԼՇՅԱՆԻ

Սյստեղ չէ

Նա:

ՍՈՒՐՃԵԿԵՐԵՎԻ

Ոչ տէր իմ: նրան ևս հանդիպեցայ,
Որ յիտ էր գառնուում:

ԱԼՇՅԱՆԻ

Նա դիտէ՞ր այս չար

Գործն:

ՍՈՒՐՃԵԿԵՐԵՎԻ

Սյո՞ւ, տէր, նա ինքն ամբաստանեց
Հօրն և ամրոցից զբնաց, որ վըրէժն
Վրձակ համարձակ կատարեն:

ԱԼՇՅԱՆԻ

Գլոստէր,

Ես կենդանի եմ, ևս կրվարձատրեմ
Հաւատարմութիւնդ արքային առջեւ:

1) Գոնէրիւի ծրտգին եր սպանել Ալբանին, և Եդմունդին հետ պսակուիլ յետոց թունաորել նոյնպէս իւր քոյրին և Կորնվալ'ին և տիրել ըսլոր Անգղիային: Ուստի նէ մէկ կողմից ուրախ է, որ Կորնվալ' արդէն մէջ տեղից վերցուեցաւ և իւր գործը դիւրացաւ. միւս կողմից էլ տեսնելով որ Հոնդան այժմ այրի է՝ կասկածում է թէ մի գուցէ նէ իւլէ Եդմունդին իւր ձեռքից:

Ես կառնեմ վըրէժն աչքիրիդ: (Սուրբանութաղին) Գընանք,
Բարեկամ, բոլոր զիտցածդ ինձ պատմիր (Գնումն):

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Գաղղիական բանակը Դուվրի մօտ:

Կինք և մի ԱՊԳԵՑ ներս են մանում:

ԿԵՇՆՏ

Գաղղիայի թագաւորն ինչու համար այսպէս գնաց.
պատճառը զիտէք¹⁾:

ԱՅՊԵՑ

Մի գործ թողել էր նա տէրութեան մէջ
Կիսատ, որ այստեղ իւր գալուց յետոյ
Մեծացաւ. այնչափ այս գործն պետութեան
Վշտանգէ ազդում և աշ որ անձամբ
Իւր ներկայութիւնն կարեւոր եղաւ:

ԿԵՇՆՏ

Իսկ որին թողեց նա հրամանատար:

ԱՅՊԵՑ

Գաղղից պարոն Լը-Գէռ մարածախան:

ԿԵՇՆՏ

Թագուհուն վերայ թողեց ձեր նամակն
Տըխրութեան նըշան:

ԱՅՊԵՑ

Եյո, տէր, նամակն
Իմ ներկայութեանս կարդաց նէ. երբեմ

1) Որովհետեւ Գաղղիայի թագաւորն ուրիշ գեր չունի տեսարանին մէջ՝ Ըեկսպիր նրան հեռացրել է խմբից, այս խօսակցութեան օգնութեամբ: (Տես նաև «Լիր թագաւորի նախկին նիւթը», յառաջաբանին մէջ):

Երբեմն արտասուաց մի խոշոր կաթիւ
Գլուխում էր նէրա քընքոյշ այտերից
Վար. ինձ թըլեցաւ, թէ տիրուհին է
Նէ վըշտին, որ իբր ապըստամբ՝ նէրան
Տիրել էր ուզում:

ԿԱՇԵՏ
Ո՞չ, ուրիմին նէ

Յուզուած էր:

ԸՄՊԵՏ

Սակայն ոչ մինչեւ զայրոյթ:
Համբերութիւնն և վիշտ մըօցում էին—
Ո՞րն կըտայ նէրան աւելի չըքնաղ
Երտայայտութիւնն—Տեսե՞լ էք արեն
Լուսաւորելիս անձրեփ միջով:
Նէրա ժըպիտն էլ խառն արտասուաց հետ
Սիրուն մայիսին էր նըմանն: Խւր այս
Ծնորհալի ժըպիտն, խաղալով հասուն
Ծքրթունքին վիրայ՝ կարծես չեր գիտեր,
Ո՞վ են աչքերի հիւրերն, որոնք վար
Գըլտրում էին, ինչպէս մարգարիտ
Երկու գոհարից: Մի խօսքով, վիշտը
Մի գեղեցիկ բան կըլինէր, եթէ
Վմենքին էլ տար այնպէս շընորհը:

ԿԱՇԵՏ

«Ե

Ոչնչ չըհարցրե՞ց:

ԸՄՊԵՏ

Մէկ երկու անգամ
«Զայր» բառը կըրծքից ծանըը հառաչեց,
Որպէս թէ ճընշուած լինէր սիրտն: Գոշեց
Նէ «քըրե՞ր», քըրե՞ր, նախատի՞նք կանանց
Քըրե՞ր. Կէ՞նո, իմ հայր, քըրե՞ր. ի՞նչ գիշե՞րն,
Վըրբիկի ատե՞ն. հաւատք չըմնաց

Աւրեկցութեան վրայ»: Այստեղ սըրբազան
ֆռուրը երկնային աչքերիցն հոսեց,
Եւ թըրջեց նէրա հառաջանքն. — յանկարծ
Տեղեց դուրս թըրուաւ, որ մինակ ողբայ:

ԱլշեՏ

Աստղերն են, այս, վերեի աստղերն,
Ու վարում են մեր բաղդն. ապա թէ ոչ
Մի զցգ ծընողներ սերել չեն կարող
Այսքան միմեանցից տարբեր զաւակներ: —
Յետոյ դուք հետը չըխօսեցաք:

ԱՍՊԵՏ

ՈՉ

ԱլշեՏ

Եղքայի գնալուց յառաջ պատահեց
Այս:

ԱՍՊԵՏ

ՈՉ յետոյ:

ԱլշեՏ

Լաւ: Տառապեալ Լիրը
Քաղաքում է այժմ: Երբեմն երբ խելքը
Վերան է լինում՝ ըմբռնում է, թէ
Ենչու եկել ենք Դուքր, բայց մերժում է
Բացարձակապէս տեսնել իւր զբսորին:

ԱՍՊԵՏ

Ի՞նչ պատճառով, տէր:

ԱլշեՏ

Անըլւաճ ամօթն:

Առել է նըրան: Խըստասըրտառւթիւնն,
Որով զըլացաւ նէրան օրհնութիւն,
Ճակատագիրին յանձնեց նէրա բաղդն,
Եւ իրաւունքներն արւեց գայլասիրտ
Քըրերին՝ սոքա ամենն այնպիսի

Թացնով մաշում են հոգին՝ որ սաստիկ
Ամօթը նորան հեռի է պահում
Կորդելիայից:

ԵՍՊԵՏ
ԽԵՂՃ մարդ:

ԿԵ ԵԼՔանիի բանակին վերայ
Լուր ունի՞ք:

ԵՍՊԵՏ
Կոքա ճանապարհին են:

Եկ, բարեկամ, քեզ մեր թաղաւորին
Մօտ տանիմ: Նըրան յանձնում եմ խնամքիդ:
Մի զօրեղ պատճառ ինձ ըստիազում է
Մնալ առժամանակ ծածուկ. բայց հեց որ
Ինձ յայտնեմ հարկաւ դու զըդջալու չես,
Որ ծանօթ ես հետս: Եկ, գընանկ խընդիմ: (Պատուան էն):

ԶՈՐՌՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դուվրի բանակում մի վրան:

ԿՈՐԻԵԼԻԱ, Մի թիմե և ՍՊԱՆԵՐ ներս են մանում:

ԿՈՐԻԵԼԻԱ,

Եւաղ նա ինքն է: ‘Նոր տեսան նըրան
Կատաղի, ինչպէս վայրենի ծովի, բարձր
Չայնով երգելիս. զըլուկը շըքեղ
Պըսակած անսարդ անձխոտով և այլ
Սնպէտք խոտերով, որ ցորենին մէջ
Բուսանում են—եղինձ, մէծ մարդարիկոն,

Մոլախինդ, կակաչ և որում: (Մէ սպացէ) Մի խումբ

Օօրք յուղարկեցէք, խոտաւէտ գաշտերն

Բոլոր քըննեցէք, և բերէք նըրան

Մեր տոջեւ: (Սպան ժնում է:—Բժշկն)

Երուեստն կարող է գարձնել

Նորան իւր խելքը, որից զըրկուել է:

Ով որ բըժըշկէ նըրան՝ կըստանայ

Բոլոր իմ գանձերս:

ԲԺԴԸ

Թագուհի, գեռ կայ

Հընար, հանգիստն է հիւանդի խնամովն.

Նորան պէտք է քուն. իսկ քուն բերելու

Կան շատ միջոցներ, որոց զօրութեամբ

Փակվում են վըշտի աչքերն:

ԿՈՐԴԵԼԻՒ

Հրսաշքնելու,

Եւ գուք բարերար ոյժեր, ծածկըւած

Երկրի ծոցին մէջ. իմ արտասուքով

Ոռոգուած՝ ելէք օժանդակեցէք

Եւ բըժըշկեցէք բարի ծերունու

Վըշտերն: (Սպանելն)

Փընտուեցէք, փընտուեցէք նըրան,

Մի գուցէ զայրացթը կարծէ իւր կհանգն,

Որ չունի հընար ինքնավարելու: (Պահանձ նն սպանելն)

Մէ ՍՈՒՐՅԱՆԴԱԿ ներ է մընում):

ՍՈՒՐՃԵՆԴԱԿ

Տիկին, մի նոր լուր. բրիտանական զօրքն

Եյստել է գալիս:

ԿՈՐԴԵԼԻՒ

Երդէն յայտնի էր

Եյդ: Մէկք պատրաստ ենք դիմագրաւելու

Նոցա: Ով անգին հայր իմ, քեզ համար

Միայն եմ ելնում կըսուի: Քեզ համար

Գաղղեց արքայն զիջու իմ որդիս

Եւ թախանձագին պաղատանքներիս:
 Փառասիրական ոչ թէ ձըգտումներ
 Գըրգուեցին մեր զէնքն. ոչ սէրը միայն,
 Գորովագին սէրն և մեր ծերունի
 Հօր իրաւունքին նախանձյուղութիւնն:—
 Ո՛չ, ևս մէկ նըլան տեսնէի շուտով: (Պատ-Տ Ե):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Մի սենեակ Գլ'ոստէրի ամրոցում:
 ՀԹԵԳԱՆ և ՍԵՆԵԿՊԱՆ ԱԽՎԱՌԻ ներս են մտնում:
 ՀԱՅԵԳԱՆ
 Եղբորը զօրքն էլ ճանապարհ ելամ:
 ՈՍՎԱԾՆԻ
 Եյո, տիրուհի:
 ՀԱՅԵԳԱՆ
 Եւ ինքն էլ անձամբ
 Գուրս եկամ:
 ՈՍՎԱԾՆԻ
 Եյո, մեծ զըժուարութեամբ:—
 Զեր քցըն աւելի լաւ զինուոր է:
 ՀԱՅԵԳԱՆ
 Եղմունդ ամրոցում հետը չը խօսեց:
 ՈՍՎԱԾՆԻ
 Ոչ, տիկին:
 ՀԱՅԵԳԱՆ
 Քցըրիս Եղմունդին զըբած
 Նամակն ի՞նչ կարող է պարունակել:
 ՈՍՎԱԾՆԻ
 Ես այդ չեմ զիտեր:

ՀՅԵՎԻՇՆ

Անշուշտ կարևոր

Մի բան հեռացրից նըսան այստեղից:—
 Սնխոհեմ գործ էր, որ կըր Գլուստէրին
 Կենդանի թողինք: Ուր որ գնում է նա՝
 Մեղ զէմ է զըրգում բոլոր սրբակը:
 Ե՞որդ Եղմունդ, կարծեմ, նորա վըշտալի
 Դըրութեան վիրայ խըզալով՝ զինաց
 Կարձելու մութ կեանքն և նոյն ժամանակ
 Թըշնամուն ոյժը կըշոելու:

ՈՍՎԸՆ՚Ի

Հարկ է,

Որ ևս նամակովս փութամ ետեիցն:

ՀՅԵՎԻՇՆ

Իմ զօրքս առաւօտ կենէ. ըսպասիր
 Մեղ հետ. Ճանապարհն վըտանգաւոր է:

ՈՍՎԸՆ՚Ի

Կարող չեմ, տիկին, տիրուհիս ինձ այս
 Ասսիր փութացրից:

ՀՅԵՎԻՇՆ

Բայց նէ ի՞նչ է դրւում

Եղմունդին. չէի՞ր կարող իւր պատուէրն
 Գու բերանացի ասել—Մի բան կայ,
 Բայց ի՞նչ—չըգիտեմ:—Բեղ շընորհակալ
 Կըլինիմ—տուր ինձ նամակը բանամ:

ՈՍՎԸՆ՚Ի

Տիկին, աւելի լաւ է...¹⁾)

1) Ձոնոսն զարմանում է, թէ ինչու Շեկսպիր Ոսվալդին, ամենացած դաւերի այս միջնորդին, հաւատարմութեան օրինակ է շինում: Նա (Ոսվալդ) թէ՝ այստեղ նամակը Հոեգանին չէ տալիս, և թէ յետոյ, մեռնելիս, միայն այն է մոտածում, որ նա մակը տեղը հասնի:—Սորան Ալերկ պատասխանում է, թէ այս սորկային ցածութիւն է, չնի հպատակ ծառայութիւն: Այսի արած հարցմանքին «Ո՞վ եմ ես» նորա առուած պատասխանն, «Տիրուհուս հայրը» լրիւ բացատրում է, թէ նա ի՞նչ հասկա-

ՎԱՐԴԱԿԱՆ

Մարդին չէ սիրում: Եյս յայտնի բան է:
Երբ վերջին անգամ այստեղ էր՝ ազնիւ
Եղմունդին վերայ սիրութուն աչքեր
Եւ ճարտարախօս հայեացք էր ձրգում:
Դու մըտերիմն ես նէրա:

ՈՍՎԸՆԴԴ

Ե՞ս, տիկին:

ՀԱՅՎԴԱՐԱ

Ես ինչ որ գիտեմ՝ ասում եմ: Գիտեմ,
Դու մըտերիմն ես, ուստի և խորհուրդ
Տալիս եմ—լրսիր: Իմ մարդը մեռաւ:
Մենք Եղմունդին հետ արդէն խօսել ենք,
Նա աւելի իմ քան թէ տիրուհուդ
Չեռքին է հաւան: Մնացածը դիւրին
Է հետեցընել: Երբ նըրան զըտնես՝
Խընդրեմ սա նորան տուր: Երբ տիրուհուդ
Լըսէ քեզանից այս ամենն՝ խընդրիր
Նէրան, որ խելքը զըլուխն հաւաքէ:
Եյժմ երթաս բարով: Եթէ գաւածան
Կոյրի մասին լսես՝ մեծ վարձք կայ նորան՝
Ով որ ըսպանէ նըրան:

ՈՍՎԸՆԴԾ

Կուղէի,

Տիկին, մէկ նորան հանդիպիլ, տպա
Ծոյց կըտայի, թէ ում եմ պատկանում
Ես:

ՀԱՅՎԴԱՐԱ

Երթաս բարով: (Գնուած էն):

յոշութիւն ուներ իւր նշանակութեան վերայ:—Տոկ ես կարծում եմ, որ այս վար-
մունքն Ռավաշդի կողմից փոքր ինչ արուեստական է, իսկ երկրորդ գեպքում՝ բոլորովին
անբնական, և միայն բացատրվում է սորանով, որ այս նամակն այնոք էր հասներ Եդ-
դարի ձեռքն, ուստի չեր կարող հռեգանին յանձնուիլ նոյն նպատակով ենակ, որ
Ռավաշդի մեռնելու ժամանակ, Շեկսպիր (անբնականապէս) նորան յիշեցնել է տալիս
նամակի մասին, որպէս զի Եդդար առն է առն անպատճառ:

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դուվրի մօտ մի դաշտում:

ՔԼ'ՈՍՏԵՐ և ԷԹԳԱԲ գիւղացիի հագուստով ներս են մտնում:

ԳԼ'ՈՍՏԵՐ

Ե՞րբ պիտի հասնինք

Եյն ապառաժի գաղաթն:

ԼՇԳՎԵՐ

Երդէն մենք

Եյնտեղ ենք ելնում: Ե՞նչպէս զըժուար է

Ըարձրանալն:

ԳԼ'ՈՍՏԵՐ

Իսկ ինձ այնպէս է թըւում,

Թու հարթ է երկիրն:

ԼՇԳՎԵՐ

Սաստիկ զառիվայր

Ե՛ւ, Ա՛, լըսեցէք. լըսում էք ծովը:

ԳԼ'ՈՍՏԵՐ

Ոչ ճըշմարիտ ոչ:

ԼՇԳՎԵՐ

Եչքերիդ ցաւիցն

Տկարացել են միւս ըզդայութիւններդ:

ԳԼ'ՈՍՏԵՐ

Կարող է լինել: Կարծեմ փոխուեցաւ

Չայնդ¹⁾: Դու խօսում ես աւելի խելօք

Եւ լաւ, քան յառաջ:

ԼՇԳՎԵՐ

Շատ սըխալվում էք:

Ոչինչ փոխուած չէ իմ մեջ քան հագուստ:

1) Եդգար այն գիտաւորութեամբ է ձայնը փոխում, որ յետոյ կարողանայ նկատուած լինել իրեւ չար ոգի:

ԳԼՈՒՇԵՐ

Իսկ ինձ թըւում է, թէ լաւ ևս խօսում:

ԵՎԳԵՐ

Յառաջ եկէք, տէր, ահա այն տեղը:
 Հանդարտ կանգնեցէք: — Ո՞հ ինչպէս զըլուխտ
 Պըտընեց: Ի՞նչպէս սարսափելի է
 Եսկից վար նայիլ: Բարձրութեան կէսում
 Թըռոչող ագուաներն և կաշաղակներն
 Հազիւ միջատի չափ լինին: Մի մարդ
 Ժայռի կէս տեղում վար կախուած՝ ծովի
 Սամիթ է քաղում: — Պատանգաւոր արհեստ:
 Կարծես իւր գրլիսից նա մեծ չըլինի:
 Եյս ձրկնորսները, որ ծովեզելքում
 Բալում են՝ մըկի չափ են երեսում:
 Եյս խարիսխ ձրգած մեծ նաւն՝ մակոյկի
 Մեծութիւն ունի. մակոյկը, նըման
 Տակառի՝ հազիւ նըմարելի կէտ:
 Վայրի ալեքներն, որ մըունչում են
 Եփի մանր անթիւ կոպիճներին վրայ՝
 Լըսել կարելի չէ այսքան բարձրից:
 Չեմ ուզում նայել ներքեւ, մի դուցէ
 Խելքիս պըտուաը և մըթնած աչքերս
 Ինձ այնտեղ գլորին:

ԳԼՈՒՇԵՐ

Ինձ տար հենց քո մօտ:

ԵՎԳԵՐ

Տուէք ձեր ձեռքն . . . ահա մի քայլէք հեռու
 Առուր գահավէժից: Ենթալուսնեայում
 Բոլոր եղածներն ել եթէ ինձ տան՝
 Չեմ ցաթկի տեղումս:

ԳԼՈՒՇԵՐ

Թողլ ինձ, բարեկամ:

Մի քսակ էլ ահա. մէկ ագամանդ կայ

Մէջն, որ աղքատին ընդունելութեանն
Երժան է. թող այն օրհնեն աստուածներն
Նւ դիցուհիներն քեզ համար. իսկ այժմ
Հեռացիր ասկից. «մաս բարով» ասա.
Լըսելի արա ինձ գընալզ:

ԵՒԳԻՒՐ

Բարի

Տէր, մընաք բարով: (Աւանալ է կընթառած):

ԳԼՈՒՍԻՇ

Շատ շնորհակալ եմ:

ԵՒԳԻՒՐ (Եւանչին):

Սյապէս խաղում եմ յուսահատութեան
Հետը, որպէս զի բըժքիկեմ այն:

ԳԼՈՒՍԻՇ

Ուզ

Հըզօր աստուածներ, բաժանվում եմ և
Երկրից և թողնում եմ համբերութեամբ
Վարշարա, ձեր աչքին առջև: Եթէ ևս
Կարողանայի դեռ նըրան տանել
Ըռանց արրտունջի յաւիտենական
Վարժիսիդ գէմ՝ ես կը թողնէի, որ
Պարտասած կեանքիս այս կայծակն ինքնին
Մարէր: Եթէ իմ Եղարս ապրում է՝
Օրհնեցէք նըրան: (Երդարչին) Երդ, իմ բարեկամ,
Մնաք բարով:

(Ասպնոռ է և ճաշճնի երկարութեամբ ընկնոռ է գետին):

ԵՒԳԻՒՐ

Գընում էք. երթաք բարով: (Եւանչին):

Բայց ևս չքիտեմ, երև կայութիւնն
Մի՞ գուցէ կարող է կեանքի դանձը
Գողանալ երբ կեանքն ինքնին է յանձնվում
Ըստ կողոպուտին: Թաէ լինէր այնտեղ,

Ուր նա խորհում էր՝ այժմ էլ չեմ խորհիր:
 (Բարձր, Գևառքըն, Գոխուած յայնով):
 Կենդանի՞ էք թէ մեռած, բարեկամ,
 Լըսում էք, էյ, մէկ խօսեցէք: (Առանցն) Երաւ
 Կարող էր մեռնել այսպէս: Բայց ահա
 Ուշքի է գալիս: (Գևառքըն) Ո՞վ էք դուք, պարոն:

ԳԵՂԱՍՏԵՐ

Ճեռու, և թողինձ մեռնել:

ԼԵԳԻՆԵՐ

Թու սարդի

Ոստայն, փետուր կամ օդ չըլինէիր՝
 Գահավիժելով այս բարձրութիւնից՝
 Խնչպէս ձու փըշըած կըլինէիր այժմ:
 Բայց դու շընչում ես վերադ արիւն չկայ.
 Ունիս ծանրութիւն, խօսում ես ւ'առողջ:
 Նաւի տասը կայմ չեն կարող համնել
 Բարձրութեանն, որից ուղղաձիգ կերպով
 Վար ընկար: Ապրելդ հրաշք է. մէկ խօսիր:

ԳԵՂԱՍՏԵՐ

Վար ընկայ թէ ոչ:

ԼԵԳԻՆԵՐ

Եյս Ճերմակ ժայռի

Եհեղ գագաթից. Մէկ այս բարձրութեան
 Նայիր. արտօյտն իւր սուր ձայնով այնտեղ
 Ոչ տեսնվում է ոչ լըսվում: Վեր նայիր:

ԳԵՂԱՍՏԵՐ

Աւաղ աչք չունիմ ես: Դըժբաղգութիւնն
 Երգեօք զըրկուած է այս բարիքիցն էլ
 Որ մահով իրան ոչընչացընէ:
 Մըսիթարութիւնն, որ կար աշխարհումն
 Եյն էր՝ որ կարիքն կարող էր խարել
 Մի բըռնաւորի զայրոյթն, ի դերեւ
 Ճանել նորա կամքն:

ԵՐԳԱՅԻ

Տըւէք ինձ ձեր ձեռքն:

Կանգնեցէք. այսպէս. ի՞նչպէս էք. ոտքերդ
Ըզդում էք: Եհա կանգնեցաք:

ԳԼՈՒԽԵՐ

Այս,

Մինչև իսկ շատ լաւ:

ԵՐԳԱՅԻ

Հրաշալի բան է:—

Իսյց ի՞նչ էր այն՝ որ ժայռի գաթաթում
Չեղնից հեռացաւ:

ԳԼՈՒԽԵՐ

Մի խեղճ խենթ աղքատ:

ԵՐԳԱՅԻ

Երբ կանգնած էի այստեղ՝ ինձ աչքերն

Երկու լուսնեակի նըման երեցան:

Հազար քիթ ունէր. ցցցուած եղջեւրներն

Բարձրանում էին, ինչպէս ալէկոծ

Շովը: Նա անշուշ մի սատանայ էր:—

Ուրեմն հաւատա, իմ բազգաւոր հայր,

Թօ աստուածներն, որոց փառքն է կատարել

Մարդերի կողմից անհրնար զործեր՝

Քեզ ականապէս փըրկեցին:

ԳԼՈՒԽԵՐ

Այս,

Խելքս այժմ յետ դարձաւ: Նա այսուհետե

Պիտի կըրեմ խաչս, մինչև նա ասէ,

«Ներիք է, հերիք, մեռիր»:—Եյն էակն,

Որի մասին դու խօսում ես՝ իս մարդ

Էի համարում: Նա միշտ մըրմռում էր

«Զար ոգի՞ն»: Նա ինքն ինձ այնտեղ հանեց:

ԵՐԳԱՅԻ

Համբելութեամբ տար վիճակդ:—Բայց ովէ է
Գալիս:
(լիր ներ է հրանում գարշընակ կերպով ծաղկիներով զարդարում):
Զըցընդուած հոգին չէ կարող
Եյսպիսի ձեռվ տէրին զարդարել:

ԼԻՐ

Ոչ զբամ կըտրելու համար չեն կարող
Ինձ ոչինչ անել. ե՞ս եմ թագաւորն:

ԵՐԳԱՅԻ (Եւանչին):

Ով սրտածմիկ տեսարան:

ԼԻՐ

Եյս մասում բնութիւնն արուհստից բարձր է:—Եհա
զրափի փող:—Եյս յիմարը աղեղը բռնել է, ինչպէս մի խըռ
տութլակ: Երկաթէ մի կանգուն ծռեցէք ինձ համար:—Տես
տես մուկը: Լուռ, լուռ, այս մի կտոր տապակած պանիլը
նորա բանը կըուսցնէ:—Եհա իմ երկաթէ բաղպանս. նեսում
եմ այն մի հսկայի¹⁾: Սակրերը բերէք:—Եյ, լաւ թռար, իմ
թռչուն:—Նպատակին, ուղեղ կէտին:—(**Երժարին**) Նշանա-
բանն ի՞նչ է:

ԵՐԳԱՅԻ

Ենուշ Մայորան:

ԼԻՐ

Ենցիր:

ԳԼՈՒՇԵՐ

Եյս ձայնն ինձ ծանօթ է:

ԼԻՐ

Եհա, Գոնէրիլ:—սպիտակ մօրուքով: Նէրանք ինձ շոյ-
ում էին իբրև մի շան և ասում էին, թէ մօրուքիս մեջ ըս-
պիտակ մաղեր ունիմ, յառաջ քան թէ սև մաղեր այնտեղ
լինէին: Եյս, Ոչ պատասխանել բոլոր խօսքերիւս: Եյս և Ոչ

1) Բազպան կամ ձեռնոց նետելով մնամարտի էին զրաւիրում:

միկնոյն ժամանակ՝ մի սրբութիւն չէ:—Մի օր, երբ անձրևն
ինձ թաթաւեց, հողմո ինձ դողացրեց, երբ որոտումն իմ հը-
րամանովս չդադարեց՝ այն ժամանակ գտայ, այն ժամանակ
հասկացայ, թէ ի՞նչ էին նէրանք: Աեռու, հեռու. նէրանք
խօսքի տէր մարդեր չեն: ‘Նէրանք ինձ ասում էին, թէ ես աշ-
խարհում ամեն ինչ եմ առա է այս, ես ջերմախտին էլ չեմ
դիմանում:

ԳԼՈՒԽԵՐ

Այս ձայնն ինձ ինչպէս ծանօթ է գալիս:
Թագաւորը չէ:

ԼԻՐ

Այս թագաւոր,
Ամեն մի մազըս: Մէկ որ ծուռ նայիմ
Տես, հըպատակներս ինչպէս կըդողան:
Այն մէկին բաշխում եմ ես կեանքն: Ի՞նչ էր
Նորա յանցանքը:—Անառակութիւն:
Դու մեռնելու չես. անառակութեան
Համար մեռնել—ոչ Յախսարեկն անում
Ե նոյնն և փոքրիկ ոսկեգոյն ճանճը
Շընանում է արդ իմ աչքիս առջե:
Աճիր, շընութիւն: Գլուստէրին նորա
Ազօրէն զաւակն աւել է սիրում,
Քան օրինաւոր անկողնում սերած
Դըստրերս: Միշա աճիր, անառակութիւն,
Ինձ զինուոր են պէտք:—Տեսէք զարդարուած
Այս տիկինն. նէրա դէմքից թվում է, թէ
Չիւն կայ կըրծքին մէջ: ‘Նէ ցոյց է տալիս,
Թէ անմեղութիւնն է նէ, և զըլուխն
Դարձնում է, լսելով տըռփութեան անունն:
Բայց ոչ ախոռում փակուած առոյգ ձին,
Ոչ աքիսն այնպէս մոլեալ ցանկութեամբ
Չին նետվում վերայ: Նէրանք մէջքից վար
Յուշկապարիկ են, թէւ անկից վեր
Կին. նէրանք մինչեւ մէջքն՝ աստուածներինն

Են միայն, բոլոր վարը՝ գեւերին:
 Այնտեղ է զբժոխք, այնտեղ է խաւարն,
 Այնտեղ ծըծումբի անդունդը, հըրգեհ,
 Վռացում ու փուք ու փուտ: Թիւ, թիւ, թիւ,
 Փիւհ փիւհ. մեկ ունկի մուշկ տուր, բարի գեղավաճառ,
 Ֆրեակայութիւնս մաքրեմ: Ահա փողը:

ԳԼՈՒԽԻ

Ու, թող համբուրեմ այդ ձեռքն:

ԼԻՐ

‘Եալս ինձ թող

Սըրբեմ: մեռելի հոտ է բուրում նա:

ԳԼՈՒԽԻ

Ու դու կործանուած պատկեր, սոյն կերպով
 Այս մեծ աշխարհն էլ ոչընչութեան մէջ
 Պիտի կորցըւի: (Այսն) Ինձ ձանաչում ևս:

ԼԻՐ

Աչքերդ միտքս լաւ գալիս են: Ինձ թվում է, թէ աչ-
 քով ևս անում ինձ. աշխատիր, որչափ ուզում ևս, կյըր Առւ-
 պիտօն, ևս չեմ ուզում սիրել: Այս մենամարտի հրաւերը
 կարգա. գրելը մանաւանդ լաւ դիտիր:

ԳԼՈՒԽԻ

Եթէ նոցա տեղ մի մի արեգակ
 Լինէին՝ ոչ մինն ևս չէի տեսնի:

ԼՐԳՎԵՐ (Առանցն):

Թիւ ինձ պատմէին՝ չէի հաւատար.
 Բայց իսկութիւն է սա: Պատռում է սիրտս:

ԼԻՐ (ԳԼՈՒԽԻ):

Ապրդա:

ԳԼՈՒԽԻ

Այս աչքերիս փոսերնվը:

Լ. ԵՐ

Օհու, գործդ այստեղ հասաւ։ Ոչ աչք զլիսումդ, ոչ
քսակ գրանումդ։ Աչքերդ ծանր դրութեան մէջ են. քսակդ
թեթև։ Ատկայն դու տեսնում ես, թէ ինչպէս են գնում
աշխարհիս դործերը։

Գ. Ե. ՊՈՏԵՐ

Օգալով միայն տեսնում եմ։

Լ. ԵՐ

Ի՞նչ յիմարացե՞լ ես դուն։ Եշխարհի գործերին ինչպէս
գնալը կարելի է տեսնել և առանց աչքերի։ Եկանջներովդ
նայիր։ Տես, ինչպէս այդ գատաւորը ծաղրում է հասարակ
գողին։— Լսիր—ականջիդ ասեմ։— վորսիր դոցա տեղերը և յե-
տոյ բայուլուր¹⁾ խաղալով հանիր։ որն է գողը, որն է գա-
տաւորը։ Տեսիլ ես, ինչպէս աւատառուին շունը հաջում է
մուրացկանին վերայ։

Գ. Ե. ՊՈՏԵՐ

Այս, տէր։

Լ. ԵՐ

Եւ թէ ինչպէս խեղճուկը գազանից խոյս է տալիս։—
Եյտեղ կարող էիր տեսնել նաև իշխանութեան մեծ պատկե-
րը։ Մարդ շանը հնաղանդում է, երբ սա իւր պաշտօնն է
գործ գնում։

Յետ քաշեր, լակոտ, ձեռքբրդ արիւնոտ։

Ինչու մըտրակում ես պոռնիկ աղջկին։

Քո մէջքը ծեծիր. դու ցանկութիւնից

Եյրվում ես՝ նէրան հետ նոյնը գործել,

Որի պատճառով ծեծում ես նէրան։

Տես, խաբեբային վաշխառուն կախեց։

Ծընցոտիների մէջից տեսնվում է

Փոքրիկ յանցանքը. բայց մուշտակն ամեն

1) Handy dandy—երեխաների խաղը որի մէջ երեխաները մի առարկայ ձեռքից
ձեռք տակս առնում են գաղտուկ, և մէկը նոցանից պէտք է գտնէ, թէ որի մօտն է
առարկան։

Ծան պարտակում է: Ոսկու մէջ պահիր
 Մեղքն, ւ'արդարութեան հրզօր նիզակը
 Առանց վնասելու յիտ կը նետուի. բայց
 Երբ որ նա հագուած է ցընցոտու մէջ՝
 Յարդի կըտորով թըզուկը նրբան
 Կըխոցէ: Ոչ ոք յանցանք չէ գործում,
 Ոչ ոք, ասում եմ, ոչ ոք: Ես նոցա
 Պաշտպանում եմ: Եյս դու միտքըդ պահիր,
 Օօրութիւն ունիմ ես և կըփակեմ
 Սմբաստանողի բերաննու: Սպակէ
 Սչքեր առ և իրր սուր քաղսաքագէտ
 Զեւցըրու տեսնել այնպիսի բաներ,
 Որ ամենեին չես տեսնում: Շնուտ, շնուտ,
 Շնուտ, շնուտ կօշիկներս հանիր: Խիշստ խիստ լաւ:

ԵՒԳԻՐ (Սատանյն):

Ենչպէս խառնվում է ցընդարանութիւնն
 Ճըշմարտութեան հետ: Խելք և ապշութիւն:

ԼԻՔ

Եթէ ուզում ես ողբալ իմ վեճակս՝
 Եռ աչքերս, ես քեզ լաւ եմ ձանաչում—
 Ենունդ է Գլոստէր: Պէտք է համբերես:
 Մենք լալով եկանք: Դու գիտես, որ երբ
 Ըսկըսում ենք օդ շընչել՝ լալիս ենք
 Եւ աղաղակում: Վարող քեզ խօսիմ,
 Ուշագիր եղեր ինձ:

ԳԵՂՈՍՏԻՐ

Ուշ, ցաւիւ օր:

ԼԻՔ

Հէնց որ ծընում ենք՝ ըսկըսում ենք լալ
 Որ յիմարների այս բեմը մըսոանք:—
 Եւ, խելացի միտք: Մէկ երկելի
 Ուազմագիտութիւն կըլինէր, եթէ

Հեծելաղօրի մի դունդ պայտէին
Թաղիքով: Խս այս ուզում ևմ փորձել.
Եւ երբ յարձակիմ փեսաներիս վրայ՝
Եւ ջարդի՛ր, ջարդի՛ր, ջարդի՛ր ու ջարդի՛ր:
(Մէ ՍՊԱՅ և ծԱՌԱՆԵՐ նէր էն հանում):

ՍՊԱՅ (Յոց պալէ Լէտէն):

Եշաւասիկ նա. բըռնեցէք նըրան: (Լէտէն)
Տէր, ձեր սիրելի գուստովն . . .

ԼԻԲ

Սպատելու

Ոչ ոք չէ գալիս: Խոչ, կալանաւո՞ր:
Ուղեղ որ բանդի թըշուառ խենթն ևմ ես:
Լաւ վարուեցէք հետո. Փըրկանք ձեղ կըտամ:
Մի բըժիշկ բերէք ինձ. ես ուղեղումս
Վիրաւորուած ևմ:

ՍՊԱՅ

Գուք այս ամենը

Առնենաք:

ԼԻԲ

Ոչ մի օգնութիւն չըկայ.՝
Եյսպէս միայնակ: Ո՛չ, կարող է մարդ
Հալել աղի պէս, գործածել աչքերն
Եբը երկու ցընցուղ¹⁾ և աշնան փոշին
Շնկչել:

ՍՊԱՅ

Բարի տէր:

ԼԻԲ

Ուղում ևմ մեռնել

Քաջութեամբ իբրև փեսայ: Ո՛չ ուրախ
Ուղում ևմ լինել: Օ՛չ, եկէք, եկէք:

¹⁾ Կշանակում է չափազանց շատ լաց լինել:

Թագաւոր եմ ես: Պարոններ, դուք այս
Գիտէք:

ԱՊԵՅ

Թագաւոր էք դուք և մենք ձեզ
Հընազանդում ենք:

Լ.Ի.Բ

Ուրեմն կհանք դեռ կայ
Նորա մեջ: Իսկ թէ ուզում էք նըրան
Բըրնել՝ վազելով միայն կըբռնէք.
Հը, հը, հը: (Դարձա է խախուճ. Ժառաներն չաղուճ են
Եպելից):

ԱՊԵՅ

Թըշուառ մուրացկանին մէջ
Յաւալի է այս տեսին. իսկ բոլոր
Խօսքելից վեր է թագաւորին մեջ:
Դու ունիս մի զուստր էլ, որ բնութիւնից
Հանում է նդհանուր անէծքը, որով
Նրան կաշկանդեցին այն երկուքն:

Լ.Ի.Գ.Ե.Ր (Աղային):

Ողջն,

Ու ազնիւ պարոն:

ԱՊԵՅ

Կալմը կապեցէք,

Բարեկամ, ի՞նչ էք ուզում:

Լ.Ի.Գ.Ե.Ր

Լըսել էք,

Որ շուտով կըսիւ կըբացուի:

ԱՊԵՅ

Ենշուշու.

Եյլ լաւ ծանօթ է: Ով ականջ ունի՝
Կալող է լըսել այս:

ԵՐԳԱՅԻ

Իսկ միւս բանակն—

Շնորհիք արեք ասել— մօտ է մեզ:

ՍՊԱՅ

Ո՞ստ է,

Եւ փութով դալիս: Գըլլսաւոր կըոփւն

Ռսաղասելու է ժամից ժամ:

ԵՐԳԱՅԻ

Զեղ, տէր,

Շնորհակալ եմ, իմ հարցնելիքս այս էր:

ՍՊԱՅ

Թակպէտ թագուշին այստեղ մասնաւոր

Պատճառնելով դեռ սպասում է բայց զօրքն

Դիմել է յառաջ:

ԵՐԳԱՅԻ

Շնորհակալ եմ, տէր:

(Սպան դուրս է գնում):

ԳԼՈՒԽԵՐ

Գըլթած աստուածներ, դուք առէք իմ կեանքս,

Որ էլ չար ողին կըրկին չըդրդդէ

Ինձ մեռնել յառաջ՝ քան ուզում էք դուք:

ԵՐԳԱՅԻ

Լաւ աղօթք է այդ, հայրիկ:

ԳԼՈՒԽԵՐ

Իսկ նվ էք

Դուք, իմ բարեկամ:

ԵՐԳԱՅԻ

Մի խեղճ մարդ, բաղդի

Խիստ հարուածներից նըւածուած, որ իւր

Աըրած ու զգացած վըշտերից՝ դէպի

Աարեկցութիւնը դարձել է զգայուն:

Տըւեք ինձ ձեր ձեռքն, ձեղ մի տուն տանիմ:

ԳԼՈՒԽԵՐ

Սըրտանց շնորհակալ եմ երկնի շընորհքն
Եւ օրհնութիւն տայ ձեզ փոխարէնը:
(ՍԵՆԵԿԱՊԵՏ ՈՍՎԱՌԴ ՆԵՐ Է ԱԴԱՆ-Ը):

ՈՍՎԱԾՆԴԻ:

Խոստացուած պարզեւն. ով հազուագիւտ բաղդ:
Աչքազուրկ զրուխտ ինձ բարձրացնելու
Համար է միայն: (ԳԼԱՎԱՐԵՐԻՆ) Դու, ծեր դաւածան,
Խորհրդածութիւնդ արա շուտով: Սուրն,
Որ ջընջելու է քեզ դուկա է քաշուած: (ՀԱՆՈ-Ը Ա-ՐԻՆ):

ԳԼՈՒԽԵՐ

Բարեկամական ձեռքիդ մաղթում եմ
Ես բաւական ոյժ: (ԵՐԴԱՐ ՆԵՐ Է ԱԿԵՆ-Ը):

ՈՍՎԱԾՆԴԻ:

Գեղջուկ ըստամբակ,
Դու համարձակում ես դատապարտուած
Այս դաւածանին պաշտպանել: Հեռու,
Եթէ ոչ սորա բաղդին ժանտախտը
Քեզ էլ կըկրպէի: Թողլ նորա ձեռքը:

ԵՒԳՐԵՐ

Մինչև որ մի խէլացի պատճառ չըսես՝ չեմ թողնէ:

ՈՍՎԱԾՆԴԻ:

Թողլ նրան, անպիտան, եթէ ոչ կմեռնես:

ԵՒԳՐԵՐ

ԵՇ բարի մարդ. Եստուած բանդ յաջողէ, թող մենք
ալ մեր ճամբան էրթանք: Թոէ որ տաք տաք փշելով ինձի
մեռյնել կարելի լինէր, տաս-տասնըհինդ օր առաջ մեռած
կլինէի: Աս ծերին դուն մի մօտէնար. հեռու կէցիր, քեզի
կըսեմ, թէ չէ, այ, աստուած վկայ, կիորձիմ թէ քու դրլիսա-
գօդօշտ է ամուր, թէ սա իմ կոպալս:

ՈՍՎԱԾՆԴԻ:

Առբիր, կովե կու:

ԵՐԳԱՐ

Հէ, առաջ մէմ քո առկըները թող ջարդեմ: Նըստամմէ
առաջ: Թէ կը մաշ թըրէդ և չեմ վախէնայ: (Կալում էն. Եղիազ
Պաշտոնաց պահուած յիսուս է գետին):

ԱՍՎԱԾՎ

Ինձ ըսպանեցիր դու, թըշուառական:
Ե՞ս քըսակս. թէ բաղդ ուղում ևս գըտնել՝
Թաղիր իմ գիտակս և տուր այն նամակն,
Որ դուն կը զըտնես վերաս՝ Եղմունդին,
Գլուստէրի կոմսին: Նըրան Ենդղեցյ
Շանակում փընտոիր: Ա՛հ դեռ կանուխս մահ:
(Մէտահուս է):

ԵՐԳԱՐ

Դաւ ևմ ճանաչում քեզ ըստըրկամիտ
Ըստահակ, այնքան հըլու տիրուհուդ
Յած արտաներին, որչափ չարութիւնն
Ինքնին կամենայ:

ԳԼՈՒՍՏԵՐ

Ի՞նչ է, նա մեռաւ:

ԵՐԳԱՐ

Նըստեցէք, հայրիկ, հանգչեցէք: Նայիմ
Նորա զըրպաններն: Նամակն, որ ասում
Եր՝ ինձ օգտակար կարող է լինել
Նա մեռաւ: Միայն ցաւում ևմ, որ ևս
Եզայ իւր դահիձն:—Միրելի կընիք,
Ներիր ինձ, և դուք, կարգ ու կանոններ,
Մի անարգէք ինձ: Մենք մեր թըշնամու
Դիտաւորութիւնն գիտնալու համար
Կարող ենք նորա սիրաց բաց անել.
Նամակն՝ ի հարկէ աւելի դիւրաւ: (Կարդում է նամակը):
Յիշեցէք մեր երկուստեք ուխտը: Դուք լաւ առիթ-
ճներ ունիք նրան մէջ տեղեց վելցնելու: Եթէ կամքը ձեզ

*

«Հ պակասում՝ ժամանակն և տեղը ձեզ շատ նպաստաւոր էն:—
«Եթէ նա յաղթող վերադառնայ՝ ոչինչ կատարած չենք լինի.
«Այն ժամանակ ես նորա կալանաւորն եմ, նորա անկողինն իմ
«բանդս է: Ազատեցէք ինձ սորա ատելի ջերմութիւնից, և ձեր
«աշխատանքին փոխարին՝ ստացէք նորա տեղը:

«Ձեր—ուր էր թէ ասէի կին—անձնանուէր գերին
Գոնէրիլ»:

Ո՞վ դու անշէջ հուր կանացի կամքին:
Մի դաւ իւր աղնիւ մարդի կեանքին դէմ:—
Եւ նորան եղանակս յաջորդ:—Աւազում
Այստեղ կըհօրեմ ես քեզ, ողջացութեան
Ո՞վ դու սըրբապիղծ սուրհանդակի:—Կըզայ
Ժամանակն, երբ այս գարշելի նամակն
Մահուան ենթարկուած կոմակն աչքերը
Կը բանայ: Ենշուշտ նա պակաս ուրախ
Չի լինի, երբ քո մահդ յայտնեմ նորան:

(ԷՊԳԱՐ ԴՆ-Ի ԵԼՈՒ-Ը, ՎԵԱԿ ՊԱՂԵՄ):

ԳԻՇՈՍՏԵՐ

Երքայն—խելագար. իմ խելքըս ոլքամն
Ճըկուն է ուրեմն, որ զիմազրում է
Դուռ, և ըզդում եմ ես ցաւերս: Լաւ էր
Խելագարէի: Գոնէ զգայութիւնս
Վարշտերիցս անջատ կլինէր: Խարուսիկ
Երևակայութեամբ ցաւըս կըկորցնէր
Ինքնազգայութիւնն:

(ԷՊԳԱՐ ՅԵՒ Է ԴԱՌԱՆ-Ը):

ԼՐԱՎԵՐ

Տըւէք ինձ ձեր ձեռքն:

(ՆԵՐԱ-Ը Ա-Հ-Ե-Ա-Է ՅԱՅՆԵՐ ԵՆ Ա-Հ-Ե-Ը):

Թըւրէի ձայն կարծեմ լըսվում է հեռուից.

Գնանք, ձեղ կըսանձնեմ մի բարեկամի: (ԳՆԱ-Ը ԵՆ):

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Գաղղիական բանակում մի վրան:

ԱՅԻ քնած է անկողնում: Բժիշկ, ԱՊԳԵՏ և ԱԻՐԵՑԵՔՆ նորա շուրջը
կանգնած են: ԿՈՐԴԵԼԻԱ և ԿԻՆԾ ներս են մտնում:
Տեսարանի ետևն հանդարտ նուագ:

ԿՈՐԴԵԼԻԱ:

Ո՞վ իմ բարի ԱԷԽԱՆ. ի՞նչպէս ես երբեք
Պիտ' կարողանամ հատուցում անել
Վո՞ բարութեանդ: ԱՇԽ, շատ կարճ է իմ կեանքս,
Եւ որևէ չափ փոքր է այս կէտում:

ԱՀԵՑ:

Այսպէս ձանաշուած լինեն մեծ վարձք է
Արդէն, տիրուհի. բոլոր իմ ասածն
Զոռւտ զըմնաբառութիւն է, ոչինչ աւել
Ամմ պակաս. ոչինչ:

ԿՈՐԴԵԼԻԱ:

Լաւագոյն հանդերձ
Առ, այդ հագուստը յիշեցնում է այն
Կանը ժամանակն: Ո՞, ձրգիր խընդրեմ:

ԱՀԵՑ

Վարի՛ թագուհի, դեռ ոչ Այժմէն իսկ
Յայտնըլին վընաս է իմ դիտումիս:
Խընդրում եմ իբրև վարձատութիւն, որ
Խնձ ըքանաչք, մինչև ժամանակն
Եւ ես՝ այն յարմար զըտնենք:

ԿՈՐԴԵԼԻԱ:

Թաղ այդպէս
Աինի, բարի Լորդ: (Բժշկն) Ի՞նչպէս է ալքայն:
ԲԺՄԱԿ
Ես դեռ քընում է, աղինիւ տիկին:

ԿՈՐԴԵԼԻԱ

Ո՞վ

Գլթած աստուածներ, բուժեցէք նորա
Խըռոված հոգու կոտորուածքն: Ո՞չ, դուք
Վերակազմեցէք իւր ըզգայութեան
Խանգարուած լարերն, այս տզայացած հօր:

ՈԺ.ԻՇ.Կ

Երգեօք կամենհւմէ ձեր մեծութիւնն,
Որ թագաւորին զարթեցենք: Երկար
Նա քընեց:

ԿՈՐԴԵԼԻԱ

Երէք, ինչ որ ձեր հանձարն
Եւ կամքն հրամայումեն ձեզ—հաղուած է,
Կա:

ԸՍՊԵՏ

Եյո, աիկին: Երբ նա խոր քընած
Եր՝ նոր ըզգեստներ հազցըրինք նըրան:

ՈԺ.ԻՇ.Կ

Կացէք, թագուհի, երբ զարթեցընենք
Նըրան. եւ տարակոյս չունիմ, թէ խաղաղ
Կըլինի:

ԿՈՐԴԵԼԻԱ

Շատ լաւ: (Նո-աժապան):

ՈԺ.ԻՇ.Կ

Խընդրիս մօտ եկէք: (Գալ-ճէ):
Նուազարանը բարձր ածել:

ԿՈՐԴԵԼԻԱ

Ո՞վ անդին

Հայր իմ:—Կազզուրում, տուր շրթունքներիս
Բըժըկելու ոյժ, և թող այս համբջյրս
Փարատէ սաստիկ վիշտն, որ իմ քոյրերս
Պատճառեցին քո ծերութեանդ:

ԱԼՅՈՑ

Բարի

Խանգին թագուհի:

ԿՈՄԻԵԼԻԱՆ

Եւ եթէ հայր էլ.

Չլինէիր նէրանց՝ այս ճերմակ մազերդ
 Պէտք է շարժէին նէրանց զըթութիւնն:
 Սա մի գըլուխ է անսաստ մըրթիկին
 Ենթարկուելու, խոր ու սարսափելի
 Որոտումին գէմ կըռուելու, արագ,
 Խաչուող կայծակի փոյթ և սոսկալի
 Հարուածներին տակ հըսկելու—այսպէս
 Բարակ ծածկոյթով:—Թըշնամուս շունը,
 Թէկ ինձ խածած էլ լինի—կրակիս
 Ըոջէ կըդրանէր մի տեղ այն գիշերն.
 Խսկ դուն, խեղջ իմ հայր, ըստիպուած էլի
 Օթէլ խոզերի ւաւազակների
 Հետ, փըտած յարդի մի կտորի վերայ.
 Ո՛, աւաղ, աւաղ: Հրաշք է, որ քո խելքդ
 Ու կեանքդ չը հանգան մէկտեղ:—Զարթում է,
 Խօսիցէք հետը:

ԲԺԴԸ

Եւելի լաւ է

Տիկին, դուք խօսիք:

ԿՈՄԻԵԼԻԱՆ

Խնչպէս էք ըզզում

Չեզ, հայր թագաւոր: Չեր մէծութիւնը
 Խնչպէս է:

ԼԻՐ

Դուք ինձ ցաւ էք պատճառում:

Դերեզմանից դուրս հանելով: (Առբելիայն) Դու մի
 Երջանիկ հոգի ես. խոկ ես՝ կապուած

Հըեղին անխւի՝ որից արտ' սուքներս
Առում են ինչպէս հալած արձիճ:

ԿՈՄԻԵԼԻԸ

Տէր,

Ճանաչում էք ինձ:

ԼԻՐ

Մի ողի ևս դու,

Գիտեմ երբ մեռար:

ԿՈՄԻԵԼԻԸ (Բժշկի):

Հեռու, դու հեռու:

ԲԺԿՒ

Դեռ նոր է զարթել թողէք մի վայրկեան
Ճանդիստ:

ԼԻՐ

Ես որտեղ էի, որտեղ եմ:
Յերեկի լոյս: Ես սաստիկ խարուած եմ:
Կարեկցութիւնից ես կըմեռնէի,
Եթէ ուրիշնե տեսնէի այսպէս:—
Զեմ գիտեր, թէ ի՞նչ եմ առում:—Երդուել
Զեմ կարող թէ իմ ձեռքերս են սոքա:
Տեսնե՞նք.—ըզգում եմ այս ասղի խոցելն:
Մէկ գիտնայի՛, թէ ի՞նչ վիճակում եմ:

ԿՈՄԻԵԼԻԸ

Ո՛, ինձ նայեցէք, հայր, տարածեցէք

Չեռքերդ իմ վերաս օրհնութեամբ:

(Լիր ծոռեկ է սիստ Կորտելիայի առջլ):
Ոչ տէր,

Օռունկ մի չոգիք դուք:

ԼԻՐ

Ո՛չ, մի ծաղրեր ինձ:

Թոյլ տըղայացած մի ծերուկ եմ ես,

Ութսուն տարեկան, ոչ մի ժամ՝ աւել
Ոչ էլ պակաս, և, ուղիղն ասելով,
Վախենում եմ—խելքս ամբողջ վերաս չէ:
Կարծում եմ, պէտք էր ես ճանաչեի,
Չեղ և այս մարդին (Կէնարին ցոյց բացվէ). բայց կասկա-
ծում եմ
Վասընզի այս տեղն ես չեմ ճանաչում:
Բոլոր ուշքովս էլ չեմ կարող յիշել
Եյս հանդերձն և այն՝ թէ վերջի գիշերա
Որտեղ անցուցի: Ո՛, մի ծիծաղիք
Վերաս—ինչպէս ձիշտ է, թէ մարդ եմ ես՝
‘Նոյնպէս կարծում եմ, թէ այս տիկինն իմ
Դուսարս է, Կորդեկան:

ԿԱՐԴԱՎԵԼԻ

U, *ju*, *ku* *kd*, *ku*,

۱۴۰

Երտասուբնիքը թաց են: Այս, միշտ:
Խընդում եմ, մի' լսր, և թէ թղին ունիս
Ինձ համար՝ ես այն ուզում եմ խըմել:
Գիտեմ, չես սիրում դուն ինձ, վասրնղի,
Թէ չեմ սրիալվում, քո քըյրերդ ինձ շատ
Վիրաւորեցին: Գէթ առիթ ունիս
Դու, ներանք չունին:

ԿԱՐԵՎԻՆ

Ω, ηη ωνηθ, ιξ:

14

Գաղղիայնում հմ ես:

412

Հեր սկիական

ՏԾԱԳԱՀՈՐԾՎԾԻԱՆ ԱԵՑ:

114

Wirtschaftswissenschaften

ԲԺՇՆԱ (ԱՐԴԵԼՅԱՋԻՆ):

Թագուհի, վըստահ եղէք. սուր զայրոյթն,
Ինչպէս տեսնում էք՝ բուժուած է. բայց դեռ
Վըստանգաւոր է յիշեցնել նորան
Արցըրած ժամանակն: Զեղ հետ ներս տարէք
Նըրան, և մինչև լաւ չըկազդուրի՝
Նրան մի վըրդովկէք:

ԿՈՐԴԵԼԻՇԱ (ԼՀՅԻՆ):

Նաձնում է ինձ հետ

Գալ ձեր մեծութիւնն:

ԼԻՔ

Պէտք է համբերող

Լինիս թուլութեանս: Մոռացիր, ներիր
Ինձ, իս զառամեալ ծեր եմ:

(Գառաճ էն Լիք, Արդելյան, բժիշուն և ծառանելը):

ԸՍՊԵՏ

Ուզի՞ղ է

Առնվալի դըքսի այսպէս ըսպանուիլն:

ԿԵՇԵՏ

Ծողութիւն ձիշտ, պարոն:

ԸՍՊԵՏ

Եւր զօրքին

Ո՞վ է առաջնորդ:

ԿԵՇԵՏ

Ինչպէս ասում են,

Սպօրէն որդին Գլուխէրի:

ԸՍՊԵՏ

Եղդար,

Նորա արտաքսուած որդին, ասում են,

Գերմանիա է Աէնտի կոմսին հետ:

ԿԵՇԵՏ

Լըրելն այլեւայլ են:—Ժամանակ է

Ըսւջ նայել: Արագ մօտենում է զօրքն
Թագաւորական:

ԱՍՊԵՏ

Վըծիռն, երեխ,

Ըստ արիւնահեղ պիտի լինի: Տէր,
Մընաք բարով: (Գնում է):

ԱՅՆ

Իմ հոգս ու դիտմունքս էլ

Ըստառվ կը համնեն իրանց վախճանին—

Լաւ կամ վատ— կը ուռի ելքին նայելով: (Գնում է):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ



Բրիտանական զօրքի բանակն Դուվրի մօտ:

Էֆրութի, Հիւդին, ՍՊԱՆԵՐ և ԶԻՆԱԻՐՆԵՐ, Թմբուկներով և դրօ-
շակներով ներս են մտնում:

ԵՐԱՄՈՒՆԵՐ (Մէ սպայէ):

Եմացէք, թէ դուքսն հաստատ է վըծնին

Եւ թէ նրան յետոյ ոչինչ չըստիպեց

Փոխելու դիտումն: ‘Նա փոփոխամիտ

Եւ տարակուսողէ: Իւր վերջնական

Վըծիռն մեզ բերէք: (Սպան գնում է):

ՀՈԵԳԵՐԾ

Երեխ քըլլիս

Սուրհանդակին հետ մի դըժբաղդութիւն

Պատահեց:

ԵՐԱՄՈՒՆԵՐ

Ես էլ նցյնն եմ կասկածում,

Տիկին:

ՀԱՅԱՍՏԱՆ

Այժմ, աղնիւ լորդ, ձեզ յայտնի է
Արչափ և բարիք ցանկանում եմ ձեզ:
Ասեք ինձ—սակայն առանց սրտութեան,
Զուտ ճրշմարտութիւնն—չք սիրում քոյրիս:

ՀԱՅՈՒԹԵՐ

Յարդանքի սիրով:

ՀԱՅԿԱՆ

Բայց, եղբօրս յատուկ
Դուք ցանկապատի չեք գրտել շաւիդն:

ԵՐԱՎՈՒՄ

Դուք սրիսայվում եք այս մասում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

160 wju

Վասկածանքն ունիմի թէ ամենամօտ

Յարաբերութեամբ գուք արդէն նէրան

ՀԵՐ ՄԵՐԱԳԼԻՎՈՒՄ:

19 WORKS

Վարկալ իմ պատիւս,

Տիկին, ոչ երբեք:

ՀԱՅԱՍՏԱՆ

"Եէ ինձ առելի

Էջ: Այրելի յորդ, հետն ընտանեբար

Ψή φωνηψ:

ԵՐԱՎՈՒՄ

Հանգիստ եղէք:—Եշա նէ

Եւ դուքսը, ներա ամուսինն:

(ԱԼ' ԲԱՆԻ, ԳՈՆԵՐԻՒՄ՝ և ԶԻՒՍՈՒՈՒՐՆԵՐ Ե-Ք-Հ-Ի-Ե-Ր-ՈՒ-Լ և
Դ-Յ-Շ-Ո-Ւ-Մ-Ի-Ե-Ր-ՈՒ-Լ Ն-Ե-Ր-Ա-Խ- Տ-Վ-Ա-Խ-Ե-Ր-ՈՒ-Մ-Ի-Ե-Ր-ՈՒ-Լ):

ԳՐԱՎՈՐԻ (Եւանջելիք):

1, wL 4

Մինչեւ իսկ կըռիւն կորցընեմ, քան թէ
Այս քոյրն անջատէ նըրան ինձանից:

ԱՆԴՐԵՎԻ (Հայեանին):

Ուրախ եմ, սիրուն քոյր, ձեղ տեսնելուս: (Երանեանին)
Տէր, ես լոսկիցի, թէ թագաւորն իւր
Գըստրին մօտ հասաւ, հետը միասին
Ուրիշներն էլ որ արքալնջում են մեր
Խիստ վարչութիւնից: Զեմ կարող ես քաջ
Գըտնըւիլ եթէ ազնիւ ըլենիմ:
Այս դէպքում եթէ մենք զէնք ենք վերցնում
Պատճառն այս է, որ արշաւում է մեր
Երկիրն Գաղղիա, և ոչ այս, որ նա
Ըլքային պաշտպան է և շատերին,
Որոնք, վախում եմ, բաւական արդար
Պատճառներ ունին ապրստամբելու
Մեր դէմ:

ԵԳՄԱՆԻԿ

Շատ ազնիւ խօսում էք, միւորդ:
ՀԱՅԳԵՎԱՆ

Բայց ինչու են այս խօսքերն:

ԳԱՅՆԵՔԻԼ

Միանանք

Գիմազրաւելու թրշնամուն: Տնային
Մասնաւոր վէճերն գործ այստեղ ըունին:

ԱՆԴՐԵՎԻ

Ուրեմն խորհուրդ կազմենք փորձառու
Օքրականներին հետ:

ԵԳՄԱՆԻԿ

Զեր վըրանում

Ես ձեղ կըդրանեմ շուտով:

ՀԱՅԳԵՎԱՆ

Քոյր, դուք էլ

Մեղ հետ չէք դալիս:

ԳԱՐԵՒՅԻՆ

ՈՉ

ՀԱՅՎԱՐԱԿ

Զեր գալը շատ

Յարմար կը լինի: Գրնանք, խընդուռմ հմ:

ԳԱՐԵՒՅԻՆ (Սւանդին):

Ո, այս առեղծուածն հասկանում հմ: (Բազի) Գնանք:

(Եթէ նուա պարզաբարձ էն դուրս էնել:

ԷԴԳԱՐ ներ է ճանուա, հաջուառը քոված):

ԼՅՈՎԱՐ (Սւանդին):

Եթէ դուք արժան էք զատում խօսել

Ինձ պէս խեղջին հետ՝ մի խօսք լըսեցէք:

ԸՆԴԱՐԱՒ (Հետաշարվելին):

Ես ձեզ կը հասնիմ: (Երդարին) Խօսեցէք:

(ԷԴՄՈՒՆԴ, ՔՈԵԳԱՆ, ԳՈՆԵՐԻԼ' և ՇՔԱԽՈՒՄԲԸ ժնուած էն):

ԼՅՈՎԱՐ

Յառաջ

Քան կոիւ ըսկըսէք՝ կարդացէք այս թուղթն:

(Տային է մ նաման):

Թէ յաղթէք՝ թրմիկի ձայնով կանչեցէք

Նըրան՝ որ տրւեց ձեզ այս: Ես որչափ

Գաճուճ էլ երեխին բայց ներկայացնել

Կարող եմ ասպետ մ', որ այստեղ զըրուածն

Սպացուցանէ: Խոկ եթէ յաղթուիք՝

Սռանց նորան էլ աշխարհի գործելոդ

Կվերջանան, նյունպէս և բոլոր դաւելնն: (Գնանք)

Զեզ յաջաղութիւն:

ԸՆԴԱՐԱՒ

Կայ, մինչեւ կարդամ

Կառմակն:

ԼՅՈՎԱՐ

ԵԺԻ խըստիւ արդելուած է ինձ:

Երբ գայ ժամանակն՝ թող մունիտիկն ինձ
Գոչէ, և կըրկին կերեմ: (Գնում է):

ԱԼՇԱՅԻ

Ուրեմն

Երթաս բարով: Ես կըկարդամ նամակն:
(ԷԴՍՈՒՆԴ յեռ և դաշտում):

ԵԳՄՈՒՄ

Մօս է թըշնամին: Յարգարեցէք ձեր
Օօլքն: Ահա նոցա զօրութեան ցանկն, որ
Վեծ խուզարկութեամբ է կազմած: Բայց ձեր
Կերկայութիւնը փութացնում են շատ:

ԱԼՇԱՅԻ

Պէտք է ըստ տեղւոյն և պարագային
Շարժիլ: (Գնում է):

ԵԳՄՈՒՄ

Աէրի և հաւատարմութեան
Երդում աըւի ևս երկու քոյլին էլ:
Միմեանց թըշնամի են նէրանք, ինչպէս
Թունաւորուածն և իժը: Ես որի՞ն
Առնեմ: Երկուքի՞ն, մէկի՞ն, ոչ մէկի՞ն:
Ոչ մէկիցն օգուտ ես չեմ ունենայ,
Եթէ ողջ մընան երկուքն էլ: Եթէ
Այրիին առնեմ՝ Գոճէրիլ' գաղան
Աըլքառնայ: Բայց և սէրա հետ մի գործ
Յառաջ չի գընայ, մինչդեռ կենդանի
Ե՛ իւր ամռափինն: Ոչնչ գետ կըռուի
Ատեն նորանով կօգտուիմ, իսկ յետոյ՝
Եթէ շատ ուզումէ նէ աղատուիլ
Երանից՝ թող հընար գրտնէ շուտով նրան
Մէջից բառնալու: Իսկ թէ խորհում է
Նա ինայիլ Լիրին և Աղրգելեային—
Ուող կըռուից յետոյ նոքա մէկ մէր ձեռքն

Ո՞նկնեն՝ էլ երբէք ներում չեն տեսներ:
Իմ այժմեան դիրքըս պահանջում է՝ ինձ
Պաշտպաննել և ոչ իրաւունք փընտռել: (Գնում է):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐՄԱՆ

Դաշտ երկու բանակներին մէջ:

Ճեմի ետե կռուի աղաղակ: Աիր, ԿՈԹԵԼԻԱ և ԶԻՆՈՒՈՒՆԵՐ թմրուկ-
ներով և գրօշակներով անցնում են տեսարանի մէջով: Յետոյ
դալիս են իդիար և Գլուխիր:

ԵՐԳԱՅՐ

Սյստեղ հանգչեցէք, հայր, ծառի ստուերում
Եւ աղօթեցէք, որ արդարութիւնն
Յաղթանակէ: Թէ երբէք ևս դառնամ
Չեզ մօտ՝ աւետիս կըբերեմ իմ հետ: (Գնում է):

ԳԼՈՒԽԻՐ

Սստուած օրհնէ ձեզ:
(Առողի աղաղակն, յետոյ նահանջ):
ԷՂԳԱՐ յետ է գալիս:

ԵՐԳԱՅՐ

Փախչինք, ծերունի,
Չեռքըդ տուր փախչինք: Լիր յաղթըւեցաւ
Եւ իւր դըստրին հետ միասին գերի
Ընկաւ: Չեռքըդ տուր: Գընանք:

ԳԼՈՒԽԻՐ

Պէտք չէ, բարեկամ: Այստեղ էլ փըտիլ
Կարելի է:

ԵՐԳԱՅՐ

Կ՞նչ, նորի՞ց սև մըտքել:

Պէտք է համբերել ինչ՝ աշխարհ գալուն
Նշնպէս և գնալուն: Պէտք է հասուննալ
Միայն: Գնանք:

Վ. ՌԱՍՏԵՐ

Երո, իրաւունք ունիս: (Պատմ. Եկ.):

ԵՐԲՈՐԴԻ ՏԵՍԱՐԱՆ

Վերս են մտնում իֆթղինդ թմբուկներով և դրօշակներով, ինչ-
պէս յաղթական, լիր և կարգելի իբրև գերի, վզներ, ջննիթիթներ
և այլն:

ԵՐԱՄՈՒԽԵՐ (Սպանելին):

Հեռացրէք դոցա և լաւ հըսկեցէք,
Մինչև յայտնըւի բարձրագոյն կամքը
Դատաւորների:

ԿԱՐՄԻԵԼԻ

ՄԻԱՔ առաջինը

Զենք նոցանից՝ որ լաւագոյն զիտմամբ
Զարագոյն բաղդի հանդիպեցան: Վե՛ղ
Խրզճում եմ միայն, Ճընշուած թագաւոր:
Մենակ՝ կարող եմ ես խարխուլ բաղդի
Ծանակին տանել:—Պիտի չը տեսնե՞նք
Միաք այն դըստրերին, այն քոյրերին:

Լ. Բ. Ի.

Ո. Հ.

Ո. Հ. ոչ ոչ Գրնանք բանդն. այնտեղ կերպենք
Միաք, ինչպէս երկու թըռչուն վանդակում:
Դու իմ օրհնութիւնս կըխընդրիս, և ես
Ծունկ չոգած՝ քեզնից ներում կըխընդրիմ:
Եյսպէս մենք կապրինք, կերպենք, կաղօթենք,
Եւանդութիւններ կըպատմենք, ոսկի
Թաթեռնիկներին վերայ կըխընդանք,

Խեղճ թշուառների զբոյցներն կը լըսենք
Մենք պալատական լըրերի վերայ.
Նոյա խօսակից կը լինենք և մենք,
Թէ ովէ ընկնում, ովէ բարձրանում, ովէ
Երնորհնք է գըտնում, ովէ նրանից զըրկվում,
Գործերի գաղտնին կը մեկնենք, որպէս
Թէ մենք սըրտագէտ լինեինք: Այսպէս
Շանդի պատերին մէջ մենք կը տեսնենք
Պալատի խաղերն ու խըմբերն, որոնք
Լուսնի հետ աճում են ու պակասում:

ԵՒՄՈՒՐԴ

Տարեք դրանց:

ԼԻՌ

Սիրուն զաւակս, այս տեսակ
Օռհին վրայ ինքնին աստուածները խունկ
Կը ծըխնե: Ես քեզ զըտայ. եթէ մէկն
Ուզէ մեզ բաժնել երկընքից կը բակ
Պէտք՝ առնէ և մեզ զախեցնէ նրանով,
Եբր աղուէսներին: Աչքերը սըրբիր.
Ժանտը մանաւանդ կուտէ նոյցա միսն
Ու կաշին, քան մեզ նոքա կը ստիպեն
Երտասուել: Այս, նոքա մանաւանդ
Քաղցից կը մեռնեն: Պընանք:

(Այս և Կոբելիս այսհապաններով գնում էն):

ԵՒՄՈՒՐԴ (Մէ սպայէ):

Այստեղ եկ,

Գընդապետ, լըսիր, առ այս տոմսակը, (բալեն և մուզն)

Շանդ զընա հետերն. քեզ մի աստիճան
Ես բարձրացըսի արդէն, և եթէ
Կատարես այստեղ պատուիրուածն՝ ուղեղ
Կը հարթես դէպի բարձրագոյն պատիւն:
Երկատիր քեզ որ մարդն այն է լինում,
Ինչ որ ժամանակն է, և փափուկ սիրտն

Երժան չէ սըրի: Առարկութիւն թոյլ
Զէ տալիս այս բարձր յանձնարարութիւնն.
Կամ նրան կատարիր, կամ մի ուրիշ տեղ
Բաղդ փընտոիր:

ԳՐԱԴԱՎՈՅԵՏ

Լաւ, և կը կատարեմ այն:

ԼՐԱՄՈՒՆԴԻ

Փոյթ ուրեմն. և քեզ բաղդաւոր կարծիր՝
Երբ այն կատարես: Լըսիր, ասում եմ
«Խսկցն», և այնպէս արա, ինչպէս որ
Այստեղ գըրուած է:

ԳՐԱԴԱՎՈՅԵՏ

Զեմ կարող ևս կառք

Քաշել կամ ուտել չոր վարսակ. ինչ որ
Հընար է մարդին՝ ևս կանեմ: (Պատմէ):
(Փայէր. ԱՌԱՆԻ, ԳՈՆԵՐԻԼ', ՀՐԵԳԱՆ, ՍՊԱՆԵՐ
և ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ներ են հպանաց):

ԱՆԴԱՎՈՅ

ՄԻԼ'ՕՐԴ,

Այսօր ցոյց տըւիք դուք ձեր արութիւնն,
Եւ բաղդն էլ օգնեց ձեզ: Դուք գերեցիք
Մեր յաղթանակի ախոյիաններին:
Նոցա ձեզանից պահանջում ենք, որ
Վարուինք նոցա հետ, ինչպէս երկուսակք
Թելաղդին—նոցա արժանիքն և մեր
Վագահովութիւնն:

ԼՐԱՄՈՒՆԴԻ

Լաւ համարեցի

Ես, տեր, այն թըշուառ, ծեր թագաւորին
Կալանքի մի տեղ յուղարկել արթուն
Պահպանութեան տակ: Նորա հասակը,
Մանաւանդ տիտղոսն զիւթիչ զօրութիւն

Ունին զրաւելու ռամկին սըրտերը
 Եւ մեր նիզակներն մեր դէմ դարձնելու:
 Հետն յուղարկեցի թագուհուն էլ նոյն
 Պատճառով: ‘Եռքա պատրաստ կըլինին
 Աշղը, կամ երբ ձեզ հաճոյ լինի՝ գալ
 Ձեր գատաստանին առջեւ կանգնելու:
 Քըրտինք ու արիւն այժմ հոսում են դեռ,
 Ընկերն ընկերին կողցրեց. լաւագոյն
 Պատերազմներն էլ բորբոքած սըրտով
 Ենիծում է նա՝ որ ենթարկուեցաւ
 ‘Եոցա հարուածին: Կորդելիայի
 Եւ հօր գատաստանն աւելի յարմար
 Տեղ են պահանջում:

Ա. Բ. Ա. Ե.

‘Եերեցէք ինձ, տէր,
 Եյս պատերազմում գուք ստորագրեալ
 Էք ինձ և՛ ոչ եղայլ:

Ա. Ե. Գ. Ա. Ե.

Հենց այս պատիւն էլ
 Ուզում ենք նորան մենք տալ: Աարծեմ, դեռ
 Եյդպէս ըլխօսած՝ լաւ էր հարցնէիք
 Մեր կամքն էլ: ‘Նա մեր զօրքն հանեց կըոռուի,
 Մեր ասաիձանի և անձի պատիւն
 ‘Նա էր կըոռմ վերան, և՛ այս իշխանութիւնն
 Աարող էր նորան վըստահութիւն տալ՝
 Ձեղ կոչել եղայլ:

Գ. ՈՒ. Ե. Յ. Ի. Լ. (Հ. Ե. Գ. Ա. Ե.):

– Ծատ մի տոքանաք.

‘Երան իւր սեփական արժանիքն աւել
 Բարձրացրեց, քան ձեր պաշտպանութիւններն:

Ա. Ե. Գ. Ա. Ե.

Ինձանով զգեցած իմ իրաւունքներս՝
 ‘Նա հաւասար է նախապատուին էլ:

ԳԱՐԱՅԻԲԻՆ՝

Սմենամեծն այս կը լինէր, որ նա
Զեզ հիտ պըսակուէր:

ՀՈՒՅԱՆ

Յաճախ մարգարէ

Են ծաղրածուներն:

ԳԱՐԱՅԻԲԻՆ՝

Դադար, դադար: Աչքն,
Որ ձեզ ցցց տըւեց այս՝ փոքր ինչ շել է:

ՀՈՒՅԱՆ

Տիկին, տըկար եմ ես, ապա թէ ոչ
Զեզ լըցուած սըրտով պատասխան կտայի: (Երմանութիւն):
Օօրապետ, առ իմ զօրքերս, գերիներս,
Երկիրներս, տիրիր նոցա և իմ վրայ:
Տեղի եմ տալիս քեզ վըկայ լինի
Եշխարհ: Քեզ ընտրում եմ ինձ ամուսին
Եւ տէր:

ԳԱՐԱՅԻԲԻՆ՝

Յոյս ունիւս նըրան ըստանաբ:

ԱԼՇԻԿԻՆ (Գանեթիւն):

Մրգելք լինել քո կամքից չէ կախուած:

ԵՐԱՄՈԽԵՐ

Ոչ էլքո կամքից, լորդ:

ԱԼՇԻԿԻՆ

Ենտուն լակուտ:

ՀՈՒՅԱՆ (Երմանութիւն):

Թըլմբուկ զարնել տուր և ապացուցիր
Երաւունքդ:

ԱԼՇԻԿԻՆ

Կաց դեռ և լըսիր:—Եղմունդ,

Աալանաւորում եմ քեզ պետական
Դաւի համար, և քեզ հետ խատուտիկ
Եյս օձին (Յոց դասը Պահեթելն:— Հաւետանին)

Դոկ ձեր զիտումը, սիրուն:
Քշը, խափանում եմ ես կընիս օգտին:
Նէ այս պարոնին հետ նըշանուելէ
Ռածկապէս, և ես, նէրա ամուսինն,
Երգելում եմ ձեր նշանախօսութիւնն.
Եթէ նըշանուել ուզում էք՝ առէք
Ինձ: Եյս տիկինը խօսուած է արդէն:

ԳՅՈՒՅԹԻՆ՝

Կատակ է, ի՞նչ է այս:

ԵԼՇԱԾՎԻ (Եդունութին):

Դու զինուած ես.

Թող հընչէ թըմբուկն: Թէ մարդ գուրս ըրդայ՝
Որ ապացուցէ քո ամօթալի

Բազմաթիւ դաւերդ՝ ահա իմ գըրաւս:

(Զգուճէ նորան ի-ը յեւնոյը):

Քո սըրտիդ վերայ կապացուցանեմ—
Յառաջ քան բերանս մի բան դնեմ—թէ դու¹
Եյս ամենն ես՝ ինչ որ քեզ կոչեցի:

ՀՅՈՒՅԹԻՆ՝

Ո՞չ, հիւանդ եմ ես, հիւանդ եմ:

ԳՅՈՒՅԹԻՆ՝ (Երանյն):

Թոյնին

Զէի հաւատայ էլ ես՝ թէ հիւանդ
Զլիներ:

ԵԳՄԱԽՎԻ

Եհա իմ հակազըրաւս: (Զգուճէ ի-ը յեւնոյն):

Ով ինձ դաւաճան կոչէ՝ սըտումէ
Նա իբր ապիրատ: Թող հընչէ թըմբուկն:
Ով համարձակի՝ ես նորա կամ ձեր

Կամ հինց ամենքի վերան քաջութեամբ
Կապացուցանիմ հաւատարմութիւնս
Ու պատիւս:

ԱԼԻՎԵՆԻ

ԵՇՅ, մի մունետիկ:

ԵԴՄՈՒՆԻ

ԵՇՅ, մի

Մունետիկ. կանչէք այստեղ մունետիկն:

ԱԼԻՎԵՆԻ

Քաջութեանդ վերայ միայն յօյսըդ զիր,
Վասընզի զօրքերդ, որ իմ անունովս
Ժողովուած էին՝ արդ իմ անունովս
Դարձեալ արձակուած էն:

ՀՈՒՅՎԵՆԻ

ԵՇՅ, ես սաստիկ

Հիւանդ եմ:

(ՍՈՒՆԵՏԻԿԸ ՆԵՐ Է ՀՊԱԿ-Ը):

ԱԼԻՎԵՆԻ

Տըկար է նէ. իմ վըրանս
Տարէք նէրան: (Հույսնին պահում էն): Եկ այստեղ մու-
նետիկ,

Փողըդ հընչեցրու և բարձրը ձայնով
Եյս թուղթը կարգա:

ՍՊԱՅ

Փողը հընչեցէք: (Փող հնակ- է):

ՄՈՒՆԵՏԻԿ (Կարդում է):

«Եթէ բանակին մէջ կայ մի մարդ, համապատասխան
«դիրքով և աստիճանով, որ զէնքով կամենայ հաստատել, թէ
«Եղմունդ, անուանուած Գլուստէրի կոմսն, մի քանի անգամ
«գաւաճան է եղել՝ թող նա դուրս գայ փողի երբորդ անգամ
«հնչելուն: Եղմունդ պատրաստ է պաշտպանուելու»:

ԵՐԱՄՈՒՆԴ

ՀԱՅԻՑՔ: (Փողի առաջին հնչեան):

ՄՈՒՆԵՏԻԿ

Միւսանդամ: (Փողի երրորդ հնչեան):

ՄՈՒՆԵՏԻԿ

Միւսանդամ: (Փողի երրորդ հնչեան):

(Մէ ուրիշ քող պատրաստանում է բերե երեխայ.
որից յեղայ ներս է ճանաւմ ԵՊԱՐ, զբահանու-
րուած: Մէ ՓՈՂՔԱՐ առջևից գնում է):

ԸՆԴԵՄՆԻ

Վարցրու նորանից, թե ի՞նչ կամենում

Ենա, և ինչու համար դուրս եկաւ

Փողի կոչելուն:

ՄՈՒՆԵՏԻԿ

Ո՞վ էք դուք ի՞նչ է

Չեր անունն, ձեր զիկքն. ինչու դուրս եկաք

Եյս մարտակոչին:

ԵՐԳԱՅԻ

Գիտցիք. իմ անունս

Դաւաճանութեան թունաւոր ատամն

Աըրծոտեց, բայց ես աղնըւական եմ

Եխցիանիս չափ, որին հետ ուզում

Եմ մենամարտիլ:

ԸՆԴԵՄՆԻ

Ո՞վ է ախցիանդ:

ԵՐԳԱՅԻ

Ո՞վ կայ այս տեղում, որ Գլուստէրի կոմս

Եզմունդին յօդուտ խօսք ասէ:

ԵՐԱՄՈՒՆԴ

Նա ինքն.

Վայ պիտի ասես նորան:

ԵՐԳԱՐ

Հանիք սուրդ,

Որպէս զի եթէ իմ խօսքս ազնիւ սիրտ
 Վշիրաւորէ ձեռքդ առնէ քո վըրէժդ: (Հանուճէ սուրդ)
 Եհա իմս:—Յանուն իմ պատուիս, երդմանս
 Եւ ասպեսութեանս՝ ևս հաստատում եմ—
 Զնայելով ոյժիդ և ճարպիկութեանդ,
 Բարձրութեանըդ և առոյդ հասակիդ,
 Զընայելով քո յաղթական սըրիդ
 Եւ նորաբոլընջ բաղդիդ. չնայելով
 Քո քաջութեանդ և սըրտիդ՝—գաւաճան
 Ես գուն. ուխտադրուժ դէպ՝ քո աստուածներդ,
 Դէպ՝ եղայրդ և հայրդ. նենգաւոր դէպի
 Եյս բարձր և հըզօր իշխանն, ապիրատ
 Գագաթիդ ծայրից մինչև այն փոշին,
 Որ լիզումէ ոտքդ: Եթէ ասես Ոչ
 Եմ բազուկս, իմ սուրս, իմ բարձր արութիւնս
 Քո սըրտիդ վիրայ, որին հետ խօսում
 Եմ, կը հաստատեն՝ թէ սուտ ևս ասում:

ԵՐԳԱՐԱԿԵՐ

Պէտք էր ինձ հարցնել անունդ. բայց քո դէմքդ
 Եյնչափ գեղեցիկ, պատերազմիկ է,
 Եւ խօսուածքդ այնչափ բարեկիրթ՝ որ ևս
 Երհամարհում եմ խոհեմութեան մանր
 Ասսկածանկքները, որ ասպեսութեան
 Օրէնքով՝ յայտնեն ինձ իրաւունք էր:—
 Քո զլուխն իմ նետում գաւաճանութիւնն,
 Սըրտիդ եմ բարդում դժոխային սուտը:
 Բայց որ դեռ նոքա մօտիցդ ևն անցնում,
 Եռանց ազդելու վիրադ՝ այս իմ սուրս
 Նոցա ճանապարհ կը բանայ այնտեղ՝
 Ուր նոքա ընդ միշտ կը հանգչին:—Փողե՞ր,
 Հընչեցէք:

(Փողե՞ր: Կուլուճն: Երմանդը ընկուճն է):

ԱԼՇՅՈՒԹ

Խոհայիր, ու խնայիր նորան^{1:}

ԳՈՒՅԵՐԻՆ՝

Աս որոգայթ էր, Գլոստէր: Դուն երբէք
 Պարտաւոր չէիր, մենամարտութեան
 Օրէնքով, դուրս զալ մի անծանօթի
 Առջին: Յաղթուած չես դուն, այլ խարդախուած:

ԱԼՇՅՈՒԹ

Տիկին, ձեր բերանն բըռնեցէք, թէ ոչ
 Եյս թըղթով ևս այն կըգոցեմ: (Եղմունդին) Առ այս,
 Նըւանատ քան բոլոր մականունները,
 Կարդաքո ամօթդ: (Գննէրէլին, որ ապա-ժ է իւլւնամակը)
 Տիկին, մի պատուէք:
 Տեսնում եմ, որ դուք ճանաչում եք այս:
 (Տաղիս է նամակն Եղմունդին):

ԳՈՒՅԵՐԻՆ՝

Հէնց ճանաչեմ էլ Օրէնքներն իմն են,
 Ոչ քոնդ. Ո՞վ է ինձ դատապարտողը: (Գնն-ժ է):

ԱԼՇՅՈՒԹ

Ճիւանդ: (Եղմունդին) Դիտես այս նամակն:

ԵԳՄՈՒՄԵՐ

Մի հարցնէք,

Ինչ որ ևս դիտեմ:

ԱԼՇՅՈՒԹ (Մի աղայի):

Նէրա ետևից
 Գհայեէք, կատաղած է նէ, հըսկեցէք: (Սպան գնն-ժ է):

ԵԳՄՈՒՄԵՐ

Ինչ որ իմ վերաս ամբաստանեցիք՝

1) Մեկնեցներից ոմանք կարծում են, թէ այս խօսքն ասում է Գոնէրիւ, որովհ հետեւ Ալբանին, որ Եդմունդի դաւերը դիտէր՝ չեր կարող ինդրեւ որ նորա կեանքին ինային: Ոմանք եւ ասում են, թէ Ալբանին ուզում էր Եդմունդի առ ժամանակ ապրելն, որպէս զի նորանից պէտք եղած ցուցումներն ստանայ:

Գործել եմ, և դեռ շատ շատ աւելին:
Ժամանակն ամենն կը յայտնէ. նոքա
Ըստան ինչպէս ես: (Երգաբան) Բայց դուն, որին բաղդն
Յաղթանակ շնորհեց վերաս՝ ով ես դուն:
Եթէ ազնուական ես՝ ներում եմ քեզ:

ԵՐԳԱՅԻ

Թող ներողութիւնն երկուստեք լինի:
Յեղով քեզանից պակաս չեմ, Եզմունդ,
Եսկ եթէ աւել՝ ուրեմն և աւել.
Դուն ինձ վըշտացրիր: Եզգար է անունս.
Քո հօր որդին եմ: Կատուածներն արդար
Են, մեր մեղքերը հենց մեղ պատժելու
Գործիք են շնուռմ Խաւար, յանցաւոր
Ըսկողինն, ուր դու ճնունդ առալ՝ նըրան
Օըրկեց աչքերից:

ԵՐԳԱՅԻ

Ելդար խօսեցար:
Ենիւը դարձաւ. ես աշա այստեղ:

ԵԼՇԵՆԵՐ (Երգաբան):

Շարժուածքիցդ արդէն գուշակում էի
Քո արքայական արիւնդ: Թող մէկ քեղ
Պըրկեմ: Թող կըսկիծն պատառէ իմ սիրտս՝
Եթէ երբէք քեղ կամ հօրդ ատել եմ:

ԵՐԳԱՅԻ

Երժանապատիւ իշխան, ես զիտեմ:

ԵԼՇԵՆԵՐ

Ո՞րտեղ թագ կեցաք դուք և ի՞նչ կերպով
Խմացաք ձեր հօր վըշտերն:

ԵՐԳԱՅԻ

Հըսկելով

Եռլա վրայ, միւ՞րդ: Ես ձեղ կարծառօտ
Պատմեմ: մէկ պատմեմ, թող այնուհետև

Պատառի իմ սիրտս:—Եմ արիւնալի
 Դատավըծնից, որ մօտից հալածում
 Եր ինձ խոյս տալով—(որչափ քաղցր է կեանքն,
 Որ նախապատիւ է մեզ ցաւերից
 Ամեն ժամ մեռնեն, քան միանըւագ
 Մահը)—ևս խնդիր ցընցոտի հագայ.
 Առայ արտաքին կերպարանք, որից
 Շներն իսկ խորշում են: Եյսպէս ևս զրտայ
 Հօրու արիւնալից մատանիներով,
 Որ անգին քարեն նոր էին կորցրել:
 Նորան առաջնորդ եղայ, մուբացի
 Նորա համար և վըրկիցի նըրան
 Յուս'հատութիւնից: Երբէք, (մեծ սրիսալ),
 Ինձ ըրյայտնեցի նորան, մինչև որ
 Մօտ կէս ժամ յառաջ, զըահաւորուելիս—
 Դործի վախճանին թէպէտ մեծայօս,
 Բայց ըրինելով վըստահ՝ խընդրեցի
 Նորա օրհեռութիւնն և թափառական
 Կեանքըս ծայրէ ծայր պատմեցի նորան:
 Բայց, ախ, նորա սիրտն, արկար այս կըռուին,
 Ծայրայեղ ցաւից և խընդրութիւնից
 Աընշուած՝ պատառուեց ժրպտելով:

ԵՐԱՄԱԽԵՐ

Ը արժեց

Ինձ քո պատմութիւնն, թերևս և օդուտ
 Բերէ, բայց յառաջ տար խօսքդ: ինձ այնպէս
 Թըրում է, որ զեռ ասելիք ունիս:

ԵԼՇԵՆԻ

Եթէ ասելիքդ նոյնպէս տըխուը է
 Երոիր Նս արդէն դալուկ եմ ըգգում
 Եյսչափ լըսելովս:

ԵՐԳԱՅԻ

Եյգպէս թըրում է

Նոցա, որ վըշտից երկիւղ են կըրում։
Տայց մի ուրիշ ցաւ ածում լըրացնում
Եւ վիշն, որ արդէն զեղուած էր, և մինչ
Շայրայեղութիւն է հասցնում։—Մինչդեռ
Ես ողբում էի բարձրաձայն՝ եկաւ
Մի մարդ, որ երբեմն ինձ վատ վիճակում
Տեսնելով՝ իմ գարշ ընկերութիւնից
Խցս տըւեց. իսկ այժմ երբ նա ճանաչեց,
Ով էր տարաբաղդ այն թըշուառն՝ իսկոյն
Զօրեղ ձեռքերովն վիզը փարեցաւ,
Գոչեց բարձրաձայն, որպէս թէ ուզէր
Պատառել երկինքն. ընկաւ հօրը վըսց
Եւ պատմեց Լիրի և իւր վրայ մի դէպք
Եշնչափ ցաւալի, որպէս չէ լըսած
Երբէք մի ականջ։ Պատմելիս վըշտերն
Ենքան սաստիացան, որ կեանքին թելերն
Կըտրատիլ ըսկան։ Հէնց նոյն վայրկեանին
Երկրորդ փողն հընչեց և ևս թողի նրան
Կըռուելիս մահի դէմ։

ԱԼԻՎԵՆԻ

Տայց ով էր նա։

ԼՅՎԵՐ

Կէնտն, արտաքսուած Կէնտն, տէր իմ, որ ծըպտած
Ընկերակցում էր իրան հալածող
Երգային, նորան ծառայութիւններ
Էր անում որոնք ըստրուկին իսկ չեն
Վայել։

(Յանկաբառնին ներ է ուղանուած էլ ԱՍՊԵՏ, արէնոր դաշնը յէւր+ին)։

ԱՄՊԵՏ

Օգնեցէք, օգնեցէք, հասէք

Օգնութիւն։

ԼՅՎԵՐ

Խնչ կայ օգնելու։

ԱՆԴԵՐԻ

Խօսիր,

ԵՇ մարդ:

ԵՐԳԻԾՔ

Ի՞նչ է այդ արիւնոտ գաշցնն:

ԸՍՊԵՏ

Դեռ տաք է, ծըխում է զեռ նա: Հինգ նոր

Դուրս ելաւ նէրա սըրտից: Մեռաւ նէ:

ԱՆԴԵՐԻ

Ո՞վ, խօսիր, մարդ:

ԸՍՊԵՏ

Չեր կինը, տէր, ձեր կինն:

Եւ նէրա ձեռքով թունաւորուած է

Քցըրը. նէ ինքն այս խոստովանեցաւ:

ԵՐՄՈԽԵՐԻ

Երկուքին հետ էլ նըշանուած էի.

Եւ մէկ վայրկեանում մենք պըսակվում ենք

Երկքս էլ:

ԱՆԴԵՐԻ

Գիերն բերէք, կենդանի

Կամ մեռած: Երկնից այս դատաստանը

Սարսափեցնում է մեզ, բայց չէ շարժում

Մեր կարեկցութիւնն: (Ըստերը գեղուծ է):

(Եւս է ճիշտութ կԵՆԾ):

ԵՐԳԻԾՔ

Տէր, ահա զալիս

ԵՇ ԱԷՆՈՒ:

ԱՆԴԵՐԻ

Ո՛, նա է այս. ժամանակը

Զէ ներում անել հարկ եղած յարգանքն:

ԿԵՇԵՏ

Ես եկայ մաղթել իմ թագաւորիս

Եւ իշխաններիդ՝ յաւիտենական
Վիշեր-բարին: Նա այստեղ չ:

ԱԼ'ԲԱՌԻ

Ալքան

Մենք կարևոր բան մոռացանք: Եզմունդ,
Ուր է թագաւորն, ուր է Առգելեան:
ԳՈՆԵՐԻՒԻ և ՅՈՒԳԱՆԻ ՇԽԱՆԵՐԸ ներ չ բերու՞):
Կէնտ, տեսնում հս այս տեսարանն:

ԿԵՇԱՑ

Աւաղ,

Կոչու համար է:

ԼՐԱՄԱԽԵՐԻ

Բայց սակայն Եզմունդ

Սիրուած էր: Այս մէկն ինձ համար միւսին
Թառնաւորեց և ինքնիրան սպանեց:

ԱԼ'ԲԱՌԻ

Ռիշտ է:— Օածկեցէք ներանց դէմքերը:

ԼՐԱՄԱԽԵՐԻ

Հազիւ եմ շընցում... բնութեանս հակառակ
Ուզում եմ բարի գործ անել... շուտով
Մարդ յուղարկեցէք... — փութացէք միայն—
Ամրոցն վասրնզի իմ պատուերս Լիրի
Եւ Առգելեայի կեանքին ըսպառնում
Ե վըտանդ... շուտով էլ ժամանակն է:

ԱԼ'ԲԱՌԻ

Ապէք, ոչ վազէք:

ԼՐԱՎԱՐ

Դէպի ով, միւնորդ: (Երմանադին)

Ով է այնտեղի հըսկողն: Մի նըշան
Տուէք ներողութեան:

ԵԳՄՈԽԵՒԹ

Ղաւ իսելք է. սուրս առ,

Տուր գընդապետին:

ՇԼՇԲՇԵՒԹ

Յանուն արևիդ

Փութա: (Երժառ գնում է):

ԵԳՄՈԽԵՒԹ

Նա ինձնից և քո ամուսնից

Պատուէր ըստացաւ՝ Կորդելիային

Կախել բանդին մէջ և յայտնել թէ նէ

Յուսահատութեան պատճառով գործեց

Սնձնասպանութիւն:

ՇԼՇԲՇԵՒԹ

Թաղ աստուածները

Նոցա պահպաննեն: (Երժառնութը ցոյց բազմէ հարդերին):

Հանիկցէք սրբան

Դուրս: (Երժառնութին գունում էն):

(Իիր ներս է մանում, Ձւած ԿՈՐԴԵԼԻԱՆ յեր-
երում բանած. ԷԴԳԱՐ և ՍՊԱՆԵՐ եպելից):

ԼԻՒ

Լացէք, լացէք, լացէք, լացէք: Ո՞՛չ,

Քարից էք ամենքդ. թէ ունենայի

Ես ձեր լիզուներն, ձեր աչքեր՝ նոցա

Կըգործածէիր երկնից կամարը

Խորտակելու: Ո՞՛չ, նէ ընդ միշտ զընաց:—

Ճանաչում եմ ես, երբ մեռած է մարդ,

Երբ գեռ կենդանի: . . . Նէ իբրև երկիրն

Մեռած է: Տըւէք ինձ մի հայելի:

Երբ նէրա շունչը հայելու երեսն

Խաւարեցնէ գեռ կենդանի է նէ:

ԿԵՇԵՑ

Ամ է աշխարհի խոստացուած վախճանն:

ԵՐԳԱԲ

Աամ մի պատկերէ այն աշեղ օրին:

ԵԼՇԻՇՈՒ (Լեռն):

Մեռիր, գոյութիւնդ կորցլու մի անգամ¹⁾:

ԼԻՐ (Ասրբելքայի բերանն առջև մի վերուր է առնելով):

Շարժումէ փետուրն. կննզանի է նէ.

Սպրումէ նէ. ոհ, այս երջանկութիւնն

Վարձատրումէ ինձ բոլոր վըշտերիս

Փոխանակ, որ ես երբեք կըրել եմ:

ԿԵՇԵՏ

ՈՌԴԻՄ բարի տէր: (ՕՌՆԿԻ և ՍՌՆՎԻ):

ԼԻՐ

Հեռացիլ խնդրեմ:

ԵՐԳԱԲ (Լեռն):

Սզնիւ Աէնսն է սա, ձեր բարեկամը:

ԼԻՐ

Ենէ՛ծք ձեր վերայ, դուք, մարդասպաննե՛ր,

Դուք, դաւաճաննե՛ր: Դեռ նէրան փըրկել

Կարող էի ես:—Յաւիտեան զընաց

Եյժմ: Կորդելիա, Կորդելիա, կաց

Փոքր ինչ . . . ձա՞ , դուն ի՞նչ ասիր. . . Նէրա ձայնն

Փափուկ էր, քընքոյշ և քաղցր. կընի մօտ

Թանկագին է այս: Ես ըսպանեցի

Եյն ըստրուկն, որ քեզ իսեղդեց.

ՍՊԱՅ

Ճիշտ է այս,

Տէրեր, նա արաւ այս:

ԼԻՐ (Սպայն):

Եյնպէս չէ, մարդ:—

1) Կանակումէ. աւելի լաւ է քեզ մի անգամից մեռնել և գոյութիւնդ կորցնել,
քան թէ ապրիլ միայն նորա համար, որ վշտեր կը եմ:

Կար մի ժամանակ, երբ իմ սուր սուսերս
 Նոցա բոլըրին կըթըռցընէր: Այժմ
 Ռեր եմ ես, և այս բոլոր չարիքներն
 Արծանում են ինձ... (Աէնտին) Խընդիմ, ով էք դուք.
 Աչքերս լաւը չեն—կացէք ձեզ ասեմ...

ԿԵՇՏԸ

Թէ պարծենայ բաղդն, թէ կրկու մարդի
 Սիրել և ատել է միանգամանց
 Նոցանից մէկին տեսնում ենք այստեղ:

Լ.ԲՊ
 Աչքերս մըթնում են: Կէնտը չե՞ս:

ԿԵՇՏԸ

Ես եմ,
 Ես, ձեր ծառայն, Կէնտ: Ուր է ձեր ծառայն
 Կայիւս:

Լ.ԲՊ
 Ես մի քաջ արդայ է.—ես այս
 Կարող եմ ասել ձեզ—հինց զարնում է
 Ըռանց նայելու: Մ'ուած և փլտած
 Է նա:

ԿԵՇՏԸ

Ու անգին տէր իմ ես եմ նա... .

Լ.ԲՊ
 Հիմա կըտեսնեմ:

ԿԵՇՏԸ

Որ ձեր չարիքի
 Եւ գըժբաղդութեան ըսկըզբից ի վեր
 Հետեւում էի ձեր տըիսւր քայլին:

Լ.ԲՊ

Ռարով եկաք:

ԱԼՅՈՑ

Ոչ ոչ ես և ոչ ոք:

Եմեն ինչ այստեղ մեռած, աղխուր է:
Քո աւագ դըստրերդ անձնասպան եղան
Ի յուսահատութեան մէջ մեռան:

ԼԻՄ

ԱՌՈ,

Ես էլ կարծում եմ:

ԱԼՅՈՑ

Նա չէ հասկանում

Խօսածն, աւելորդ է, որ մենք նորան
Ներկայանում ենք:

ԼՅՈՎԵՐ

Բոլորովին զուր:

(Մէ ՍՊԱՅ ներ է ճանաւում):

ԱՊԵՅ

Տէր, Եղմունդ մեռաւ:

ԱԼՅՈՑ

Կարեոր չէ այդ:—

Գուք, ազնիւ լ'որդեր և բարեկամներ,
Լըսեցէք մեր կամքն: Ինչ որ կարող է
Եյս մեծ դըժքազդին (Լիլին շոյ բազմէ) մըխիթարել այն
Պէտք ենք կատարել: Իսկ մենք ուզում ենք
Եյս արքայական ծերունուն յանձնել
Բոլոր տէրութիւնն, մինչ կենդանի է: (Կինդին և Լուգարին)
Իսկ ձեր երկուքիդ ձեր իրաւունքներն
Վերադարձնում եմ, և յաւելուածներ,
Որոց գուք լլոիւ արժան էք: Բոլոր
Մեր բարեկամներն առաքինութեան
Վարձքը կըստանան, բոլոր թըշնամիք՝
Յանցանքի բաժանեն:—Ո՞չ, նայէք, նայէք:

*

ԼԵՐ

Խեղջ՝ գուստըրս խեղդուած^{ծ¹}): Ո՛չ ո՛չ, կեանք չըկայ:

Խնչու ապրում են մուկը, շունն և ձին,

Իսկ զուն չես շընչում: Ո՛հ, գուն էլ չես դար,

Ո՛չ երբէ՛ք, երբէ՛ք, երբէ՛ք, երբէ՛ք:—Այս

Կոճակը բացէք խընդրեմ:—Ճնորհակալ

Եմ, տէր: Տեսնում էք այս . . . ո՛հ, նայեցէք

Վերան, նայեցէ՛ք, նէրա շըրթունքնե՛րն.

Նէրան նայեցէք, նէրան նայեցէք: (Մէռնուած է):

ԼԵՐԱՐ

Դալկանում է նա: Միլորդ, միլորդ . . .

ԱՅՆ

Սկըրտ,

Կոտորուիր, խընդրեմ կոտորուիր:

ԼԵՐԱՐ (Աչքն վերայ հակած):

Տէր իմ,

Եչքերը բացէ՛ք:

ԱՅՆ

Մի տանջէք հոգին:

Ո՛հ, թողէք խաղաղ գընայ: Բարեկամ

Զէ նորան, ով որ այս դառն աշխարհի

Տանջանքին այլ ևս ուզում է նըրան

Ենթարկել:

ԼԵՐԱՐ

Ո՛հ, նա յիլաւի մեռաւ:

1) Այս խօսքն երկար վէճերի տոհիթ եղաւ. մեկսէնսրի մէջ, թէ ո՛ւմ պէսք է հասկանալ. Բնագրին մէջ է «քօօր fool»—խեղջ յիմար: Ոմանք (Ծէյնոլ'դ, Կոլբիչ Քրանսուա Հիւգօ) կարծում են, թէ խեղկատակի մասին է այն ասուած, մանաւանդ որ Կիր խեղկատակին շատ սիրում էր, ինչպէս քանիցս անզամ ցցց տուեց արդէն: Միւսներն (Սդիվէնս, Մէլին) աւելի հաւանական են կարծում, թէ Կորդելիխի մասին լինի այն. նախ որ Կիրը Կորդելիխի խեղդուած լինելն ինքնին տեսաւ. երկրորդ, որ յայտնի չէ խեղկատակի խեղդուիլը, (որ գժուար թէ պատահած էլ լինի). Երրորդ, որ Կիր այս սաստիկ յուզումին մէջ, մեռած դուստրն աչքին առջեւ ունենալով՝ հաղիւ թէ կարողանար յիշել վաղուց մոռացուած խեղկատակին. և մանաւանդ որ fool (իենթ) բառը հոմանիշ էր innocent (անմեղ) բառին հին անգղիերէնի մէջ:

ԱԼՅՈՑ

Հրաշք է, որ այսքան երկար դիմացաւ:
Ըլռնի էր ապրում նա:

ԱԼՅՈՑՆԻ

Դուրս ձբգեցէք

Դոցա:—Մեր վերայ այժմ ընդհանուր սուր
Կայ: (Այնախն և Երտարքն) Դուք, իմ հոգու բարեկամները,
Կառավարեցէք դուք այս տէրութիւնն
Եւ բըժըշկեցէք երկրի վէրքերը:

ԱԼՅՈՑ


Միւրդ, Ճանապարհ կելնեմ ևս շուտով:
Կոչում է ինձ տէրս. չեմ համարձակում
‘Սորան ասել Ոչ

ԱԼՅՈՑՆԻ

Հարկ է մեղ տըխուր

Այս ժամանակի բեռին ենթարկուել.
Ասել այն, ինչ որ ըզգում ենք, և ոչ
Ինչ որ վայել է: Աւագագոյնը
Մեր մէջ՝ ծանրագոյն վիճակ ունեցաւ:
Իսկ մենք կըստսերներս՝ երթէք չենք տեսնի
Այս քանբան, երթէք այսքան չենք ապրի:
(Յարկապարագութեան նուագ: Դուրս Են Ելն-Ծ):

ՎԵՐԱԳՐ



ԿԱՐԵՒՈՐ ՎՀԻՊԱԿՆԵՐ

- Եր. 18. 17-րդ տողից յետոյ առելցնել՝ Երկրորդ տեսարան:
Մի գահը իմաստէրի ամրոցում:
- » 19. 2-րդ տողում՝ ի՞չ ապօբինի. սողութեան ի՞նչ ապօբինի:
- » 19. Աերջին տողը (Ժամ չէ անցնում, որ անվայել
գործով) ջղեւ:
- » 39. Օանօթ. 5-րդ տողում՝ իրանց առածին. սողութեան ի-
րանց առածին:
- » 54—56, 59, 74—79. Գորնվալ' բառը սողութեան վալ'
» 89. 16-րդ տողում՝ չեմ դատում քեզ. սողութեան չեմ դա-
տում ձեզ:
- » 125. Աերքեից 2-րդ տողում՝ Գուլ լինիս. սողութեան լի-
նիս:
- » 126. 8-րդ տողում՝ Տէր, իմ կորնվալ'ի. սողութեան Տէր իմ;
կորնվալ'ի:
- » 130. 3-րդ տողում՝ նէրա հառաջանքն. սողութեան նէրա հա-
ռաջանքն:
- » 140. 10-րդ տողում՝ գաթաթում. սողութեան գաթաթում:
- » 144. 14-րդ տողում բացուխուր. սողութեան բացուխուր:

